

8857

Գ. ԽԱԺԱԿ

ՀԱՅԵՐՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԳ

(ՊՍՏԱՆՈՐԱԶԱՐԳ) -



9(47.925)
Խ-16

Հրատարակութիւն

1914

ԱՐԾԻԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ

Ե. Պոլիս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

01 SEP 2011

9 (47-925)

16-16

սԿ

Գ. ԽԱԺԱԿ

31 Aug 2007

ՀԱՅԵՐՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԳ

(ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ)

2 (1004 / 1024)



44996

Հրատարակւիւն

ԱՐՄԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ

1914

Կ. Պոլիս

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ՌԻՍՈՒՑԻԶՆԵՐՈՒՆ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

№ 180

Մանկական որոշ հասակ մը կայ. ուր երեխան չի կրնար ըմբռնել Պատմութիւն և Աշխարհագրութիւն. 8-11 տարիէն է այդ Այդ հասակին մէջ և ատկէ ալ առաջ, անոր պիտի տաք «պատմութիւններ», այսինքն հեքիաթներ, ֆաւագործութիւններ, Թո՛ղ ըլլան անոնք գերբնական, անհաւանական՝ կը բաւէ որ հետաքրքրեն, ազեւորեն մանուկին միտքն ու երեւակայութիւնը:

Այդ պատճառով, մենք բացարձակ դէմ ենք տարրական դասաւանդներէն իսկ սաներուն Պատմութիւն և Աշխարհագրութիւն աւանդելու սովորութեան: Պէտք է բազմացնել անոնց հայերէնի դասերը, որպէս զի հայ լեզուի դասատուն պատմութիւններ, աւանգաժէպեր, հէքեաթներ շատ սորվեցնէ, միեւնոյն ատեն անոնց կցելով ընական գիտութեանց պարզագոյն տարրերը: Մանուկը պէտք է սորվի նաև պատմիչ, իր գաղափարները արտայայտել թէքերանացի և թէ գրաւոր:

Պէտք է աւանդել, վերջապէս, Հայրենագիտութիւն, Աշխարհագրութեան փոխարէն. դեռահաս մանուկին ծանօթացնել իր ընագաւառը—իր Թաղը, դրացի Թաղերը, իր գաւառը, դրացի գաւառները, իր Հայրենիքը:

Տարրական Ա. և Բ. դասարանի սաներուն պայուսակը թեթև պիտի ըլլայ, փոխանակ ծանրաբեռնուելու դասագիրքերով, ինչպէս է այսօր: Տարրական կարգերու Պատմութեան և Աշխարհագրութեան դասատուն իր աւանդած առարկաներէն պիտի սորվեցնէ միայն, բայց պիտի սորվեցնէ սիրունիկ հէքեաթի և հետաքրքրաշարժ պտղատներու ձեւով:

Երրորդ տարիէն, կամ միջին Ա.էն սկսած՝ կարելի է սաներուն տալ Պատմութեան և Աշխարհագրութեան բուն դասերը: Բայց հոն ալ սկիզբները պատմութիւնը պէտք է աւանդել հեքիաթի ձեւով, աւանդութիւններով, Հայկով ու Բէլով, Արամով, Արայով և Շամբլամով, որպէս զի մանուկին ուղեղը հեղձհետէ վարժուի Պատմութեան գէպերուն, կապակցութեան և պատճառաբանութեան:

Այդ դասարանի սաները արդէն կարգաւորուելու մէջ այնքան վաթճ են որ, անոնց ձեռքը կարելի է տալ դասագիրք: Այդ իսկ պատճառով, մեր ներկայ դասագրքի կէսը - մինչև քրիստոնէութեան

(15943-68)

4 352-90

4 32560-6.4.

թիւն - գրած ենք շատ աւելի մանկական, շատ աւելի դիւրըմբռնելի ձեւով, քան երկրորդ մասը:

Այդ աստիճանական դժուարացումէն և բարդացումէն զատ, գրելու ատեն մենք միշտ աչքի առջև ենք ունեցած որ դասագիրքը ուսուցչի ձեռքն է, ինչպէս Վորէնքի ձեռք դասաւորացոյ են. ուսուցչիը կրնայ կրճատել կամ ընդարձակել դասագրքի այս կամ այն կտորը, բոլորովին վանց ընել այս կամ այն գլուխները: Անկրնայ նաև, համաձայն իր հայեցողութեան, և, մասնաւանդ, նկատողութեան առնելով իր սաներուն մտաւոր վարդացումը, աւելի առաջ և աւելի ընդարձակ ծաւալով սորվեցնել դասագրքի այս կամ այն մասը: Մէկ խօսքով, դասագիրքը երբեք չպիտի կաշկանդէ ուսուցչին ազատութիւնը. դասատուն պիտի ըլլայ անշոքազորձող կամ, գոնէ պիտի ջանայ դասագիրքը յարմարցնել իր սաներուն մտաւոր կարողութիւններուն:

Այդ իսկ պատճառով, մենք զանց ըրինք նաև՝ ամէն մէկ դասի վերջը հարցարաններ ղենլու սովորութիւնը. թող դասատուն, համաձայն իր հայեցողութեան, հարցեր ստեղծէ, կրճատելով կամ ընդլայնելով: Դասատուն պարտաւոր է իւրաքանչիւր դասին վերջաւորման, յետոյ իր պատմածը հարցերով քաղել սաներէն, անոնք թէ արդեօք անոնք հասկցած ու իւրացուցած են իր ըսածները: Անկէ ետքն է որ պիտի ստիպէ իւր մէկ ամբողջութիւն՝ պատմել դասը — մէկ երկու և տեղի սաներու: Բայց որովհետեւ 45 կամ 50 րոպէի մէջ անկարելի է ամէնուն ալ հարցնել և նոր դաս պատմել, ուրեմն՝ անհրաժեշտ է մէկ երկու հոգիի պատմել տալէ ետքը, հարցերով դիմել ամբողջ դասարանին և տեսնել թէ ամէնքն ալ գիտեն, ի՞նչ գիտեն, այն ատեն պատմելու է նոր դաս. եթէ չեն գիտեր, շարունակելու է պատմել տալ հին դասը ընդունակ աշակերտներուն, մինչև որ ամէնքն ալ սորվին:

Պատմութեան դասին մէջ — ամէն դասարաններու համար ալ — ուսուցչին առջև կայ մեծ վտանգ մը, որմէ պարտաւոր է խուսափել. — թուրքական գոց ընկրու սովորութիւնը: Սանը, վախճալով խտապահանջ ուսուցչէն, գոց կ'ընէ դասագրքի մը մէջ գրութեան, կը դառնայ ինքնուրոյնութենէ գլուխ թուրքական մը: Այն ինչ Պատմութիւնը կը պահանջէ անպատճառ ըմբռնել և ի՛ր բառերով ի՛ր լեզուով պատմել:

Տարրական երկու տարիներու մէջ, սաներն արդէն այնքան պիտի վարժուած ըլլան Հայրենագիտութեան՝ որ Հայկական Պատմութեան ուսուցչիը պիտի կրնայ անարգել տալ գէթ քանի մը աշխարհագրական անուններ, ինչպէս Մասիս կամ Արարատ, Մուշ, Վան, Երեզա կամ Երզնկա, Էջմիածին ևայլն: Ինչ կասկած որ ատոնք նախ կ'ըլլան լոկ անուններ, բայց աստիճանաբար, քարտէսի գործածութեան հետ միասին, մարմին կ'առնեն, կը դառնան սրտ տեղեր ու պատկերացումներ:

Մենք աւելորդ կը համարենք Հայոց Պատմութեան տարրական դասընթացքի մը մէջ, ղենել ինկադասական տեղեկութիւններ՝ որոնք դեռ նոր կը լուսաբանուին: Ատոնք պէտք է ուսուցանել տարրական դպրոցներու ե. և Չ. կարգերուն մէջ, այն ալ խիստ զգուշաւոր ձեւով: Պիտի առարկան թէ ինչո՞ւ սորվեցնենք Մովսէս Խորենացիի դիցաբանութիւններն ու աւանդավէպերը, երբ ապագային սաները պիտի ստիպուին հերքել այդ ամէնը. ինչո՞ւ սորվեցնել Ծովուն ու սխալը, երբ շիտակը կայ:

Կը պատահանենք. նախ դեռ ևս կապակցուած, ամբողջացած և անվիճելի գիտական Հայոց պատմութիւն մը չկայ այսօր, երկրորդ՝ եթէ ըլլայ իսկ, հին հայկական աւանդութիւնները պէտք չէ արհամարհել, ինչպէս այսօր ոչ մէկը կ'արհամարհէ Հերակլէսի ու Թեսէոսի քաջագործութիւնները, Նեսիպոս արքայի ու Անտիկոնայի, Լաօկոնի ու Արգոնաւորդներու աւանդութիւնները, Հոմերոսի դիցազոյները գութիւնները ևայլն. ոչ ոք կը մերժէ սորվեցնել, իբր սիրուն աւանդութիւն, Հոլմոսի և Հոմոսի տեղ գալէն սնանիլը, կամ սկանաինաւեան աւանդութիւնները: Հէքաթը դաստիարակիչ է մանկական հոգիին համար:

Հայրենի այդ աւանդավէպերն ու պատմութեանքները երբեք չեն խանգարեր սաներու գիտական պատմութեան ուսուցումը: Ընդհանրապէս՝ անոնք գոհացում տալով մտնան վառ երեւակայութեան, կը սիրեն պատմութիւնը, կը դրդեն անով հետաքրքրուելու:

Իսկ այդ կենդանի ու վառ հետաքրքրութիւնը սաներու ներշնչել՝ պիտի ըլլայ ուսուցչին մեծագոյն նպատակը:

1913 Մարտ

Գ. Պոլիս

Գ. ԽԱԺԱԿ

ՀԱՅԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



ԴԱՍ 1.— ՀԱՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Բոլոր Հայերը միասին կը կազմեն հալ աղբը:

Հայ ազգին բնական երկիրը կը կոչուի Հայաստան: Երկու հազար տարիէ աւելի է որ մեր նախահայրերը հաստատուեր են Հայաստանի մէջ: Անոնք հոն ունեցեր են մեծ ու պղտիկ իշխանութիւններ, երբեմն ալ բաւական ուժով թագաւորութիւններ:

Այսօր մեր հայրենի երկիրը հունի իր սեփական իշխանութիւնը. այլ կը գտնուի երեք օտար տէրութիւններու ձեռքին տակ: Այդ տէրութիւններն են Թուրքիա, Ռուսիա և Պարսկաստան: Թրքական Հայաստանը ամենէն մեծն է, ռուսականը՝ անկէ պղտիկ, իսկ ամենէն փոքր մասը կը գտնուի Պարսկաստանի ձեռքը:

Հայաստանը խիստ լեռնոտ երկիր մըն է: Ունի բազմաթիւ հովիտներ և մանր դաշտավայրեր: Ծամբաները խիստ դժուարանցանելի են: Գետերը չափ մեծ չեն, բայց խիստ արագահոս են, այնպէս որ նաւ չի բանիր անոնց վրայ: Հայաստան ունի քանի մը մանր ու խոշոր լիճեր, բայց ծով հունի:

Մեր երկիրը բոյսերով, տունկերով, ծառերով, պտուղներով հարուստ է. ունի շատ տեսակ հանքեր ու կենդանիներ: Օտար տիրապետութեան օրով անտառները կոտորուեցան:

Հայաստանի նշանաւոր քաղաքներն եղած են Անի, Վաղարշապատ, Արմաւիր, Արտաշատ, Վան, Կարին, Երեւա և այլն:

Իսկ զլիաւոր լեռներն են Մասիս և Արագած :
Գետերէն նշանաւոր են Եփրատ և Տիգրիս, Կուր և
Երասխ, ու ձորոյս :

Հայաստանի մէջ երեք մեծ լիճ կայ — Վանայ լիճ,
Սեւանայ լիճ և Ուրմիոյ լիճ : Ժողովուրդը ծով կը կո-
չէ զանոնք, որովհետեւ շատ մեծ են :


ԴՍՍ 2. — ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ

Աւանդութիւնը կ'ըսէ թէ մեր նախահայրը եղած
է Հայկ անունով հսկայ մը, խաժ ու խոշոր աչքերով,
զանգուր մազերով, արծուեքիթ, և կամար յոնքերով :
Հայկ եղած է նշանաւոր աղեղնաւոր, նետածիգ և շատ
քաջ որսորդ մը : Հօրը անունը եղած է Թորգոմ, իսկ
Թորգոմի պապը եղած է Նոյ նահապետի երրորդ որ-
դին՝ Յարեթը :

Երբ ջրհեղեղէն ետք Նոյի սերունդը խիստ կը բազ-
մանայ, մարդիկ կ'իջնեն Եփրատ և Տիգրիս գետերու
հովիտներէն դէպ ի հարաւ, աւելի տաք երկիրներ : Այդ
գետերու հովիտներուն մէջ կը գտնուի Սէնաարի դաշ-
տը, ուր մարդիկ շինած էին Բաբելոն անուն խիստ մեծ
քաղաք մը :

Բաբելոն քաղաքի և Սէնաարի դաշտի բնակիչնե-
րուն վրայ բռնակալ տէր կը դառնայ դաժան և դոռոգ
Բէլը, հսկայ որսորդ մը : Ան կը հրամայէ ամէնուն :

Հայկ չի հանդուրժեր Բէլի բռնակալութեան . կ'առ-
նէ իր կիներ, զաւակները, եղբայրները, քոյրերը,
հարսներն ու թոռները—մէկ խօսքով՝ իր ամբողջ տոհմը
և Սէնաարի դաշտէն դէպի հիւսիս կ'երթայ, Վանայ



Անիի աւերակներուն բնականուր տեսարանը (Ներքէն պատկեր մուտքը)

բճին կողմերը: Հոն կը գտնէ լեռնցի բնակիչներ և կը հնազանդեցնէ իրեն: Վանայ լիճին հիւսիսային կողմը— լեռնոտ ու ամուր տեղ մը կը հիմնէ առաջին հայ գիւղը, որ իր անունով կը կոչուի Հայկաշեն: Հոն Հայկ իր առհմին հետ միասին հանգիստ կեանք մը կ'անցնէ և



Հայկ Նախապետ

կը զբաղի իր ոչխարները արոտեցնելով, երկիրը քիչ մը մշակելով և որսորդութեամբ:

Գոռոզ ու բունաւոր Բէլը կը լսէ Հայկի անկախ ու խաղաղ կեանքը և կ'ուզէ զայն ալ իր իշխանութեան տակ առնել, բայց Հայկ կը մերժէ:

Բէլ կը ժողվէ բազմաթիւ զօրք և կը քալէ Հայկի վրայ:

Երբ Հայկ կը լսէ անոր մօտենալը, կը հաւաքէ իր առհմին բոլոր կարիճ այր մարդերը, եռանկիւնի ձևով կը շարէ իր զօրքը և կը սպասէ Բէլի յարձակումին:



Հայկի եւ Բէլի կռիւր

Բէլ, կարծելով թէ Հայկ պիտի փախչի լեռները, իր զօրքէն կը զատէ ափ մը կարիճ հսկաներ և կը խոյանայ Հայկի դէմ: Հայկի և Բէլի հսկաները իրարու կը զարնուին: Շատերը նետահար կ'իյնան: Բէլ կը խորհի ետ դառնալ, իր մեծ բանակին գլուխն անցնիլ ու նորէն գալ:

Հայկ կը նշմարէ Բէլի փախուստը, և բլուրի հակառակ կողմէն վազելով, կը կտրէ անոր ճամբան, ու

Ժով կը լարէ իր լայն աղեղը և սրածայր նետը կը հաս-
ցնէ անոր կուրծքին: Նետը կը ծակէ հակային կուրծ-
քը և դուրս կը թռչի կռնակի կողմէն, կը ցցուի փայ-
ռի մը մէջ: Արիւնթաթախ գետին կը գլորի Բէլը,
իսկ անոր զօրքը, անգլուխ մնալով, սարսափած կը
փախչի մեր երկրի լեռներէն:

Հայկ պատերազմի այդ դաշտին մէջ կը կառու-
ցանէ դաստակերտ մը և կ'անուանէ զայն Հայք, իսկ
Բէլի ինկած տեղը կը կոչէ Գերեզմանք:

Աւանդութիւնը կ'ըսէ որ Հայկի անունով մեր աղ-
քը կոչուեցաւ Հայ, իսկ մեր երկիրը՝ Հայաստան:

Հայկ նահապետի որդիներն ու թոռները բռնեցին
անոր տեղը և շարունակեցին որդիէ որդի իշխել անոր
հողերուն վրայ: Անոնք տիրեցին նաև չրջակայ դա-
ւառներուն, ընդարձակեցին իրենց երկրի սահմանները,
քաղմացուցին իրենց հպատակ ժողովուրդներուն թիւը
և խաղաղ կեանք վարեցին:

Հայ ժողովուրդը Հայկ նահապետը կը կոչէ Դիւ-
ցագն, այսինքն աստուածներու ցեղէն, անոնց ազգէն:

ԴԱՍ 3. — ԱՐԱՄ ՆԱՀԱՊԵՏ

Հայաստանի դրացի իշխանները զօրացան և կա-
մաց-կամաց տիրեցին մեր երկրի ծայրերն ինկած դա-
ւառներուն: Արեւելահիւսիսէն, Ուրմիոյ լիճի քովերէն
եկած, մեր հողի մէկ մասը զրաւած էր Մարաց Նիւֆեսր
Մասկս իշխանը, հարաւէն՝ Ասորիներու Բարշամ հզօր
իշխանը, զոր Ասորիները կը պաշտէին իբր աստուած՝
իւր ուժին պատճառով: Աս ալ զրաւած էր մեր հա-

ջաւային գաւառները: Իսկ արեւմուտքէն եկած էր Կա-
պադովկիոյ Պայապիս իշխանը, գրաւելով մեր երկ-
րին արեւմտեան մասը:

Հայաստանի այս խեղճ վիճակը մեծ ցաւ կը պատ-
ճառէր ազգասէր հայ նա-
հապետներու սրտին: Եւ
անա Հայկ Դիւցագնի ցե-
ղէն մէկը, Արամ նահա-
պետ, Հայկի թոռն թո-
ռը, որ չառ կը սիրէր իր
պապերուն և հայրերուն
թողած երկիրը, կը վճռէ
վրէժ լուծել այդ օտար
իշխաններէն, դուրս ընել
զանոնք Հայաստանէն և
քիչ մըն ալ անոնց հողե-
րէն զրաւելով, կցել մեր
երկրին:



Արամ Նահապետ

Արամ գէնքով կը ստի-
պէ բոլոր Հայ իշխանները
հպատակիլ իրեն, լսել իր ամէն մէկ խօսքը: Կը դառնայ
Հայաստանի հզօր տէրը: Ապա կը ժողվէ 50,000 քաջ
կռուողներ, անոնց ձեռքերը կուտայ աղեղ, կուպարձ-
ները կը լեցնէ նետերով, կուտայ տէգ և նիզակ, լաւ
մը կը վարժեցնէ իր զօրքը, և կը յարձակի Նիւֆեսր
իշխանին վրայ. կը յաղթէ անոր, գերի կը բռնէ և կը
բերէ ձակաւէն կը դամէ իր Արմուիր մայրաքաղաքի
պարսպի աշտարակներէն մէկուն վրայ:

Նիւֆեսրի յաղթելէն ետք, Արամ իր զօրքով կը
քալէ Ասորիներու Բարշամ իշխանին վրայ. կը գրաւէ
անոր երկիրները: Բարշամ կը փախչի հեռուոր լեռներ
և կ'ազատի Արամի ձեռքէն:



Արամ առաջադրված կը գամէ Նիւֆեար իւխանը

Յետոյ Արամ կը վալէ կապաղովկիոյ վրայ. կը պատերազմի Պայապիս իշխանի զօրքին հետ, կը ջարդէ զանոնք, կը հալածէ ամբողջ զօրքը: Պայապիս կը փախչի Միջերկրական ծովի կղզիներէն մէկը: Արամ կը գրաւէ անոր երկիրը և կառավարիչ կը նշանակէ իր Մշակ զօրավարը: Աս ալ հոն իր անունով քաղաք մը կը շինէ, որ կը կոչուի Մշակ կամ Մաժակ (Կեսարիա):

Արամ կը հրամայէ այդ կողմերու բնակիչներուն հայերէն խօսիլ: Ո՛վ որ հայերէն չխօսէր, անոր լեզուն կտրել կուտար:

Ասորեստանի Նինոս թագաւորը, որ կը նստէր Նինուս մեծ ու հարուստ քաղաքին մէջ, լսելով Արամի

յաղթութիւններու և մեծութեան լուրը, ուզեց անոր սիրտը գրաւել: Ուստի անոր նուէր զրկեց մարգարիտէ վարսակալ մը և Արամը կոչեց իր երկրորդը, այսինքն՝ իրմէ ետքը ամէնէն մեծ իշխանը:

Արամէն առաջ օտար ժողովուրդները չէին ճանչնար մեզ: Անոնք չէին գիտեր մեր երկրին ու մեր ազգին անունը: Արամի յաղթական պատերազմներուն շնորհիւ, անոնք տեղեկութիւններ ստացան մեր մասին և Արամի անունով մեզ կոչեցին Արմէն կամ Էրմէնի, իսկ մեր երկիրը՝ Արմենիա կամ Էրմենիստան:

Արամ իր պատերազմներէն, նոր գրաւումներէն զատ, մեր երկրին մէջ նորանոր կարգեր ու կանոններ մտցուց և ցրուած հայ ժողովուրդը ամէնն ալ միացուց իր ձեռքին տակ, դարձուց մէկ ազգ:

ԴԱՍ 4. — ԱՐԱՄ ԳԵՂԵՑԻԿ

Արամին յաջորդեց իր որդին, Արա Գեղեցիկ:

Ասորեստանի Նինոս թագաւորը բարեկամ մնաց Արայի հետ ալ, ինչպէս էր Արամի հետ: Բայց չուտով մեռաւ Նինոս և իր գահը բարձրացաւ իր գեղեցիկ ու փառասէր կինը — Շամիրամ թագուհի:

Շամիրամ գրաւեց Մարաստանը և Պարսկաստանը և աչք տնկեց Հայաստանի:

Արա նահապետի գեղեցկութեան համբաւը տարածուած էր երկրէ երկիր: Շամիրամ ուզեց անպատճառ ամուսնանալ անոր հետ: Մեծ ընծաներով մարդիկ զրկեց Արայի քով, առաջարկեց դառնալ իր ամուսինը և իշխել ոչ միայն Հայաստանի, այլևս Մասրեստանի վրայ:



Բայց Արա արդէն ամուսնացած էր Նուարդ թագուհին հետ և շատ կը սիրէր իր կինը: Այդ պատճառով մերժեց Շամիրամի առաջարկը:



Շամիրամ Արայի դիակին առջև

Շամիրամ բարկացաւ: Մեծ զօրք ժողովեց և իր զաչափալայերէն ելաւ, արշաւեց Հայերու լեռնոտ երկիրը: Հասաւ Մասիս լեռան քովերը և զարնուեցաւ Արայի զօրքին հետ: Կռիւը կատաղի էր կրկու կողմէն ալ:

Շամիրամ հրամայեց իր մարդերուն՝ չսպաննել Արան, այլ ողջ բռնել ու իր քովը բերել:

Սակայն պատերազմի տաք առնել Շամիրամի զինւորներէն մէկը սպաննեց զայն:

Արայի արիւնով ներկուած դաշտը կոչուեցաւ Արասեան Դաշ: Վերջէն այդ անունով կոչուեցաւ ամբողջ նահանգը:

ԴԱՍ 5. — ՇԱՄԻՐԱՄ ԵՒ ԱՐԱՅԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Պատերազմէն ետքը Շամիրամ մարդեր ղրկեց, որոնք փնտռեցին Արայի դիակը, գտան ու բերին:

Թագուհին հրամայեց դիակը դնել բարձր տեղ մը, որպէսզի Յարալեզ աստուածները լզեն ու կենդանացնեն զայն: Բայց երբ տեսաւ որ իր կախարդութիւնը չօգնեց, և դիակն սկսաւ հոտիլ, հրամայեց ծածուկ թաղել զայն:

Երբ Հայերը լսեցին իրենց սիրելի իշխանին մահը, աստիկ բարկացան և նորէն զէնքի դիմեցին: Այն առնել Շամիրամ ճարմտածեց խտրելով հանգստացնելու գրգռուած Հայերը: Իր զօրականներէն մէկը խիստ նման էր Արա Գեղեցկին: Անոր հազցուց Արայի զգեստները, հեռուէն ցոյց տուաւ Հայերուն և ըսաւ թէ Յարալեզ աստուածները լզելով կենդանացուցին Արան:

Հայերը հաւատացին և զէնքերը վար դրին:

Արայի մահով Հայաստան ինկաւ Ասորեստանի իշխանութեան տակ: Շամիրամ մեր երկրին վրայ իշխան կարգեց Արայի որդին, Կարդուսը և անոր իրաւունք տուաւ հայ զօրք պահելու. Հայաստան պարտաւոր էր տարեկան տուրք մը վճարել Ասորեստանի:

Շամիրամի մայրաքաղաքն էր Նինուէն, յինուած Տիգրիս գետի ափը, խիստ տաք ու տափարակ տեղ մը: Երբ թագուհին տեսաւ մեր երկրի լեռները, գեղեցիկ

ու առնորակ աղբիւրները, մեր զով ու առողջարար
օդը, խիստ հաւնեցաւ ու իրեն համար շինեց սի-
րուն ամարանոց մը Վանայ ծովեզերքը: Այդ նոր քա-
ղաքը կոչուեցաւ Շամիրամակերտ (Բիւնտ կամ Վան):

Այդ առեւնները Հայերը դեռ յառ փարպետներ և
գործաւորներ չունէին տուներ, մեհեաններ ու պալատ-



Վանի բերդին երեսօային առեւելեան դուռը

ներ շինելու համար: Ուստի Շամիրամ Ասորեստանէն
ըբերել տղաւ 6,000 ճարտարապետ և 12,000 գործաւոր,
որոնք շինեցին իր փառաւոր քաղաքը և զարդարեցին
պալատներով, տաճարներով, հիւրանոցներով, բաղնիք-
ներով: Քաղաքին քովն ալ կառուցին ամուր բերդ մը՝
հսկայ ժայռերու մէջ:

ԴԱՍ 6. — ՊԱՐՈՅՐ ԹԱԳԱՒՈՐ

Հայերը շատ սարիներ մնացին Ասորեստանի իշ-
խանութեան տակ և հարկ տուին անոր: Այդ իշխանու-
թեան տակ էր նաև Մարաստանը:



Պարոյր քաղաւոր

Երբ Ասորեստան տկարացաւ պատերազմներու հե-
տեանքով, Պարոյր իշխանը, որ Արայի ցեղէն էր, խօսք
մէկ ըրաւ Մարաց Կիւսաւ թագաւորին հետ: Երկուքն

ալ որոշեցին ազատիլ Ասորեստանի բռնակալ լուծէն՝
Եւ ահա զօրք ժողվեցին և յարձակեցան Նինուէի վրայ՝
Անոնց թափառորը, Սարակոս կամ Սինշարիչքու, պա-
տերազմի ելաւ, բայց ջարդ ու փշուր եղած, փախաւ
մտաւ իր պալատը, փակուեցաւ հոն և թշնամիներու
ձեռքը չիյնալու համար՝ կրակով այրեց պալատը. ինքն
ալ այրեցաւ իր գանձերուն և կիներուն հետ մէկտեղ։

Զնջուեցաւ Ասորեստանի հզօր թագաւորութիւնը։
Պարոյր թագ զրաւ գլուխը և եղաւ Հայերու թագա-
ւոր։

Հայկէն մինչեւ Պարոյր Հայերու իշխանները կը
կոչուէին Նահապէս և ոչ թէ Թագաւոր։ Պարոյր եղաւ
մեր առաջին թագաւորը։

ԴՈՍ 7. — ՏԻԳՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Պարոյրէ ետք մենք ունեցած ենք եօթը թագա-
ւոր, որոնք մեծ գործ մը չեն կատարած։ Ասոնց վեր-
ջինն էր Երուանդ Սախաւակեաց։

Երբ Երուանդ կը մեռնի, Հայոց թագաւոր կ'ըլլաց
անոր որդին, Տիգրան Ա. Երուանդեանը։

Հին ատենուան հայ աշուղները խիստ կը գովեն
Երուանդը. «Մարմնով յաղթանդամ էր ան, զուար-
թերես, քաղցր նայուածքով, կերուխումի մէջ համեստ
էր, պահանջներու մէջ չափաւոր, իմաստուն էր և
պերճախօս։ Արդար մարդ էր և հաւատարութիւնը կը
փրէր. ոչ լաւերուն կը նախանձէր, ոչ ալ վատերը
կ'արհամարհէր. իր բոլոր հպատակներուն վրայ կը տա-
րածէր իր խնամքը»։

Ամէնէն առաջ Տիգրան կարգի բերաւ հայկական
զօրքը. ձիաւորներու թիւը շատցուց, իսկ հետեւակ-
ներու ձեռքը տուաւ սուր, տէգ (կարճ նիզակ) և նի-



Տիգրան Առաջին

զակ՝ բացի նետէն, աղեղէն և պարսատիկէն։ Իսկ ինք-
նապաշտպանութեան համար վահաններ բաժնեց զին-
ուորներուն։

Զօրքը այսպէս կանոնաւորելէ վերջ, Տիգրան իրեն
հպատակեցուց ամբողջ Հայոց երկիրը և յետոյ գնաց
դէպի Արեւմուտք. մտաւ Փոքր-Ասիա և հոն հաստատ-

ուած Յոյներն ալ իրեն հնազանդեցուց, հարկ հաստատելով անոնց վրայ:

Անոր խելացի և իմաստուն կառավարութեան և նոր տիրած հարուստ երկիրներու շնորհիւ, հայ ժողովուրդին վիճակը շատ լաւ էր: Գիւղացիները կը մշակէին իրենց հողերը և հանգիստ կ'ապրէին: Քաղաքներու բնակիչները կը զբաղէին իրենց բազմաթիւ արհեստներով և մանաւանդ վաճառականութեամբ:

Տիգրան բարեկամ և դաշնակից էր Պարսիկներու Կիւրոս թագաւորին:

Մարաց Առդահակ հզօր թագաւորը նախանձեցաւ Տիգրանի և Կիւրոսի բարեկամութեանը: Գիշեր ցորեկ կը մտածէր թէ ինչպէս զանոնք իրարմէ բաժնէ: Օր մըն ալ գէշ երազ մը տեսաւ:

Հայոց ձիւնապատ լեռներէ մէկուն գագաթը նստած կ'ըլլայ բարձրահասակ և գեղեցիկ կին մը: Այդ կինը կը ծնի երեք մեծ զուակ, երեքն ալ միեւնոյն տառն: Նորածին հսկաներէն առաջինը կը հեծնէ սուրճին վրայ և կը վազէ դէպի Արեւմուտք. երկրորդը կը նստի ինձի մը վրայ և կ'արշաւէ դէպի հիւսիս, իսկ երրորդը կը հեծնէ ամենի վիշապի մը մէջքը, կը սանձէ զայն և կը սլանայ Մարաց տէրութեան վրայ: Կը հասնի Համատան կամ Եկրատան — Առդահակի մայրաքաղաքը: Առդահակ այդ միջոցին զո՞ կը մատուցանէ եղբի իր աստուածներուն: Հերոսը կուգայ, կը զարնէ ու կը սպաննէ Առդահակը:

Այս երազին վրայ թագաւորը տեղէն կը թռի սարսափահար ու քրտնած: Գիշերանց կը կանչէ իր կախարդներն ու քուրմերը. իր երազը կը պատմէ անոնց և բացատրութիւն կը պահանջէ:

Կախարդները կը բացատրեն որ հայկական լեռներէն

Համատան եկող վտանգը Տիգրանէն է. պէտք է անոր դէմ կռիւ սկսիլ:

Առդահակ մարդ կը դրկէ Տիգրանի մօտ, կ'առաջարկէ բարեկամ և դաշնակից ըլլալ իրարու հետ. միասին կռուիլ թշնամիներու դէմ: Ու իբր նշան իրենց բարեկամութեան, իրեն կին կ'առնէ Տիգրանի քոյր Տիգրանուհին, որպէս զի քրոջ միջոցով սպաննէ կամ թունաւորէ Տիգրանը:

Սակայն Տիգրան չի խաբուիր Առդահակի ամէն հնարներէն, որովհետեւ Տիգրանուհի իր հաւատարիմ հայ ծառաներուն ձեռքով ամէն գաղանք կ'իմացնէ եղբորը:

Տիգրան բազմաթիւ զինուորներ առած, կերթայ Առդահակին դէմ, կը յաղթէ անոր և կը սպաննէ զայն, ցցելով իր նիզակը անոր կուրծքին մէջ:

Մարաց թագաւորութիւնը կործանեցաւ և անոր տեղը բռնեց Պարսիկներու մեծ թագաւորութիւնը: Տիգրան ալ բազմաթիւ գերիներ բերաւ Մարաց երկրէն և քնակեցուց Արարատ լեռան շրջակայները: Ատոնցմէ յառաջ եկաւ Մուրացան (այսինքն Մարաց) կամ Վիշապագունք կոչուած հայ իշխաններու սերունդը:

Տիգրան իմացաւ իր քրոջ սէրն ու հաւատարմութիւնը. անոր համար չիսեց, Տիգրիս գետի ափերուն վրայ, տաք ու բարեբեր դաշտի մը մէջ մեծ քաղաք մը, որ իր անունով կոչուեցաւ Տիգրանակերտ: Հոն բնակեցաւ Տիգրանուհի և ապրեցաւ իբր թագուհի մը:

ԴԱՍ 8. — ՎԱՀԱԳՆ ԵՒ ՀԻՆ ՀԱՅԵՐՈՒ ԿՐՈՆԸ

Տիգրան Ա. մեռաւ և իրեն յաջորդեց կրասեր որդին, Վահագն:

Վահագն այնքան կտրիճ, այնքան ուժեղ էր որ, այդ չրջանի Հայերը չէին հաւատար թէ ան մարդէ ծնած է: Հին աշուղներու երգերուն մէջ կը պատմուի թէ անոր ծնած ատենը երկինքն ու երկիրը բռնուած



Վահագնի ծնունդը

էին երկունքի ցաւերով. ծիրանի գոյն ծովն ալ մաս է ունեցած անոր ծնելուն մէջ. եղէգ մը սկսած է բոցավառիլ և անոր բոցերուն մէջէն դուրս է վազած Վահագն-կրակի զաւակը:

Ընդ եղեգան փող բոց եղանէր...

Վահագն թագաւոր դառնալով, վիշապներէ ազատած է մեր երկիրը, կոտորելով զանոնք: Այդ պատճառով կը կոչուի նաև Վիշապախաղ.— մէկը որ վիշապներ քաղած կամ սպաննած է:

Թէ հին Հայերը և թէ անոնց հիւսիսային դրացիները՝ Վրացիները (Կիւրճի) աստուած հռչակեցին Վահագնը, արձան կանդնեցին անոր, և պաշտեցին զայն երկար տարիներ: Հայերը անոր համար մեհեան շինեցին Տարօնի (Մուշ) Աշտիշատ քաղաքին մէջ:



Ս. Գահիս

Հին Հայերը չատ տեսուածներ ունէին: Անոնք կը շինէին քարէ, փայտէ կամ մետաղէ կուռք մը, կը դնէին տաճարի մը մէջ և իրր աստուած կը պաշտէին զայն: Ատո՛ւ համար ալ կ'ըսենք թէ Հին Հայերը կուպաշտ էին: Անոնց զլխաւոր աստուածներն էին Արևը, Լուսինը, շատ մը աստղեր: Կը պաշտէին նաև Գուրը, Խսկ աղբիւրը կը կոչէին «Աղբիւր-Ելբայր»: Ունէին

շատ մը չար ու բարի ոգիներ ինչպէս Յարաշեզներ, Բաց-
ֆեր, և այլն: Այդ ամէնու տնուներ մեր ժողովուրդը չի
տար, այլ կ'ըսէ «մեզմէ տղիկները»:

Կուռք-աստուածներէն նշանաւ որներն էին—Վանազն՝
քաջութեան աստուածը, Ոսկեմաս և Ոսկեմայր Անահի-



Կուռքեր և Բաւմեր

տը,—իմաստու թեան աստուածուհին և հայ աղգի պաշա-
պանը, գեղամի Աստղիկը—գեղեցկութեան և սիրոյ աստ-
ուածուհին, Վահագնի կինը:

ԴԱՍ 9. — ՎԱՀԱՐՇԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Տիգրանի յաջորդներէն ետքը Հայաստան ինկաւ
Պարսիկներու լուծին տակ և դարձաւ անոնց մեծ կայս-
րութեան մէկ նահանգը: Պարսիկները մեր երկիրը կը
զրկէին կուսակալ մը, որ կը կոչուէր Սասրապ և անոր
միջոցով կը կառավարէին Հայաստանը, հարկ կ'առնէին
հայ իշխաններէն:

Պարթեւները զօրացան և տիրեցին Պարսկաստանի:
Անոնց Արշակ Մեծ թագաւորը լսելով հայ իշխաններուն
խնդիրը, Հայաստանն ազատեց օտարներու ձեռքէն և
իր եղբայր Վաղարշակը նշանակեց Հայերու թագաւոր:

Հայի սերունդէն եղած բոլոր հայ նահապետները
և թագաւորները կը կոչուին Հայկազունց Տուն կամ Հայ-
կազունց Հաւստրիսն, իսկ Վաղարշակ և իր զարմէն
բոլոր թագաւորները կոչուեցան Հայ Արշակունեաց Տուն
կամ Արշակունեաց Հաւստրիսն:

Վաղարշակ անցաւ պարթեւական զօրքին գլուխը
և մտաւ Հայաստան: Հայ իշխանները ամէնքն ալ իրենց
զօրքերը ժողովեցին և միացան Վաղարշակի, որովհետեւ
իրենք հրաւիրած էին զայն:

Հայ և պարթեւ զօրքի օգնութեամբ, Վաղարշակ
յաղթեց կարգ մը գրացի թշնամի իշխաններու, որոնք
եկած տիրած էին Հայաստանի քանի մը գաւառներուն:

Արտաքին թշնամիներուն յաղթելէ ետք, Վաղար-
շակ եռանդով գործի սկսաւ և կարգ կանոն հաստատեց
երկրին մէջ. կանոնաւորեց զօրքը, նշանակեց արդար
գաւառներ, հրատարակեց արդար օրէնքներ: Թա-
գաւորը նշանակեց երկու արդարասէր իշխաններ,
որոնց պաշտօնը պիտի ըլլար միշտ իր քովը գտնուիլ

և յիշեցնել թէ այսինչ մարդը պիտի պատժես, կամ այն-
ինչը պիտի վարձատրես:

Վաղարշակ նախ և առաջ ուղեց հասկնալ թէ Հայը,
որու վրայ ինք թագաւոր եղաւ, ի՞նչ ազգ է, ո՞ւսկից



Մար - Աբաս Կասիմա Վաղարշակի առջև

է ծագեր, ի՞նչ անցեալ ունի: Այդ նպատակով նամակ
գրեց իր եղբոր, Արշակ Մեծին, տուաւ Մար-Աբաս Կա-
սիմա անուն ասորի գիտնականի մը և ղրկեց հասցէին:

Նամակին մէջ գրուած էր որ Մար-Աբասին թոյլ
տրուի մտնել հին գրադարանները, քրքրել արձանա-
գրութիւնները և անոնցմէ քաղել Հայերու պատմութիւնը:

Արշակ սիրով ընդունեց իր եղբոր ղրկած մարդը և
հրամայեց անոր առջեւ բանալ Նինուէի ասորական
մեծ գրադարանը: Մար-Աբաս հոն գտաւ աղիւսներու

վրայ գրուած պատմութիւններ, զատեց ինչ որ Հայերու
մասին կը խօսէր և բերաւ յանձնեց Վաղարշակի: Թա-
գաւորը հրամայեց այդ պատմութեան լաւ կտորները
փորագրել կուռքերու և մեհեաններու վրայ, որպէս զի
ժողովուրդը միշտ տեսնէ ու կարգայ իր նախահայրե-
րուն կատարած լաւ գործերը և օրինակ առնէ:

Հայերու ամէնէն մեծ և ամէնէն հին պատմագի-
տը, Մովսէս Խորենացին կ'ըսէ թէ իր պատմութիւնը
քաղած է այդ Մար-Աբասին բերած տեղեկութիւն-
ներէն:

ԴԱՍ 10. — ԱՐՏԱՇԼՍ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ

Վաղարշակ և իր որդին, Արշակ, իրենց բոլոր
ջանքը թափեցին Հայաստանը կարգի բերելու: Անոնք
կ'ընդունէին պարթև թագաւորներու գլխաւորութիւնը,
իրենք զիրենք անոնց երկրորդը կը համարէին և անոնց
կտրած դրամը կը գործածէին:

Սակայն այդպէս չըրաւ Արշակի որդին, Արտաշէս Ա:
Դեռ մանուկ հասակէն, ան շատ հպարտ և փառասէր
քնաւորութիւն ունէր և շատ ալ կտրիճ ու յանդուգն
թագաւոր էր: Իր պապին և հօր կրթած մեծ զօրքը
ինք աւելի մարդեց, շատցուց և պատրաստուեցաւ մեծ
պատերազմներ մղելու:

Հին պատմիչները կ'ըսեն թէ Արտաշէսի զօրքը
այնքան շատ էր որ, եթէ թագաւորը հրամայէր ամէնուն
մէկ-մէկ քար նետել, այդ քարերէն մեծ բլուր մը կը
կազմուէր, իսկ եթէ հրամայէր մէկ-մէկ նետ արձակել
ամէնքը միասին, նետերու բազմութենէն և անոնց

առուերէն գեանին վրայ արեւի լոյս չէր իյնար և մութը
կը տիրէր:

Իր այս ահագին բանակին գլուխն անցած, Արտա-
շէս քակեց Պարթևներու վրայ, յաղթեց անոնց զօր-



Մեծն Արտաշէս

այնտեղի մօտը ու խոշոր իշխաններուն, չինել տուաւ
բազմաթիւ նաւեր և անցաւ Յունաստան. գրաւեց ա-
նոնց երկիրներու մէկ մասը և կ'ուզէր մտնել Աթէնք,
բայց յոյն ու հռոմայեցի իշխանները կաշառեցին Ար-
տաշէսի զօրավարներէն մէկը, որ դաւաճանութեամբ
սպաննեց հզօր թագաւորը: Մեռնելու ատեն Արտաշէս
գոչած է.

— Աւաղ փառասց աւցաւորի... այսինքն, «մեղք
վաղանցուկ փառքերուս»:

քին, առաջին
հռչակեց Հայերու
թագաւորութիւ-
նը, իսկ անոնց
տուաւ երկրորդ
տեղը. իր անու-
նով դրամ կո-
խեց, և Հայաս-
տանը դարձաւ
հզօր ու մեծ թա-
գաւորութիւն
մը:

Պարթևն ե-
րուն յաղթելէն
ետք, Արտաշէս իր
զօրքը աւելի ևս
բազմացուց և մը-
տաւ Փոքր-Ա-
սիա, յաղթեց

ԴԱՍ 11. — ՏԻԳՐԱՆ Բ. ՄԵԾ

Արտաշէսի գահը բարձրացաւ իր երիտասարդ որ-
դին, Տիգրան Բ.:

Հայ ազգը երբեք չէ ունեցած Տիգրանի պէս մեծ
ու հզօր թագաւոր: Անոր օրով Հայաստան շատ մեծ-



Տիգրան Բ.

ցաւ, տիրելով բազմաթիւ նոր երկիրներու: Տիգրան հա-
տաւ արեւելեան մեծ կայսրերու փառքին:

Երբ Արտաշէս մեռաւ, Փոքր-Ասիոյ Յոյները իսկոյն

ոտքի ելան և ուղեցին քալել մօտակայ երկիրներու վրայ:



Տիգրան Մեծի դրամ

Տիգրան խիստ կտրիճ էր ու փառասէր, և թոյլ չտուաւ որ Յոյները շատ առաջ երթան: Իր հաւատարիմ դաշնակիցն էր Պոնտոսի Միհրդատ Եւպատոր թագաւորը, որ ունէր երկու մայրաքաղաք—Տրապիզոն և Ամասիա: Միհրդատ և Տիգրան շատ լաւ էին զտած իրար, երկուքն ալ փառասէր էին, կտրիճ և խելացի. միայն թէ Միհրդատ քիչ մը կռուարար մարդ էր:

Տիգրան Միհրդատին յանձնեց Փոքր-Ասիոյ կառավարութիւնը և Միհրդատ տիրեց զրեթէ ամբողջ Փոքր-Ասիոյ:

Ասորիքի Անտիոք մայրաքաղաքին մէջ մեծ խռովութիւններ ծագած էին: Սեւեկեան հարստութեան իշխաններն իրարու արիւն կը թափէին. ամէն մէկը կ'ուզէր որ ինք թագաւոր ըլլայ: Այդ երկար կռիւներէն զուրած, Ասորիները դիմեցին Տիգրան մեծ թագաւորին, որ զօրքով եկաւ, տիրեց ամբողջ Ասորիքի և 22 տարի

իր ձեռքը պահեց, անոնց թագն ալ միացնելով Հայոց թագին: Դարձաւ տեսակ մը մեծ կայսր:

Այդ միջոցներուն Հռոմայեցիները խիստ զօրացած և տիրած էին Եւրոպայի և Ափրիկէի երկիրներուն, աչք տնկելով Փոքր-Ասիոյ հարուստ մասերուն: Անոնք անցան Տարտանէլի նեղուցը, մտան Փոքր-Ասիա: Միհրդատ անոնց դէմ ելաւ, շատ մը պատերազմներ ունեցաւ, երբեմն յաղթեց, երբեմն ալ յաղթուեցաւ. իսկ երբ նեղը մնաց, օգնութեան կանչեց իր փեսան—Տիգրան Մեծը: Տիգրան ու Միհրդատ 30 տարի շարունակ



Միհրդատ

անվերջ պատերազմներ մղեցին Հռոմայեցիներուն դէմ: Այդ պատերազմներուն մէջ կըրթուած ու լուսաւոր Հռոմայեցիները յաղթանակներ տարին անմշակ Հայերուն և Պոնտացիներուն դէմ: Բայց երբ Հռոմայեցիները իրենց երկրին մէջ իրարու հետ կը կռուէին, Տիգրան և Միհրդատ շատ անգամ

անոնց վրայ քայեցին, Փոքր-Ասիոյ մէջ զանուած բոլոր Հռոմայեցիները կոտորեցին: Անգամ մըն ալ Տիգրան միանալով Պարթեւներու հետ, այնպէս ջարդեց հռոմայեցի զօրքը, որ անոնք փախան: Տիգրանի զօրապետ Բարգապիան Ռշտունին ինկաւ անոնց ետեւէն, հալածեց և մտաւ կրկին Անտիոք, անկէ ալ հրէական երկիրը որ Հռոմի կը պատկանէր գրաւեց Երուսաղէմը և շատ մը հրեայ զերիներ տարաւ լնակեցուց Վանի մէջ:

ԴԱՍ 12. — ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ԵՒ ԱՐՏԱՒԱՁԴ

Միհրդատ յաղթուելով Հռոմայեցիներէն, կ'ուզէր մեծ զօրք ժողովել և երթալ ուղղակի անոնց երկրին մէջ պատերազմիլ :

Բայց այդ ատեն իր Փառնակ որդին ապստամբեցաւ իրեն դէմ : Միհրդատ յուսահատեցաւ և ինքզինքը թունաւորելով մեռաւ :

Տիգրան ալ աղէկ օրեր չտեսաւ : Երկար պատերազմներէ յոգնած և արդէն ծերացած, զգաց իրտկարութիւնը, երբ իրեն դէմ եկաւ հռոմայեցի երեւելի զօրավար Պոմպէոսը :

Այդ միջոցին Տիգրանի որդին ալ ապստամբեցաւ հօրը դէմ և անցաւ թշնամիներուն կողմը. որպէսզի անոնց միջոցով թագաւոր ըլլայ Հայաստանի վրայ : Տիգրան, տեսնելով իր զուկին դաւաճանութիւնը, թշնամիին մեծ ուժը և իր ծերութիւնը, հաշտութիւն խնդրեց Պոմպէոսէն : Ան ալ ուրախ եղաւ և հաշտուե-



Պոմպէոս

ցաւ : Տիգրան անոնց տուաւ Փոքր Ասիան և Ասորիքը, իսկ իրեն պահեց միայն Հայաստանը : Պոմպէոս սքանչացաւ Հայերու մեծ թագաւորին վրայ, սաստիկ բարկացաւ անոր դաւաճան զաւկին դէմ և զայն չղթայական տարաւ Հռոմ, իրը գերի :

Ասկէ ետքը երկար չապրեցաւ Տիգրան : Հայերու գահը նստաւ իր որդին, Արտաւազդ :

Արտաւազդ թոյլ ու անհոգ թագաւոր մըն էր : Կը զբաղէր յունարէն թատերգութիւններ գրելով, թատրոն ներկայացնելով ու խնջոյքներով :

Արտաւազդ բարեկամութիւն հաստատեց Հռոմայեցիներուն հետ : Բայց երբ Հռոմայեցիները պատերազմի ելան Պարթեւներուն դէմ, Արտաւազդ գաղտնի միացաւ Պարթեւներուն և մեծ մլաս հասցուց Հռոմի զօրքին : Վերջէն ալ կովկասեան լեռնականներու միացաւ և քալեց Հռոմի պատկանող երկիրներու վրայ : Հռոմայեցիները բարկանալով, անոր դէմ զրկեցին իրենց խորամանկ զօրավարներէն Անտոնիոսը : Այս վերջինը եկաւ Հայաստան, յաղթեց Արտաւազդի զօրքին, խաբէութեամբ գերի բռնեց Հայերու թագաւորը և չղթայական զրկեց Եգիպտոսի թագուհի Կլէոպատրային, իրը ընծայ : Այնուհետեւ Հայաստանի մէկ մասը դարձաւ Հռոմայեցիներուն հարկատու :

ԴԱՍ 13. — ԱՐԳԱՐ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵՆԻԹԻՒՆԸ ՀԱՅԵՐՈՒ ՄԷՋ

Հայոց երկրի հիւսիսային մասը հարկատու եղաւ Հռոմի, իսկ հարաւային մասը կամ ՈւրՀայերը ունեցան իրենց սեփական թագաւորը: ՈւրՀայեցիներու ամէնէն նշանաւոր թագաւորն եղաւ Արգար, Արշամի որդին: Արգարի հայրը կը նստէր Մծքին քաղաքին մէջ, իսկ որդին իր աթոռը հաստատեց Եգեսիս կամ Ուրֆա քաղաքը:

Արգարի օրով Հրէաներու Բեթղէնէմ քաղաքին մէջ ծնաւ Յիսուս Քրիստոս, որուն քարոզած կրօնը տարածուեցաւ բոլոր լուսաւոր աշխարհի մէջ:

Անգամ մը երբ Արգար գացած էր Պարթեւներու երկիրը, գէշ հիւանդութենէ մը բռնուեցաւ, բորոտեցաւ: Շատ աշխատեցաւ բժշկուիլ, բայց անօգուտ:

Պատահեցաւ որ Արգար մարդ զրկէ Երուսաղէմի կողմերը, հռոմայեցի զօրավարի մը քով: Այդ մարդերը իրենց գործը տեսան և Հայաստան դառնալու առան, անցան Երուսաղէմ քաղաքէն: Հոն լսեցին Յիսուս Քրիստոսի հրաշագործութիւնները և սուրբ կեանքը: Երբ Հայաստան եկան, Արգարի պատմեցին իրենց տեսածն ու լսածը Քրիստոսի մասին:

Արգար իսկոյն նամակ մը գրեց Յիսուսի, որու մէջ կ'ըսէր. «Իուն կամ Աստուած ես, կամ Աստուծոյ որդի», ու հրաւիրեց զայն իր քաղաքը. «Լսած եմ որ Հրէաները Բեթի հետ աղէկ չեն վարուիր. եկուր իմ քաղաքս, բժշկէ զիս և հանգիստ ապրէ»:

Թագաւորն իր նամակը զրկեց Յիսուսի՝ Անանէ ա-

նուն իշխանի մը ձեռքով: Սակայն Յիսուս չեկաւ Հայերու երկիրը, այլ պատուիրեց որ իր մահէն ետք իր աշակերտները երթան, բժշկեն Արգարը և Հայերը դարձնեն դէպի լոյս հաւատքը:

Այդպէս ալ եղաւ: Յիսուսի խաչելութենէն ետք, անոր երկու աշակերտները—Թադէոս և Բարթոլոմէոս եկան Հայաստան, բժշկեցին Արգարի հիւանդութիւնը և քրիստոնեայ մկրտեցին Արգարն ու շատ մը հայ իշխաններ: Արգար ամէն կերպով աշխատեցաւ քրիստոնէութիւնը տարածել Հայաստանի մէջ. հալածելով կռապաշտութիւնը:

ԴԱՍ 14. — ԱՆԱՆՈՒՆ ԵՒ ՍԱՆԱՏՐՈՒԿ

Արգարի մահէն ետք, քրիստոնէական հաւատքը հալածանքի ենթարկուեցաւ:

Արգարի որդի Անանուրը եղաւ Եգեսիոյ թագաւոր և արգիլեց Քրիստոսի կրօնը պաշտել. նորէն բացաւ փակուած կռատունները: Իսկ Արգարի հօրաքրոջ որդին—Սանատրուկ, որ զօրքի հրամատար և վերին Հայաստանի վերակացուն էր, կռապաշտ մնացած Վանայ Արծրունի իշխաններուն օգնութեամբ թագաւոր դարձաւ իր գաւառներուն վրայ:

Սանատրուկ ալ սկսաւ սաստիկ հալածել քրիստոնեաները: Իր աղջիկը, գեղեցիկ Սանդուխտ կոյսը Թադէոս առաքեալին քարոզներով քրիստոնեայ դարձած էր: Հայրը կատուեցաւ և Շաւարշանի դաշտին մէջ նահատակել տուաւ թէ՛ Սառաքեալը և թէ՛ Սանդուխտ կոյսը:

Երբ Անանուն մեռաւ, Եդեսացիները իրենց երկրին գահը տուին Սանատրուկի, բայց մէկ պայմանով — որ չհալածէ քրիստոնեաները: Սանատրուկ խօսք տուաւ, բայց յետոյ դրժեց իր խոստումը և հալածանքը սաստկացուց անոնց դէմ:



Նախաճակուրիւն Սանդուխտ կոչսի

Այդ հալածանքները չկրցան ջնջել Քրիստոնէութիւնը մեր երկրէն: Մարդիկ վախցան և սկսան գաղտնի պաշտել Քրիստոսն ու իր կրօնը: Երկա՛ր ատեն Հայերու երկրին մէջ գաղտնի կը պաշտուէր Քրիստոնէութիւնը, կամաց կամաց տարածուելով:

ԴԱՍ 15. — ԵՐՈՒԱՆԻ Բ.

Սանատրուկի ժամանակ երեւելի էր Երուսաղիմ անուանով հայ նախարար մը:

Երուսաղիմ յաղթանգամ և շատ քաջ մարդ էր: Մօր կողմէ Արշակունիներու թագաւորական ցեղէն էր: Սանատրուկ Երուսաղիմը նշանակեց վերին Հայաստանի Կառավարիչ: Հոն Երուսաղիմը ամէնուն սիրտը գրաւեց և եղաւ բոլոր հայ իշխաններու սիրելին: Երբ Սանատրուկ մեռաւ, Երուսաղիմը բարձրացաւ թագաւորական գահը, որովհետեւ Սանատրուկի զաւակները դեռ փոքր էին: Սակայն թագաւոր ըլլալու համար պէտք էր որ Բագրատունի իշխանները թագ դնէին և թագաւոր օժէին: Իսկ Բագրատունիները չուզեցին իսկական Արշակունիները զրկել և Երուսաղիմն սալ Հայերու թագը:

Այն ատեն Երուսաղիմ կառուցեալ և հրամայեց սուրէ անցնել Սանատրուկի բոլոր գերդաստանը: Բոլորն ալ սպաննուեցան, բացի փոքր որդիէն — Արտաշէսէն: Սմբատ Բագրատունի թագադիր իշխանը առաւ Արտաշէսը և փախցուց Պարսկաստան, Պարթևներու Դարեհ Արշակունի թագաւորին պալատը: Դարեհ սիրով ընդունեց իր ազգական պատանին և պահեց իր որդիներուն հետ:

Երուսաղիմ շատ աշխատեցաւ սպաննել Արտաշէսը, բայց չյաջողեցաւ:

Յետոյ վախճալով Պարթևներէն, թողուց Եդեսիա մայրաքաղաքը և իր աթոռը տարաւ Մասիսի մօտերը — հին Արմաւիր քաղաքը: Բայց այն ալ շատ տկար, առանց պարիսպի գտնելով, ընտրեց Երասխի ափը, Արմաւիրէն քիչ մը արեւմուտք, բարձր ու ամուր տեղ

մը, և հոն հսկայ պարիսպներով քաղաք մը շինեց, կոչելով *Երուսաղէմ*։ Շինեց պղինձէ հսկայ դուռներ, գաղանի սանդուղներ, բարձր աշտարակներ ու բերդեր և հոն փոխադրեց իր աթոռը։ Անկէ քիչ մը դէպի հիւսիս, Ախուրեան գետի ափը շինեց Բաղարաւ մեծ քաղաքը՝ բաղմաթիւ մեհնաններով և բոլոր կուռքերը հոն փոխադրեց։ Բաղարանի աւերակները մինչև այսօր կը մնան, Անիէն քիչ մը դէպ ի հարաւ։

ԴԱՍ 16. — ԱՐՏԱՇԷՍ Բ.

Երուսաղէ ամէն կերպով կ'ամրացնէր իր թագաւորութիւնը, կը զրաւէր բոլոր հայ իշխաններու սիրտը, բայց միշտ կը վախնար Արտաշէսէն, որովհետև գիտէր որ զահուն իրաւունքը անորն է։

Արտաշէս ալ կը մեծնար Պարթևներու պալատին մէջ, կը մասնակցէր պատերազմներու և կը վարժուէր զէնքի գործածութեան։ Իսկ Սմբատ Բագրատունի քաջ իշխանը հերոսաբար կը կռուէր Դարեհ թագաւորին թշնամիներուն դէմ։

Երբ Արտաշէս քիչ մը մեծցաւ ու աղուոր երիտասարդ մը եղաւ, Սմբատ աղաչեց Դարեհի որ զայն իր հօրը զահը նստեցնէ։ Դարեհ բաւական զօրք յանձնեց Սմբատին ու Արտաշէսին և զրկեց Երուսաղէի վրայ։

Պարթևական զօրքը մտաւ Հայաստան։ Հայ իշխաններէն շատերը անցան իրենց իսկական թագաւորին — Արտաշէսի կողմը։ Սմբատ մէկ քանի իշխաններու մեծ պարգևներ ու պաշտօններ խոստանալով, զանոնք ալ իր կողմ քաշեց, այնպէս որ Երուսաղէ մինակը

մնաց և յաղթուեցաւ։ Պատերազմը տեղի ունեցաւ Ախուրեան գետի ափը։ Հոն Երուսաղէ սպաննուեցաւ և Սմբատ թագաւոր օծեց Արտաշէսը։

Արտաշէս եղաւ շատ խելացի և քաջ թագաւոր մը։ Դեռ նոր էր դահ բարձրացած, երբ Կովկասի լեռներէն Ալան կոչուած մեծ ու բարբարոս ժողովուրդը խուժեց Հայաստան։ Արտաշէս զօրքով զնաց անոնց վրայ, ջարդեց ու իր երկրէն դուրս հանեց։ Հայ զօր-



Մարեհիկ կը խօսի Արտաշէս Բ.ի հետ

քը հասաւ Կուր գետի աջ ափը, իսկ Ալանները փախան ձախ ափը։ Արտաշէս պատերազմի ատեն գերի բռնած էր Ալաններու թագաւորին որդին։

Ալաններու թագաւորը շատ խնդրեց Արտաշէսէն որ իր որդին վերադարձնէ, և ինք ու ժողովուրդը

այլևս չեն յարձակիր Հայաստանի վրայ: Արտաշէս մտիկ չըրաւ:

Այն ատեն եկաւ Այսններու թագաւորին գեղանի աղջիկը, աննման Սաթինիկը և գետի միւս ափէն խըզրեց որ Արտաշէս արձակէ իր եղբայրը: Արտաշէս ազատ ձգեց եղբայրը և ամուսնացաւ Սաթինիկի հետ, հոգակեց զայն Հայոց թագուհի կամ Տիկնանց Տիկին: Այնպիսի հարուստ հարսնիք մը ըրին որ, կ'ըսեն թէ՝ ոսկի ու մարգարիտ կը նետուէր ժողովուրդին:

Երբ պատերազմները վերջացան, Արտաշէս օտար երկիրներէ շատ մը գաղթականներ բերաւ և շէնցուց իր երկիրը, հողերը բաժնեց գիւղացիներուն մէջ և բոլոր հողերու սահմանները իրարմէ կտտելու համար քառանկիւն քարեր կանգնեցուց: Մեծ խնամք տարաւ և ծաղկեցուց ամէն տեսակ արհեստներ, Շինել տուաւ շատ մը մեհաններ և ուրիշ գեղեցիկ շէնքեր: Երկար ատեն թագաւորելէ ետք, Արտաշէս մեռաւ, ամբողջ ժողովուրդը լացաւ իր վրայ: Թագուն մը խիստ փառաւոր եղաւ.



Սաթինիկ

Արտաշէսի զաւաղը ոսկեղէն էր, անկողինը բենեղեայ, մարմին

վրայ փռուած վերարկուն ոսկեթել: Դուխը թագ էր դրած և առջևը՝ ոսկէ դէնքը: Դագաղին շուրջը կեցած էին որդիներն ու ազգականները: Յետոյ կուգային նախարարները, զօրապետները, պաշտօնեաները և զօրքե-



Արտաղ Բ.

րը, ամէնքն ալ զինուած: Դագաղի առջևէն փողերը կը հնչէին տխուր եղանակներ, իսկ ետեւէն կ'երթային սևեր հագած, մազերը բաց թողած սգաւոր կիներ, եղերաւայրեր, որոնք կուլային ու երգեր կ'երգէին: Յետոյ կուգար ռաւիկ ժողովուրդը:

Երբ զաւաղը կ'իջնէին գերեզման, Արտաշէսը սիրողներէն շատերը անձնասպան կ'ըլլային: Այն ատեն իր մեծ որդին—նախանձոտ Արտաւաղը կ'ըսէ.

— Դուն կ'երթաս և բոլոր աշխարհը հետդ կը տա-

նիս, ուրեմն ես աւերակներու վրայ պիտի թագաւորեմ»:

Կը պատմեն թէ երբ այս նախանձոտութիւնը կը լսէ Արտաշէս, դադարին մէջէն զլուխը կը վերցնէ ու կ'անիծէ իր չար որդին:

— Եթէ դուն Մասիս լեռը որսի երթաս, դէտրը թող քեզ բռնեն ու պահեն. հոն մնաս և այլևս լոյս աշխարհ չտեսնես»:

Ռամիկ ժողովուրդը կ'ըսէ թէ երբ Արտաւազգծնաւ, կախարդները գողցան զայն և տեղը դրին դէի ձաղը:

ԴԱՍ 17. — ԱՐՏԱԻԱԶԴԻ.

Արտաշէսի աթոռը նստաւ իր մեծ որդին, Արտաւազգ Բ. և թագաւորեց քանի մը օր միայն: Անգամ մը երբ ձի հեծած և շուները հետն առած որսի կ'երթար Մասիսի լանջերուն վրայ, խոր ձորի մը մէջ կ'իյնայ ու իր մարմինն ա'լ չգտնուիր: Ժողովուրդն իսկոյն ըստ թէ հօր անէծքը կատարուեցաւ. թէ քաջերը կամ դէտրը բռնեցին Արտաւազգը, և չլիցայակալ կը պահեն մութ այրի մը մէջ: Թագաւորին երկու հաւատարիմ շուները, որ հետը որսի էին գացած, կը կրծեն իրենց տիրոջ չլիցաները և կ'ուզեն ազատել զայն: Սակայն երբ չլիցաները կը բարակնան շուներու ատամներուն տակ, այն ատեն — կիրակի օրերը — հայ դարբինները իրենց մուրճերը կը զարնեն սալերուն և ատով նորէն կ'ամրացնեն չար թագաւորին չլիցաները: Եթէ Արտաւազգ դուրս ելլէ իր քարայրէն, պիտի կործանէ աշխարհը:

ԴԱՍ. 18. — ՎԱՂԱՐԶ ԵՒ ԽՈՍՐՈՎ Ա.

Արտաւազգի կորսուելէն ետքը, Հայաստանի գահը բարձրացան անոր եղբայրները, իսկ անոնց մահէն ետքը՝ Տիգրան Գ. — Արտաւազգի փոքր եղբոր տղան, Վաղարշ:

Վաղարշ իր գործերով քիչ մը կը նմանի իր պապին — Արտաշէս Բ.ին: Ան Բասէն դաւառին մէջ շինեց Վաղարշաւան քաղաքը (Բէօփրիւ քէօյ): Մասիս և Արագած մեծ սարերու միջև, Արարատեան դաշտի կեդրոնը, Քասախ գետին ափը կար փոքրիկ աւան մը, որ կը կոչուէր Վարդգիս աւան: Վաղարշ մեծ պարիսպներով պատեց զայն, շատ գեղեցիկ շէնքեր շինեց, քաղաքը մեծցուց և անունը դրաւ Վաղարշապատ: Մինչև այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսը կը նստի Վաղարշապատի Էջմիածին վանքին մէջ: Անկէ քիչ մը հեռու կը գտնուի Երեւան հին քաղաքը:

Վաղարշ իր աթոռը փոխադրեց Վաղարշապատ և սկսաւ զբաղիլ իր ժողովուրդի համար օգտակար գործեր կատարելով: Հաստատեց Հայոց Նոր-Տարին՝ Նաւասարդ ամսու 1ին (մեր Օգոստոսի 9ին): Այդ օրը մեծ հանդէսներ կը կատարէին կռատուններու, գիւղերու և քաղաքներու մէջ, թմբուկներ կը զարնէին, փողեր կը փչէին, ձիեր, եղջերուներ կը վաղեցնէին:

Վաղարշի օրով Կովկասի լեռներէն իջան շատ մը բարբարոս լեռնակառններ և սկսան աւերել Հայաստանի հիւսիսային մասերը, թալլել ու կողոպտել այն կողմերու Հայերը: Վաղարշ բազմաթիւ զօրքով գնաց անոնց վրայ, մեծ ջարդ տուաւ ու փախցուց մինչև Կովկասի լեռներուն միւս կողմը: Այդ կռիւներու ատեն նետ մը չպաւ և Վաղարշ մեռաւ:

Իրեն յաջորդեց որդին — Խոսրով Ա. որ զօրքով
գնաց հիւսիսային թշնամիներու վրայ և լուծեց հօրը
վրէժը:



Խոսրով Ա. կը յաղթէ հիւսիսային ազգերուն

Այնուհետեւ Խոսրով խաղաղ ապրեցաւ և Հայաս-
տան ծակեցաւ ու հարստացաւ: Խոսրով բարեկամ
մնաց ե՛ւ Պարթեւներուն, ե՛ւ Հռոմայեցիներուն. եր-
բեք չխառնուեցաւ անոնց կռիւներուն:

Այդ ատենները Պարսկաստանի մէջ մեծ փոփոխու-
թիւն մը տեղի ունեցաւ: Արտաշիր Սասանեան անուն
Պարսիկ մը ապստամբեցաւ թոյլ ու փճացած Պարթե-
թագաւորին դէմ, տապալեց զայն ու ինքը դարձաւ
Պարսկաստանի թագաւոր:

Խոսրով երբ այդ լսեց, փութաց օգնել Պարթեւա-
կան Արշակունի թագաւորին, որովհետեւ ինքն ալ Ար-

շակունի էր: Խոսրով յաղթեց Արտաշիր Սասանեանի
բանակին և մտաւ Պարսկաստան: Հոն շինեց քաղաք մը
և անունը դրաւ «Դա ի վրէժ Արտաշիր»ի, որ ետքէն
կրճատուելով, դարձաւ Դաւրէժ կամ Թաւրիզ:

Արտաշիր փախաւ Հնդկաստան, բայց կաշառեց
դաւաճան Արշակունի մը — Անակ Պահլաւունին, որ
խոստացաւ սպաննել Խոսրովը:

Անակ այնպէս ձեւացուց թէ կը փախչի Արտաշիրի
ձեռքէն: Արտաշիր ալ մաս մը զինուած մարդեր ղրկեց
որ հետապնդեն Անակը: Այսպիսով Անակ մտաւ Հայաս-
տան և Խոսրովի ապաւինեցաւ: Այս վերջինը հաւա-
տաց և սիրով հիւրընկալեց իր ազգակից Արշակունին:
Օր մը Անակ որսի ատեն զարկաւ սպաննեց Խոսրովը
ու սկսաւ փախչիլ, որպէս զի երթայ Պարսկաստան ու
իր զարչելի դաւաճանութեան զինն ստանայ: Բայց հայ
նախարարները ետեւէն ինկան, բռնեցին երասխ գետի
կամուրջին վրայ և գետը նետեցին: Խոսրով մեռնելու
ատեն հրամայեց կոտորել Անակի ամբողջ գերդաստանը:

Այդ հրամանին համաձայն, Անակի ցեղը սուրէ
անցուցին: Միայն ծծմայրը փախցուց անոր երեք տա-
րեկան որդին, տարաւ Կեսարիա, քրիստոնեայ մկրտեց
և անունը դրաւ Դրիգոր:

ԴԱՍ 19. — ՏՐԴԱՏ ՄԵԾ

Խոսրովի մահուան լուրն առնելով, Արտաշիր վե-
րադարձաւ Պարսկաստան, նստաւ անոր գահը: Յետոյ
մեծ զօրքով եկաւ տիրեց Հայաստանի: Հրամայեց կո-
տորել Խոսրովի գերդաստանը: Արտաւաղդ Մանգակունի

իշխանը, որ թագաւորին Տրդատ անուն զաւկին խնամակալն էր, փախցուց Տրդատը ու տարաւ Հռոմ: Հոն Տրդատ կը մեծնար ու կը կրթուէր Լիկիանոս անուն հռոմայեցի իշխանի մը տան մէջ: Իսկ Օտա Ամատունի նախարարը փախցուց թագաւորին Խոսրովի դուխտ աղջիկը, հետն ալ արքայական զանձները և ամրացաւ լեռներու մէջ չինուած Անի ամրոցը (Կոմախ): Պարսիկները տիրացան Հայաստանի: Քսանդրէս տարի մեր երկիրը դարձաւ անոնց մէկ նահանգը:



Տրդատ քաղաւոր

Տրդատ կ'աճէր և մեծ քաջագործութիւններ կը գործէր Հռոմի մէջ: Անգամ մը հրապարակային խաղերու տեսն վայրի ցուլի մը եղջիւրներէն բռնելով, վիզը ոլորեց, եղջիւրները հանեց և ցուլն սպաննեց: Անգամ մըն ալ, երբ կառքով ձիարշաւի ելած էին, Տրդատի հակառակորդը խորամանկութեամբ զայն վար նետեց և իր կառքը յառաջ քշեց: Տրդատ կատղեցաւ. ինկաւ կառքին ետեւէն և անիւներէն բռնեց այնպէս ուժով, որ ձիերը չկրցան առաջ շարժիլ: Զօրքին մէջ ալ Տրդատ իր ուժով մեծ հռչակ հանեց: Օր մը ազատեց իր բարերար Լիկիանոս կոմսին կեանքը: Անգամ մըն ալ, երբ հռոմէական բանակը կը փախչէր, Տրդատի ձին սպաննուեցաւ և ինքն իր զէնքերն ու ձիու բոլոր սարքը չալկած, լողալով

անցաւ Եփրատ գետը: Վերջապէս օր մըն ալ Դիոկղեափանոս կայսեր տեղ մենամարտի ելաւ Դիթաց Հռչէ հսկայ թագաւորին հետ, յաղթեց անոր, գերի բռնեց ու քերաւ կայսեր իբրեւ նուէր:

Այս և ուրիշ շատ քաջութիւններ Տրդատի անունը հանեցին Հռոմի մէջ: Երբ Դիոկղեափանոս կայսրը ազատեցաւ իր փնասակար թշնամիներէն, զօրք տուաւ Տրդատին որ երթայ և իր հօր գահը խլէ Պարսիկներէն:

Մինչ Տրդատ փառքով կ'առաջանար Հռոմի մէջ, Դրիգոր ալ կը մեծնար Կեսարիոյ մէջ, ամրանալով քրիստոնէական հաւատով: Երբ իր ծննդավայրը պատմեց հօրը՝ Անակի ստորին արարքը, Խոսրովի մահը և անոր զաւկին Հռոմ դռնուիլը, Դրիգոր որոշեց երթալ Տրդատի քով, հաւատարմօրէն ծառայել անոր և քաւել հօր մեղքերը:

Երբ Տրդատ զօրքով Հայաստան մեկնեցաւ, Դրիգոր ալ անոր հետ էր: Դրիգոր խիստ հաւատարիմ սպասաւոր մը եղաւ և Տրդատ շատ կը սիրէր զայն: Կեսարիա հասնելուն պէս, հայ իշխանները եկան իրենց իսկական թագաւորին քով: Օտա Ամատունին ալ բերաւ թէ՛ Խոսրովի դուխտը և թէ՛ թագաւորական գանձերը: Տրդատ նշանակեց Օտան հայկական զօրքի հագարապէս, իսկ իր կեանքը փրկող Արտաւազդ Մանգակունին կարգեց հայ զօրքերու սպարապէս կամ ընդհանուր հրամանատար:

Սմբատ Բագրատունի իշխանը թագ դրաւ Տրդատի զուլիւր և օժեց Հայերու թագաւոր: Տրդատ հայ և հռոմայեցի զօրքերով առաջ գնաց, յաղթեց Պարսիկներուն ու տէր դարձաւ իր հայրենի երկրին: Մաս մըն ալ անոնց երկրէն խլելով, միացուց Հայաստանի:

ԴԱՍ 20. — ՏՐԴԱՏ ԵՒ ԼՈՒՍԱԼՈՐԻՉ

Տրդատ յաղթելով պարսիկ զօրքին, մտաւ Երիզս աւանը (Երզնկա)։ Հոն կը գտնուէր Կապադատ Հայերու ամէնէն մեծ աստուածուհին — Ոսկեմայր Անահիտը։ Տրդատ հրամայեց Գրիգորին զոհ մատուցանել Անահիտին, որովհետեւ, կ'ըսէր, ան է պարզեւած այս յաղթութիւնները։

Գրիգոր գաղտնաբար քրիստոնեայ դարձած ըլլալով, չուզեց երկրպագել մետաղէ շինուած Կուռքի մը։ Տրդատ բարկացաւ և հրամանը սաստկացուց։ Երբ Գրիգոր նորէն չհնազանդեցաւ, Տրդատ հրամայեց տանջել զայն։ Ամէն տեսակ տանջանքներ տուին Գրիգորի, բայց ան հպարտ մնաց իր հաւատքին մէջ և չերկրպագեց Կուռքերուն։ Այն ատեն հայ իշխանները պատմեցին թէ Գրիգոր զաւակն է Թագաւորին հայրը՝ Խոսրովը զաւաճանորէն սպաննող Անակի։

Երբ Տրդատ այս ալ իմացաւ, հրամայեց իր հաւատարիմ ծառան ձգել Մասիսի մօտերը, Երասխի ափը գտնուող խոր փոսի մը մէջ, ուր կը նետէին մարդասպանները։

Այդ Խոր Վիրապին մէջ Գրիգոր մնաց 15 տարի։ Կը պատմեն թէ բարեպաշտ կին մը ամէն օր մէկ-մէկ հաց կը նետէր գութին մէջ տանջուող Գրիգորին։

Այդ միջոցին Հռոմի մէջ ալ քրիստոնէութիւնը շատ տարածուած էր։ Բայց ամէնքն ալ գաղտնի կը պաշտէին իրենց կրօնը։ Այդ գաղտնի քրիստոնեաներէն խումբ մը կոյսեր, հալածուելով Դիոկղետիանոս կայսրէն, փախան եկան Հայաստան։ Կայսրը թուղթ գրեց Տրդատի որ զանոնք գտնէ ու իրեն զրկէ։

Տրդատ դտաւ կոյսերը իր մայրաքաղաքին, Վաղարշապատի մէջ։ Գաշուած աղքատիկ հնձան մը, անոնք ուլունքներ կը շինէին, կը ծախէին ու իրենց հաւատը պաշտելով կ'ապրէին գաղտնաբար։ Տրդատ ուզեց կին առնել անոնցմէ մէկը, որ շատ գեղեցիկ էր և կը կոչուէր Հսիփսիմէ կոյս։ Սակայն անոնց մայրապետ Գայիանէն Գրիստոսի անուէնով յորդորեց Հսիփսիմէն որ չամուսնանայ Տրդատի հետ։ Թագաւորը զայրացաւ և կոյսերէն 33 հոգի կոտորել տուաւ, իսկ չորս կոյսեր փախչելով աղատեցան։


Այդ անմեղ կոյսերը խողխողելէ ետք, Թագաւորը սաստիկ խղճահարեցաւ։ Կ'ըսեն թէ խիղճը այնքան տանջեց զինքը որ, տեսակ մը խելագարութիւն եկաւ վրան, խող դարձաւ և փախաւ անտառները։ Ամէն տեսակ բժիշկներ կանչեցին, բայց անկարելի եղաւ բժշկել։

Այն ատեն Թագաւորին քոյրը-Խոսրովիդուխտ երազին մէջ տեսաւ թէ միայն Գրիգոր կրնայ բժշկել Թագաւորը։ Որովհետեւ երազներու շատ կը հաւատային, Խսկոյն Օտտ Ամատունին գնաց Խոր-Վիրապէն հանեց Գրիգորը և փառքով բերաւ Վաղարշապատ։ Բոլորն ալ կը զարմանային թէ այդ մարդը ինչպէս կրցեր է 15 տարի ողջ մնալ Խոր-Վիրապին մէջ, և սուրբ կը համարէին զայն։

Գրիգոր աղօթեց և բժշկեց խող կտրած Թագաւորը ու անոր զիւահար մտերիմները։ Յետոյ սկսաւ քարոզել Գրիստոսի հաւատքը։ Տրդատ և Աշխէն Թագուհին, անոնց հետ ալ Խոսրովիդուխտ և բոլոր նախարարները ընդունեցան քրիստոնէութիւնը։ Շատ չանցած Ս. Գրիգորը զրկեցին Կեսարիա, ուր քրիստոնեայ եպիսկոպոս կար, և եպիսկոպոս ձեռնադրել տուին։ Ս. Գրիգոր Կե-

աարիայէն հետը առնելով իր Արիստակէս և Վրթանէս որդիները, եկաւ Հայաստան, մկրտեց ամէնքն ալ և քրիստոնեայ դարձուց մեր աշխարհը: Ասոր համար կոչուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

Լուսաւորիչ հաստատեց Ս. Էջմիածնի վանքը, իսկ



Էջմիածին

անոր քովերը, կոյսերու նահատակուած տեղերուն վրայ շինել տուաւ Ս. Հռիփսիմէի, Ս. Գայիանէի և Շողակաթի վանքերը, որոնք այս օր ալ կանգուն են, անշուշտ նորոգուած ու վերաշինուած:

ԴՍՍ 21. — ՏՐԴԱՏԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Լուսաւորիչ և Տրդատ, ծերանալով, քաշուեցան լեռները ճգնելու և հոն մեռան:

Հայաստանի թագը ժառանգեց Տրդատի որդին՝ Խոսրով Բ.: Խոսրով չունէր Տրդատի քաջութիւնը, բայց արդարութիւնը կը սիրէր անոր պէս: Անոր օրով հայ իշխաններու մէջ երեւցան քանի մը կտրիճ զօրավարներ:

Երբ Կովկասի լեռներէն թափառական ժողովուրդ մը յարձակեցաւ Հայաստանի վրայ, Խոսրով անոնց դէմ զրկեց իր երկու կտրիճ զօրավարները—Բագարատ ասպետը և Վահան Ամատունին: Ասոնք դացին և Ս. Բարատեան դաշտին մէջ, Էջմիածնէն քիչ մը հեռու, Օշական դիւղի ձորերը քշեցին թշնամին և հոն կոտորեցին զանոնք: Խոսրով մեծ կռիւ մըն ալ ունեցաւ Պարսիկներուն հետ և յաղթեց անոնց:

Խոսրովէն վերջ Հայոց թագաւոր եղաւ անոր որդին—Տիրան Բ., որ թուլ, վախկոտ և անպիտան մարդ մըն էր: Որպէս զի ոչ Պարսիկները արեւելքէն, ոչ ալ Յոյները արեւմուտքէն իր վրան չյարձակին, Տիրան սկսաւ հարկ վճարել երկուքին ալ, և խաղաղ ապրեցաւ, վարելով փճացած կեանք մը:

Բայց Տիրան չկրցաւ երկար առնել բարեկամ մնալ Պարսիկներուն ալ, Յոյներուն ալ: Գրիստոնէութիւնը Հայերուն մէջ մտնելէն ետք, Հայերը սկսած էին Յոյներուն կողմը բռնել, որովհետեւ անոնք ալ քրիստոնեայ էին, իսկ Պարսիկներն արեւն ու կրակը կը պաշտէին: Այդ պատճառով Պարսիկները սկսան թշնամանալ:

Այդ առնանքը Յոյներու Յուլիանոս Ուրացղ կայս-

ըր մեծ զօրք առած, կը քալէր Պարսից Շապուհ թագաւորին դէմ, և մարդ զրկեց Տիրանի որ իրեն օգնութեան գայ: Տիրան վախցաւ և օգնական զօրք զրկեց Յոյներուն: Շապուհ լսեց այդ և զայրացաւ:

Պատերազմի սկիզբները Յուլիանոս յաղթեց, բայց երբ արդէն հասաւ անոնց Տիգրոն մայրաքաղաքին առջև և մեծ ճակատամարտ մը մղեց, Յոյները յաղթուեցան և Յուլիանոս ալ սպաննուեցաւ: Պատերազմէն ետք Շապուհ խորամանկութեամբ իր քով կանչեց Տիրանը, բոլոր զինուորներուն առջև նախատեց զայն, աչքերը հանել տուաւ և զրկեց Հայաստան, Արագած լեռան ստորոտը, Կուաչ աւանը ապրելու:

Տիրան շատ չարութիւններ ըրաւ հայ հոգեւորականներուն: Փայտերով ձեծել տուաւ Յուսիկ կաթողիկոսը (Լուսաւորիչի թոռը, Վրթանէսի որդին) և մեռցուց: Երբ Դանիէլ անուն ծերունի քահանայ մը յանդիմանեց թագաւորն այդ դաւանութեան համար, Տիրան խեղդել տուաւ Դանիէլն ալ:

ԴԱՍ 22. — ԱՐՇԱԿ Բ. ԵՒ ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Պարսից թագաւորը թէև վրէժ լուծեց Տիրանէն, բայց վախցաւ որ հայ իշխանները բոլորն ալ կ'անցնին Յոյներուն կողմը, եթէ հայ թագաւոր մը չդնէ անոնց վրայ: Ուստի անմիջապէս Հայերու վրայ թագաւոր կարգեց Տիրանի որդին, Արշակ Բ: Այդ միջոցին Հայերու կաթողիկոսն էր Ներսէս Մեծը, Լուսաւորչի թոռան թոռը:

Երբ Յոյներու վաղկնախանոս կայսրը լսեց Արշակի

դահ ելլելը, իսկոյն դեսպաններ զրկեց որ Արշակ ետ կենայ Պարսիկներու բարեկամութենէն և իր կողմը դառնայ, իրեն հարկ տայ: Արշակ անպատուեց և վռնտեց յունական դեսպանները: Կայսրը բարկացաւ և իր թէոդորոս զօրավարը մեծ զօրքով զրկեց անոր վրայ: Արշակ չուարեցաւ և խնդրեց Ներսէս Մեծէն որ երթայ Յոյներուն քով և փրկէ զինքը:

Ներսէս գնաց, մեղմացուց թէոդորոս զօրավարի սիրտը և համոզեց կայսրն ալ: Կ. Պոլիսի կայսերական պալատէն Ողիմպիադա անուն յոյն իշխանունի մը կընութեան զրկուեցաւ Արշակի և այսպիսով բարեկամութիւնը կնքուեցաւ:

Երբ պարսիկ թագաւորը տեսաւ Արշակի ընթացքը, պատրաստուեցաւ զօրք զրկել անոր վրայ: Արշակ նորէն մարդ զրկեց և համոզեց որ իրեն ալ բարեկամ ու հարկատու կ'ըլլայ: Բայց Շապուհ կ'ուզէր Յոյներուն դէմ պատերազմել, ուստի պահանջեց Արշակէն օգնական զօրք զրկել իրեն: Արշակ չէր ուզեր ոչ մէկուն հետ աւրուիլ. ուստի շատ քիչ մարդ զրկեց Պարսիկներուն օգնելու: Յոյները երբ այդ լսեցին, կատ-



ՆԵՐՍԷՍ ՄԵԾ

ղեցան: Այսպէսով, թէ Պարսիկները և թէ Յոյները հաւասարապէս թշնամացան Արշակի:

Արշակ մէկ միջոց միայն ունէր իր թշնամիներէն ազատելու, — այն է՝ միացնել բոլոր հայ իշխանները, սիրով կապել զանոնք իրենց թագաւորին հետ և հզօր բանակ մը կազմելով պաշտպանել երկիրը: Սակայն Արշակ խորամանկ, խաբեբայ և անբարոյական մարդ էր: Զգուեցուց և իր դէմ հանեց բոլոր հայ նախարարները կամ իշխանները:

Մասիսի ստորոտը շինել տուաւ Արշակաւան անուանով քաղաք մը, ուր ժողովեց ամէն կողմէ գող, աւազակ, չարագործ փախստական անձերը, հայ իշխաններու ծառաները, անոր դէմ չարիք գործողները: Հայ իշխանները կատուեցան թագաւորին այդ դաւաճանուածեան դէմ:

Արշակ խիստ նախանձոտ մարդ էր: Սպաննել տուաւ իր եղբորորդին, Գնէլը, որպէս զի տէր դառնայ անոր զանձերուն և ամուսնանայ անոր կնոջ—գեղեցիկ Փառանձեմի հետ: Փառանձեմ Մրջնիկ անունով քահանայի մը ձեռքով՝ հաղորդութեան թոյն խառնելով թունաւորել տուաւ Ոգիմարիադա թագուհին:

Այս արարքները զայրացուցին հայ նախարարները: Անոնք զօրքով ինկան Արշակի և անոր անպիտան քաղաքին վրայ, կոտորեցին բնակիչները և Արշակն ալ փախցուցին: Այն ատեն մէջ մտաւ Ներսէս կաթողիկոսը, նախարարներու սուրէն ազատեց Արշակաւանի բոլոր ծծկեր մանկիկները՝ փոխադրեց իր հիմնած որբանոցները, պահեց ու մեծցուց: Հայրապետը միեւնոյն ատեն հաշտեցուց թագաւորն ու նախարարները: Զհաշտուեցան երկուքը միայն—Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնեանը, որ անցան Պարսկաստան և զարծան Շապուհի հաւատարիմ ծառաներ:

Արշակի դէմ բարկացած էր Յունաց կայսրն ալ: Ուստի այս անգամ ալ աղաչեց Ներսէս կաթողիկոսին երթալ Պոլիս և նորէն ղինքը բարեկամ դարձնել կայսեր: Ներսէս մեծ ընծաներով հասաւ Կ. Պոլիս, բայց կայսրը զայրացած ըլլալով Արշակի դէմ, չընդունեց Ներսէսը, այլ հրամայեց աքսորել անմարդաբանակ կղզի մը (Պաթմոս կղզին):

Արշակ մինակ մնաց: Չկար Ներսէսը որ իր լուսամիտ խորհուրդներով ետ կեցնէր զայն չար գործերէ: Արշակ վրէժ էր պահել հայ իշխաններէն: Երբ Ներսէս



Արշակ Բ. անճնապան կ'ըլլայ

բացակայ էր, հրամայեց կոտորել անոնցմէ չատերը՝ Նախարարները զայրացան և Պարսիկներուն կողմը բռնեցին: Վերջապէս Շապուհ զրկեց իր Այանոզան զօրա-

վարը որ եկաւ մեծ զօրքով և Պարսկաստան գերի տա-
րաւ Արշակը: Փառանձեմ թագունին առաւ արքայա-
կան գանձերը և փախաւ Արտաղերս ամրոցը: Նախա-
րարներու մէկ մասն ալ, տեսնելով որ Շապուհ կ'ուզէ
բռնել բոլոր հայ իշխանները, իրենց ընտանիքներն ա-
ռին և փախան յունական երկիրները:

Շապուհ կատղեցաւ: Մեծ զօրք տուաւ դաւաճան
հայ իշխաններուն — Մերուժան Արծրունին և վահան
Մամիկոնեանին, ու զրկեց Փառանձեմի դէմ: Արշակն
ալ շղթայի զարկաւ և դրաւ Անյուշ բերդը: Դաւաճան
հայ իշխանները գրաւեցին Արտաղերսը երկար կռիւ-
ներէ ետք և թագունին գերի տարին Պարսկաստան, ուր
Պարսիկները զայն ցիցը հանեցին: Այս դժբաղդութիւն-
ները լսելով, Արշակ անձնասպան եղաւ Անյուշ բեր-
դին մէջ:

ԴԱՍ 23. — ՄԵՐՈՒԺԱՆ, ՆԵՐՍԷՍ ՄԵԾ ԵՒ ՊԱՊ

Արշակ Բ-ի գերի իյնալէն ետք, Շապուհ ուղեց
ոչնչացնել Հայերու թագաւորութիւնը և Հայաստանը
միացնել իր մեծ երկրին: Անոր նպատակն էր Հայերը
կրակապաշտ դարձնել և քրիստոնէութիւնը ջնջել, որ-
պէս զի Հայերը Յոյներուն հետ բարեկամ չմնան:

Ատոր համար Շապուհ մեծ զօրքով Հայաստան
ղրկեց ուրացող հայ իշխան Մերուժան Արծրունին: Այս
իշխանը քրիստոնէութիւնն ուրանալով, ընդունած էր
Պարսիկներու կրօնը և ամուսնացած՝ Շապուհի Որմիզ-
դուխտ քրոջ հետ:

Մերուժան եկաւ մեր երկիրը և շատ անօրէնու-
թիւններ գործեց: Բոլոր խելացի ու մաքուր հոգեւո-
րականները լռեց և աքսորեց Պարսկաստան. հայ իշ-
խաներու կիներն ու երեխաները փակեց բերդերու մէջ,
պարսիկ զինուորներու պահպանութեան տակ, խաբե-
լով, կաշառքով, ծեծով ու բռնութեամբ շատերը ստի-
պեց դառնալ կրակապաշտ:

Երբ այս ամէնը տեսաւ Մեծն Ներսէս, շատ ցաւե-
ցաւ: Աքսորէն դեռ նոր դարձած, Կ. Պոլիս կը հաս-
նէր, ուր կայսր էր նստած իր հին բարեկամը, Թէո-
դոսը: Ներսէս աղերսեց որ կայսրը ազատէ Հայաստանը
կրակապաշտներու ձեռքէն և Հայերու թագաւոր հռ-
չակէ Արշակի որդին Պապը, որ Պոլիս կը գտնուէր իբ-
րեւ պաշտելով:

Թէոդոս չէր ուզեր որ իր թշնամի Պարսիկները
զօրանան, իրենց միացնեն Հայաստանի պէս լեռնային
ամուր երկիր մը, ուստի իր Տերենտիանոս զօրավարին
մեծ զօրք տուաւ և Ներսէսի ու Պապի հետ զրկեց Հա-
յաստան:

Մերուժան փախաւ Յոյներու և Հայերու միացած
զօրքին առջեւէն: Շապուհ նոր զօրք տուաւ ու կրկին
զայն զրկեց Պապի դէմ: Երկու բանակները զարնուե-
ցան Նպատ լեռան քով, Զիրաւ դաշտին վրայ: Երբ
Հայերն ու Յոյները կը կռուէին դաշտին մէջ, Հայրա-
պետը բազկատարած կ'աղօթէր լեռան կատարէն և Աս-
տուծմէ կը խնդրէր յաղթութիւն չնորհել Հայերուն:

Քրիստոնեայ բանակը յաղթեց. Պարսիկները ջախ-
ջախուելով, փախան: Մերուժան ալ փախաւ: Բայց դա-
ւաճանի ձին վիրաւորուած ըլլալով, Սմբատ Բագրա-
տունի իշխանը ետեւէն հասաւ, բռնեց զայն և հրաչէկ
շամփուր մը կտրեցնելով, զրաւ անոր գլուխը և ըսաւ.

—«Ո՛վ Մերուժան, դուն կ'ուզեիր Հայոց քաղաւոր ըլ-
ջաշ. անա ես կը պատկեմ քեզ. իբր քաղաքիւր ասպետ ես
կը կասարեմ իմ հայրական պաշտօնս»:

Այսպէս սպաննուեցաւ դաւաճանը:



Մերուժան ճամփուրով կը պատկուի

Մերուժանի ընկեր և նոյնպէս դաւաճան Վահան
Մամիկոնեան իշխանն ալ սպաննուեցաւ իր զաւակին՝
Սամուէլ Մամիկոնեանի ձեռքով:

Պապ թագաւոր օծուեցաւ և նստաւ Հայոց գահը:
Քիչ մը ատեն Պապ լսեց Ներսէս Մեծի խորհուրդները.
վարձատրեց բոլոր քաջ նախարարները, եղաւ արդա-
բասէր: Բայց չուտով սկսաւ անբարոյական և յոռի
կեանք մը անցնել: Ներսէս միշտ կը խրատէր և կը
կը յանդիմանէր անպիտան թագաւորը: Պապ զայրա-
նանալով, թունաւորեց ու մեռցուց Մեծ Հայրապետը:

Քիչ ետքն ալ իր երկրէն վտարեց յոյն զօրքը և ուզեց
Պարսիկներու հետ բարեկամանալով ջարդել Յոյները:
Սակայն Տերենտիանոս զօրավարը յարձակեցաւ իր
վրայ, գերի բռնեց և ղրկեց Պոլիս, ուր կայսրը հրա-
մայեց գլխատել անարժան թագաւորը:

ԴԱՍ 24. — ՎԵՐՋԻՆ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԸ

Պապ մեռաւ, իսկ իր որդիները դեռ անչափահաս
էին: Թէոդոս կայսրը Հայոց գահը նստեցուց Պապի եղ-
բորորդին՝ Վարազդատը: Այս հայ իշխանը Տրդատ
Մեծի պէս շատ մը քաջութիւններ գործած էր Կ. Պո-
լիս եղած ատենը. կռիւմարտի ու գաղանամարտի մէջ
չէր ունեցած իրեն հաւասար մէկը: Կայսրը կը կարծէր
որ Վարազդատ իրեն հաւատարիմ պիտի մնայ, որով-
հետեւ երկար ատեն ապրած էր Յոյներու հետ, անոնց
երկրին մէջ: Սակայն Վարազդատ ալ Պապին պէս
սկսաւ մօտենալ Պարսիկներուն և խուսափիլ Յոյներու
յուժէն: Կայսրը զայրացաւ և իր զօրավարներուն հրա-
մայեց բռնել զայն և ղրկել Կ. Պոլիս: Վարազդատ
ղրկուեցաւ Կ. Պոլիս, ուր չղթայի դարնուեցաւ և աք-
սորի մէջ մեռաւ:

Թէոդոս հնար մը մտածեց Հայաստանը իր ձեռքը
պահելու համար: Երկու մասի բաժնեց մեր երկիրը.
արեւելեան մասը տուաւ Պապի մէկ զաւակին, իսկ ա-
րեւմտեան մասը՝ միւսին: Արեւելեան մասին թագաւոր
եղաւ Արշակ Գ., արեւմտեան մասին՝ Վաղարշակ Բ.:
Բայց Վաղարշակ նոյն տարին մեռաւ և ամբողջ Հա-
յաստանը մնաց Արշակ Գ.ին:

Այդ միջոցին մեռաւ Թէոդոս կայսրը, որուն մեծ երկիրը բաժնուեցաւ երկու մասի: Արեւելեան Կայսրութեան գահն ելաւ Արկադիոս որդին, որ շատ թոյլ մարդ մըն էր: Խորամանկ Շապուհ խօսք մէկ ըրաւ Արկադիոսի հետ, և Հայաստանը բաժնեցին երկու մասի — արեւելեան մասը մնաց Պարսիկներուն, արեւմտեանը՝ Յոյներուն:

Արշակ, որ Դուին կը նստէր, չուզեց մնալ կրակապաշտ Պարսիկներու իշխանութեան տակ, առաւ իր գանձերը և շատ մը հայ իշխաններու հետ մէկտեղ անցաւ Յոյներու բաժինը: Շապուհ չուզեց պարսիկ կուսակալ կամ մարզպան դնել Հայերուն վրայ, որովհետեւ կը վախճար թէ Հայերը կը միանան Յոյներուն հետ: Այդ պատճառով Շապուհ իր ձեռքի տակ եղած հայ երկրին վրայ թագաւոր զրաւ Արշակունիներու ցեղէն իշխան մը — Խոսրով Գ.:

Արշակ Գ. ալ անդաւակ մեռաւ և Խոսրով Գ. եղաւ նաեւ յունական Հայաստանի թագաւոր, պայմանով որ Յոյներուն ալ հարկ տայ: Սակայն Պարսիկներուն հաճելի չէր Խոսրովի բարեկամութիւնը Յոյներու հետ. անոնք կը վախճային որ հայ և յոյն քրիստոնեայ ըլլալով, կը միանան և կը խլեն իրենցմէ Հայաստանը: Ատկէ զատ, Խոսրով կաթողիկոս նշանակած էր Սահակ Պարթևը — Ներսէս Մեծի որդին. իսկ Պարսիկները Լուսաւորչի ամբողջ ցեղը կը համարէին իրենց թշնամի, որովհետեւ այդ ցեղն էր որ քրիստոնեայ դարձուց Հայերը, հեռացուց զանոնք Պարսիկներէն և մօտեցուց քրիստոնեայ արեւմուտքին:

Շապուհ մեծ զօրքով իր Արտաշիւր որդին ղրկեց Խոսրովի վրայ: Արքայորդին եկաւ, քիչ մը պատերազմելէ ետք դերի բռնեց Խոսրովը և տարաւ Պարսկաս-

տան (400 թուականին), ու փակեց Անյուշ բերդին մէջ:

Խոսրովի տեղ թագաւոր կարգուեցաւ իր եղբայրը — Վառմապուհ: Բսան և մէկ տարի խաղաղ կառավարեց այդ խոհեմ և խելացի թագաւորը, բարեկամ մնալով թէ՛ Յոյներուն և թէ՛ Պարսիկներուն:

Անոր թագաւորութիւնը նշանաւոր եղաւ հայ տառերու զիւտով: Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոց վարդապետը մեծ հոգ կը տանէին հայ մանուկներու ուսման:



Ս. Մեսրոպ

Բայց անոնք չուտով տեսան որ առանց հայերէն գիրերու, յոյն և ասորի տառերով անկարելի է հայ մանուկները կրթել. տեսան որ Հայը չուտով պիտի կորսնցնէ իր մայրենի լեզուն, եթէ գիր չունենայ: Երկար աշխատեցան հայ գիրեր հնարելու համար: Թագաւորն ու կաթողիկոսը Մեսրոպ վարդապետը ղրկեցին Ասորեստան, Փիւնիկէ և Յունաստան, որպէս զի լաւ մը ուսումնասիրեն անոնց լեզուն, տառերը, պատմութիւնը և ապա Հայերուն համար ալ գիրեր յարմարցնեն: Մեսրոպ գնաց, երկար ուսումնասիրեց և վերջապէս հայերէն գիրեր հնարեց ու բերաւ: Սահակ և Մեսրոպ անմիջապէս աշակերտներ հաւաքեցին, սորվեցուցին հայերէն գրել-կարդալ, թարգմանեցին Ս. Գիրքը, գրեցին

բազմաթիւ շարադրութիւններ: Հայ գրականութիւնը ծաղկեցաւ, հայ լեզուն զօրացաւ: Հայը թէև կորսնցուց իր թագաւորութիւնը, բայց ստեղծեց լեզու և գրականութիւն, որոնց շնորհիւ պահեց իր ազգութիւնը:

Վառմշապուհ թողուց անշափահաս որդի մը—Արտաշէս կամ Արտաշիր: Կաթողիկոսն ու նախարարները



Սահակ հայրապետ

խնդրեցին Պարսիկներէն և Արտաշիրը նստեցուցին հայկական գահը: Բայց ան ալ եղաւ թոյլ, ապականուած ու ատելի թագաւոր մը: Նախարարները շուտով զլուեցան անկէ և գրեցին պարսիկ թագաւորին որ ազատէ զիրենք այդպիսի անպիտան թագաւորէ մը: Սահակ Պարթև գիտէր որ եթէ այս անգամ ալ թագաւորը գահէն վար առնեն, Պարսիկները այլևս հայ թագաւոր չպիտի նշանակեն. ուստի խնդրեց որ հայ իշխանները այդպիսի բան չընեն: Իշխանները զայրացան ու պարսիկ թագաւորէն խնդրեցին ոչ միայն Արտաշիրը վար առնել գահէն, այլ և Սահակ Պարթևը զրկել կաթողիկոսական աթոռէն: Պարսիկներն ալ ձիւղ այդ կ'ուզէին. թագաւորն ու կաթողիկոսը կանչուեցան Տիգրան—պարսիկ արքունիքը: Հոն զանոնք զըրկեցին իշխանութենէ և պահեցին Պարսկաստան. Հայերուն վրայ ալ կառավարիչ նշանակեցին պարսիկ Վահմիշըշապուհը, իսկ կաթողիկոսութիւնը տուին Սուրմակ երէցին (432):

Այսպէս ինկաւ Արշակունիներու թագաւորութիւնը և Լուսաւորիչի Սերունդէն ալ խլուեցաւ կաթողիկոսութիւնը:

ԴԱՍ 25. — ՇԻՆ ՀԱՅԵՐՈՒ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

Հայերը առաջ կռապաշտ էին, բայց 301 թուականին ընդունեցին քրիստոնէութիւնը: Առաջ անոնք գիր չունէին, այլ կը գրէին ասորերէն և յունարէն տառերով, բայց Ս. Մեսրոպ և Ս. Սահակ գիր գտան 406 թուականին:

Հայ թագաւորներու մայրաքաղաքներն եղան Արմաւիր, Արտաշատ, Վաղարշապատ, Դուին, ևայլն: Սկիզբները թագաւորն ալ իր ժողովուրդին պէս պարզ կեանք կ'անցընէր. կը բնակէր հասարակ շէնքի մը մէջ: Բայց ետքէն թագաւորներն սկսան շինել փառաւոր պալատներ, ապրիլ Ասորեստանի կամ Պարսիկներու շուայ թագաւորներուն պէս, հազնիլ ծիրանի ոսկեղօծ պատմուճան, ոսկեթել ասեղնագործ տափաստ, ոտքի կապիչներ կամ զանկապաններ, մէջքերը կապել ոսկեղօծ դօտի և հազնիլ կարճիկ բաճկոն մը: Ոտնամանները սանդաղներ էին, կարմիր կամ դեղին կաշիէ: Հանդիսաւոր օրերու մէջ կը դնէին ոսկիէ թագ մը, զարդարուած բազմաթիւ թանկազին քարերով: Քրիստոնեայ թագաւորները ունէին նաև խաչ՝ իրենց թագին վրայ:

Թագաւորին ներկայանալու համար, պէտք էր աջ ձեռքը վեր բարձրացնել և ծուլ անոր առջև, իբրեւ նշան խոնարհութեան: Անոր ներկայութեան ոչ ոք

համարձակէր նստիլ, մինչեւ որ արքան հրամանս
չտար :

Թագաւորին հաւասար պատիւներ կը ստանար նաեւ
թագուհին — Հայոց Տիկնանց Տիկինը : Թագաւորէն
ետք կուգային ազնուականները կամ նախարարները :
Ասոնք կը կոչուէին Ազասանի կամ Ազասորեար : Առաջ
այդ ազնուականներն ալ կ'ապրէին պարզ ժողովուրդին
պէս, կը զբաղէին իրենց հօտերով և հողերով, իսկ յետոյ
սկսան իրենց հողերը մշակելու տալ շինականներուն կամ
անազաններուն և ապրիլ անոնցմէ առնուած հարկերով :

Նախարարները խիստ չատ էին : Անոնց ցեղերը կը
կոչուէին Տուն : Օրինակ՝ Սիւնեաց երկրի (Ղարաբաղի)
իշխանները կը կոչուէին Սիւնեաց Տուն, Սիւնեաց Տա-
նուստր կամ Սիւնիներ : Վանի իշխանները կը կոչ-
ուէին Արծրունիներ, Տարսնիներ — Մամիկոնեաններ, Շի-
րակիներ — Կամասրականներ և այլն : Նախարարական մեծ
տուններն իրենց ձեռքին տակ ունէին պղտիկ ազնուա-
կանները : Իսկ բոլոր ազնուականները միասին պարտա-
ւոր էին հնազանդիլ Հայոց Արքային :

Պատերազմի տառն պղտիկ նախարարները կը ժող-
վէին իրենց զօրքերը և կ'երթային մեծ նախարարներու
բանակը, մեծերն ալ կը ժողվէին իրենց զօրքերը և կ'եր-
թային կը միանային թագաւորի բանակին հետ :

Թագաւորն ունէր իր սեփական մեծ կալուածները -
ան ամէնէն մեծ նախարարն էր : Նախարարներն ալ ու-
նէին իրենց մանր ու խոշոր կալուածները : Այդ կալ-
ուածներուն վրայ կ'ապրէր ռաւիլ կամ շինական կամ
անազան ժողովուրդը, որ հարկ կուտար իր կալուածա-
տիրոջ կամ ասնուսիրոյ : Շինականը կը մշակէր ազ-
նուականին կամ նախարարին կամ ազասանիին հողերը :
Թագաւորը հարկ կ'առնէր իր հողերը մշակող, անոնց

վրայ բնակող շինականներէն . անոր հարկ կուտային
նաեւ կալուած ունեցող նախարարները : Կային նախա-
րարներ ալ որ կալուած չունէին, բայց մեծ պաշտօններ
կը վարէին զօրքի կամ թագաւորի արքունիքին մէջ :

Կային աւագ և կրտսեր նախարարներ : Աւագ էին մեծ
կալուածներ ունեցողները, կրտսեր կ'ըսուէին մանր կալ-
ուած ունեցողները, կամ ամենեւին կալուած չունե-
ցողները :

Աւագ նախարարները իրաւունք ունէին թագաւո-
րին ներկայութեանը նստելու : Կը նստէին բարձեւոր
վրայ : Այդ բարձեւոր կամ զանեւոր շարուած կ'ըլլային
կարգով — առաջին գահ, երկրորդ գահ, և այլն : Անոնց
վրայ կը նստէին նախ ամէնէն մեծ — հարուստ և զօ-
րաւոր նախարարը, յետոյ քիչ մը փոքրը, և այլն :

Նախարարները կը կառավարէին իրենց երկիրները
թագաւորէն անկախ . կը դատէին իրենց ժողովուրդը,
իրենց համար զօրք կը կալմէին, յաճախ իրարու դէմ
պատերազմ կը մղէին :

Թագաւորներու և նախարարներու ամէնէն աւելի
սիրած զուարճութիւններն էին զինավարժութիւնը և
որսորդութիւնը :

Ազնուականներուն հաւասար ուժ և անոնցմէ աւելի
ազդեցութիւն ունէին կռապաշտ Հայերու մէջ քուրմե-
քը, իսկ քրիստոնեայ Հայերու մէջ՝ հոգեւորականները :

Քուրմերը ունէին մեծամեծ կալուածներ, սեփական
զօրք, չատ մեծ հարստութիւն : Անոնք կը ծառայէին
մեհեաններու մէջ և ժողովուրդէն ու իշխաններէն կը
ստանային առատ նուէրներ : Շատ կրօնաւէր իշխաններ
աստուածներուն կը նուիրէին ընդարձակ հողեր իրենց
շինականներով, անտառներ, արօտներ, և այլն : Քրիս-
տոնական շրջանին մէջ ալ նոյն նուիրատուութիւնը չա-

բունակուեցաւ եկեղեցիներու և վանքերու անունով:

Քուրմերն ու հոգեւորականները երբեմն շատ կը զօրանային և մեծ ազդեցութիւն ձեռք կը բերէին թէ թագաւորին և թէ նախարարներուն վրայ: Թէ՛ քուրմերը և թէ՛ քրիստոնեայ հոգեւորականները յաճախ կ'ըլլային նախարարական կամ նոյն իսկ թագաւորական ցեղէ:

Հասարակ ժողովուրդը կը բաժնուէր քաղաքականներու և շինականներու: Քաղաքացիները բարձր կը համարուէին շինականներէն: Նախարարներուն և թագաւորին հարկ տուողը շինականներն էին: Քաղաքացիներն կը զբաղէին արհեստներով և վաճառականութեամբ, իսկ շինականները՝ երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Քաղաքացիներու տուած տուրքերը շատ չնչին էին:

Հայաստանի մէջ կային բազմաթիւ մանր ու խոշոր քաղաքներ: Հայ թագաւորներէն շատերը չինած են իրենց անունով աթոռանիստ քաղաքներ: Այդ քաղաքներուն մէջ մեծ առեւտուր կ'ըլլար: Բայց որովհետեւ Հայաստան ծով կամ նաւարկելի մեծ գետեր չունի, այդ պատճառով առեւտուրը շատ չէր զարգացած:

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ



ԴԱՍ 26. — ՎԱՐԴԱՆԱՆՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երկու մեծ պետութիւններ—Բիւզանդիոն և Պարսկաստան երկար առեւն կը ջանային տէր դառնալ Հայաստանի: Պարսիկները կը կարծէին որ եթէ Հայերը ինդունին իրենց արեւապաշտական կրօնը, այլեւ Հայ չեն մնար, կը դառնան Պարսիկ, կը ձուլուին իրենց հետ և Հայաստան կը միանայ Պարսկաստանին, իսկ Յոյներն ալ երբեք չեն կրնար իրենց ձեռքէն խլել այդ լուծնային հօր երկիրը: Այս նպատակով, Պարսիկները ոչնչացուցին Արշակունիներու թագաւորութիւնը և Հայաստանը կառավարեցին իրենց կուսակալներով կամ Մարզպաններով: Առաջին մարզպանը եղաւ Վենմիհրշապուհ:

Այդ Պարսիկը խաղաղութեամբ կառավարեց Հայաստանը: Անկէ վերջ մարզպան կարգուեցաւ Սիւնեացի իշխան Վասակը: Թէ Սիւնիներու և թէ Արծրունիներու երկիրները դրացի ու սահմանակից էին Պարսիկներուն, ուստի Արծրունիներն ալ, Սիւնիներն ալ շատ կը վախնային Պարսիկներէն: Շապուհի օրով Մերուժան Արծրունին դաւաճանեց հայ ազգին. այժմ ալ երբ Պարսից թագաւորն էր դռնող Յաղկերտ Բ., դաւաճանութեան դերը կատարեց Սիւնեացի փառասէր իշխանը, Վասակը:

Յաղկերտ սկզբները կը վախնար ստիպել Հայերը ուրանալու իրենց կրօնը, որովհետեւ կը կարծէր թէ քրիստոնեայ Յոյները պիտի օգնեն անոնց: Բայց երբ արշաւեց Յոյներուն վրայ և մեծ յաղթութիւն մը տա-

բաւ, ա՛լ չվախցաւ անոնցմէ: Լսելով իր Միհրներսէհ հազարապետին, պատերազմ յայտարարեց Հոններուն դէմ, որոնք կը բնակէին Պարսկաստանէն դէպի հիւսիս, Ասիոյ տափաստաններուն մէջ: Յազկերտ հրամայեց հայ նախարարներուն զօրքով իրեն օգնութեան գալ: Եւ թէ տարի հայ զօրքը պահեց թշնամիին դէմ, Պարսից երկրի խորերը, հեռու հայ երկրէն, որպէս զի Հայերը տկարանան և ինք իր նպատակին հասնի:

Միհրներսէհի խորհուրդով, Յազկերտ ընդարձակ թուղթ մը գրեց Հայաստան մնացած նախարարներուն: Այդ թուղթին մէջ ան կը ծաղրէր քրիստոնէութիւնը, կը գովէր կրակապաշտութիւնը, և կ'առաջարկէր Հայերուն թողուլ սխալ կրօնը, ընդունիլ իրենց «լոյս հաւատը»:

Հայ իշխաններն ու հոգեւորականները ազգասէր Յովսէփ կաթողիկոսին նախադանութեամբ ժողով ըրին և կտրուկ մերժում մը գրեցին թագաւորին: Յազկերտ երբ այդ պատասխանը առաւ, սաստիկ զայրացաւ, որովհետեւ թուղթին մէջ Հայերը ծաղրած էին Զրադաշտի կրօնը: Իսկոյն հրաման ելաւ որ հայ նախարարները երթան Տիղբոն, տրքային պալատը: Նախարարները կաթողիկոսին հետ ժողով ըրին, խաչով, Աւետարանով երդուեցան հաստատ մնալ իրենց կրօնին վրայ և գացին Տիղբոն: Դացողներու գլխաւորներն էին — Վասակ մարզպանը, Վարդան Մամիկոնեան սպարապետը և Տարօնի տէրը, Վահան Ամատունին և ուրիշներ: Թագաւորը սպարական պատիւներով չընդունեց զանոնք. այլ բարկացաւ, սպառնաց թէ ամբողջ հայ ազգը բնաջինջ կ'ընէ, զօրք կը ղրկէ և նախարարներու կիներն ու զաւակները ջարդել կուտայ — եթէ իրենց կրօնը չուրանան և կրակը չպաշտեն: Հայ իշ-

խանները բանտ նետուեցան, մինչեւ որ իրենց հաւանութիւնը տային: Անոնք ալ բանտին մէջ խօսք մէկ ըրին երեսանց ուրանալ իրենց հաւատքը, երթալ իրենց երկիրը և ապա զօրք ժողովել ու կռուիլ Պարսիկներուն դէմ:



Վարդան Մամիկոնեան

Յազկերտ չատ ուրախացաւ, երբ լսեց նախարարներուն ուրացումը: Անմիջապէս 700 մոզ և գունդ մըն ալ զօրք տալով, մեծ պարզեւներով զրկեց Հայաստան: Երբ նախարարներու ուրացութեան լուրը Հայաս-

տան հասաւ, հոն հասկեցան դադանիքը. կարծեցին որ ստոյգ է: Ուստի ամէնքն ալ երդուեցան չընդունիլ հաւատուրաց և դաւաճան իշխանները: Այնպէս որ, երբ հայ նախարարները, մոգերն ու պարսիկ զօրքը հասան Անգղ գիւղը (Մաղկոտան դաւառ), ժողովուրդը Ղեւոնդ Երէցի առաջնորդութեամբ անոնց դէմ ելաւ և կատաղի կռուի բռնուեցաւ պարսիկ զօրքին և մոգերու հետ: Մոգերն ու զօրքը փախան Պարսկաստան, իսկ հայ իշխանները ցրուեցան իրենց տեղերը: Պարզուեցաւ որ հայ իշխանները չեն ուրացած իրենց հաւատքը, բացի Վասակ մարզպանէն. որուն երկիրը շատ մօտ էր Պարսիկներուն: Վասակի երկու որդիները պատանդ էին Յազկերտի քով և Յազկերտ խոստացած էր Հայոց թագաւոր ընել զինքը:

Զմեռը թէ Յազկերտ, թէ հայ իշխանները պատրաստուեցան պատերազմի: 451 թուականին, դարնան բացուելուն պէս, հայ զօրքը հաւաքուեցաւ Տղմուտ գետին ափը, Սւարայրի դաշտին մէջ: Հայերու հրամանատարն էր Վարդան սպարապետը: Վասակ և իր կողմնակից շատ մը իշխաններ աւին իրենց զօրքերը և քաշուեցան իրենց լեռները, չուզելով պատերազմիլ Պարսիկներուն հետ: Մնաց Վարդան Մամիկոնեան, իր հաւատարիմ ընկերներով և 65,000 զօրքով:

Պարսիկներու զօրքը խիստ շատ էր: Հրամանատարն էր Մուշկան Նիւսեւաւուրտ: Բացի անհամար զօրքէն, Պարսիկները բերած էին նաև շատ մը փիղեր, որոնք վարժուած էին իրենց կնճիթներով և օտքերով մարդեր կոտորելու:

Կռիւը սկսաւ 451 Յունիս 2-ին: Երկու կողմէն ալ կռուեցան մեծ քաջութեամբ: Հայերէն ինկան Վարդան Մամիկոնեան և ուրիշ ութ իշխաններ, 1025 ալ զինուորներ, ընդամենը 1036 նահատակ: Իսկ Պարսիկները կորսնցուցին 3544 մարդ:

ԴԱՍ 27. — ՎԱՐԴԱՆԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՅ

Պատերազմէն յետոյ հայ իշխանները քաշուեցան իրենց լեռները, ամրացան և սկսան նեղել Պարսիկները: Իւրաքանչիւր իշխան լեռներէն կ'իջնէր, յարձակում կը գործէր Պարսիկներուն վրայ, կը կոտորէր ու նորէն կը քաշուէր իր ամուր լեռները: Այն ատեն Մուշկան Նիւսեւաւուրտ մէկտեղ հաւաքեց իր բոլոր ցրուած զօրքը, որպէս զի չկոտորուին, և գրեց Յազկերտին թէ անկարելի է Հայերը կրօնափոխ ընել. եղած կոտորածներուն ալ մեղքը նետեց Վասակի վրայ:

Յազկերտ հրամայեց ընել Յովսէփ կաթողիկոսը, Ղեւոնդ Երէցը, և շատ մը հոգեւորականներ ու իշխաններ և զրկել Տիգրան: Վասակ ալ հրաման ստացաւ երթալ Տիգրան, իսկ անոր տեղ մարդպան կարգուեցաւ Ատորմիզդ Պարսիկը: Թագաւորը հրաման տուած էր բանալ հայ եկեղեցիները, ազատ թողուլ որ ամէն մարդ իր ուզած կրօնը պաշտէ, իսկ գաղտնապէս հրամայած էր դրամով ու պաշտօններով խաբել մարդիկ, գրաւել զանոնք դէպի պարսիկ կրօնը. լաւ մարդիկը պաշտօնի չգնել, միայն ուրացողներն ու դաւաճանները բարձրացնել:

Երբ հայ հոգեւորականներն ու իշխանները հասան Տիգրան՝ ջորիներու վրայ կապուած, անոնցմէ ետք հասաւ Վասակ, փառաւորապէս զարդարուած: Թագաւորը դատաւարան տեսաւ: Հաստատուեցաւ Վասակի երկերեսանի դերը: Զայն բանտ նետեցին, ուր և մեռաւ սոսկալի թշուառութեան մէջ: Իսկ միւս հայ իշխաններն ու հոգեւորականները աքսորուեցան Պարսկաստանի խորերը: Հոն բոլոր հոգեւորականները 2—3 տա-

քի պահելէ ետք, նահատակեցին. իսկ հայ իշխանները 12 տարի բանտերու մէջ չղթայակապ մնացին և երբ ֆաղկերտ մեռաւ, ներման արժանացան ու դարձան իրենց տեղերը:

ԴԱՍ 28.— ԵՐԿՐՈՐԴ ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՐ

Պարսիկները երբ տեսան որ կարելի չէ Հայերը կրակապաշտ դարձնել բռնի ուժով ու կոտորածներով, սկսան դիմել խորամանկութեան: Խաբելով, կաշառքով, պաշտօններ տալով՝ անպիտան և ուրացող մարդերը առաջ կը քաշէին, իսկ լաւ և արժանաւոր անձերը միշտ կը լքէին, առանց պաշտօնի կը ձգէին: Երբ Պարսից թագաւոր եղաւ Գոռոզ Պերոզը, այն ատեն վերսկսաւ քրիստոնէութիւնը բռնի ուժով Հայերու մէջէն ջնջելու խնդիրը:

Հայ իշխաններէն մէկ քանին ընդունել էին կրակապաշտութիւնը: Ժողովուրդն ալ սկսած էր խարուիլ թէ՛ Ասորորմիզդէ և թէ՛ անկէ վերջ եկող Ասորվչնասպ պարսիկ մարզպաններու անուշ լեղուէն, կաշառքներէն ու խորամանկութիւններէն:

Մեծ վտանգ կը սպառնար հայ ազգին ու կրօնին: Այդ միջոցին կաթողիկոս էր Գիւտ մեծանուն, որ անդադար կը զգուշացնէր իր ժողովուրդը Պարսիկներու խորամանկութիւններէն: Պերոզ տեսնելով որ Գիւտ կը խանգարէ Հայերու հաւատարմութեան գործը, կանչեց զայն Տիզրոն, անարգեց և կաթողիկոսութենէ զրկելով, ետ դարձուց:

Հայ ազգին օգնութիւն հասաւ նորէն նոյն Մամի-

կոնեան տոհմէն: Վարդան Մամիկոնեան ունէր աղջիկ մը — Շուշանիկ զոր կնութեան էր տուած Վրաց Վազգէն թագաւորին. արու զաւակ չէր թողած: Վարդանի եղբայր Հմայեակ ունէր երեք մանչ զաւակ, որոնց երէցին անունն էր Վահան: Այս երեքն ալ Պարսիկներուն ձեռք գերի էին ինկած, և ազատուելով վրացի իշխանի մը կողմէ, տարուած էին Վրաստան: Հոն անոնց մայրը, Զուիկ ազգասիրական ոգիով կրթած էր զանոնք: Մամիկոնեան տանուտէր եղաւ Վահանը, որ ցոյց տուած էր մեծ խելք, ճարպիկութիւն և քաջութիւն:

Պարսիկներու հալածանքը նորէն սաստկացած էր: Վարդանանց պատերազմէն ճիշդ 30 տարի ետք, հայ իշխանները զաղտնի ժողով ըրին և ապստամբեցան Պարսիկներուն դէմ: Սմբատ Բագրատունին նշանակեցին հայկական իշխանութեան գլուխ, իսկ Վահանը՝ սպարապետ: Հայ կառավարութեան մայրաքաղաքն եղաւ մարզպաններուն նստած քաղաքը, Դուլին (Մասիսի մօտերը):

Պերոզ իսկոյն հրամայեց Ասորվչնասպ մարզպանին՝ մեծ զօրքով երթալ Հայերու վրայ: Անոր միացան



Վահան Մամիկոնեան

Գաղիչոյ և Գարջոյ խոտաբուծութեան, Գեղիսն Սիւնի և ուրիշ ուրացող իշխաններ: Թէեւ Վահան գետ չէր կրցած 400է աւելի զօրք ժողովել, բայց այդքան քիչ մարդերով ինկաւ Պարսից 7000 զօրքին վրայ, Մասիսի ստորոտները, ջարդել տուաւ ու փախցուց: Ատրվչնասպ մարդպանն ալ սպաննուեցաւ այդ կռիւին մէջ: Յաջորդ տարին ահագին զօրքով Վահանի վրայ քալեց Ատրներսէն պարսիկ զօրավարը: Վահան իր բուռ մը կտրիճներով անոր ալ լաւ ջարդ մը տուաւ Արտաղ գաւառին մէջ, Աւարայրի դաշտին մօտերը: Եկաւ Միհրան պարսիկ զօրավարը, եկան և ուրիշները, բայց Վահան չորս տարի չարուհակ իր քանի մը տաճնակ հերոսներով ամէնուն ալ դիմադրեց, ամէնքն ալ ջախջախեց:

Այդ ատենները (484) սպաննուեցաւ դաժան Պերոզը և գահը նստաւ եղբայրը՝ Վաղարշ, որ շատ խաղաղասէր մարդ էր: Վաղարշակ տնանելով Հայերու կատաղի դիմադրութիւնը և իրրեւ խաղաղասէր, Նիխոր զօրասպետը զրկեց Վահանի քով հաշտութիւն կնքելու: Վահան երեք պայման առաջարկեց հաշտութեան համար. 1) Դադրեցնել քրիստոնէութեան դէմ եղած հալածանքը. 2) Պաշտօն չտալ անարժան, ուրացող և դաւաճան մարդոց. 3) Թագաւորը նկատողութեան չառնէ զրպարտութիւնները և մատնութիւնները, այլ լաւ մը քննութիւն կատարէ և այնպէս դործ տեսնէ:

Նիխոր ընդունեց Վահանի այս երեք պայմաններն ալ և ներկայացուց Վաղարշ թագաւորին: Թագաւորը ուրախութեամբ հաւանեցաւ և Հայաստան խաղաղեցաւ: Քանի մը ամիս ետք, թագաւորը Հայաստանի մարդպան կարգեց Վահանը, որով Հայերը խիստ ուրախացան:

Վաղարշի մահէն ետք, Պարսից գահը ելաւ Պերոզի որդին, Կաւառ: Այս թագաւորը ջնջեց իր հօրեղբոր

տուած արտօնութիւնները և կրկին մոգեր ուղարկեց, կրակատուներ շինեց Հայաստանի մէջ: Վահան զայրացաւ, զէնք առաւ և կոտորելով զօրքն ու մոգերը, վտարեց Հայաստանէն: Կաւառ կ'ուզէր նոր զօրք զրկել, բայց ինքը դանձնկէց եղաւ իր հակառակորդ Պարսիկներուն կողմէ: Վահան 25 տարի խաղաղութեամբ կառավարեց մեր երկիրը:

ԳԱՍ 29.— ՄԱՐԶՊԱՆՆԵՐ, ԳԱՅԼ ՎԱՀԱՆ ԵՒ ՍՄԲԱՏ. ԿԻՒՐԱՊԱՂԱՏՆԵՐ

Վահանի մահէն յետոյ, Պարսիկները կառավարեցին Հայաստանը հայ մարդպաններով կամ կուսակալներով: Նշանակուեցան նաեւ չորս պարսիկ մարդպաններ, բայց անոնք ալ խաղաղ մարդիկ էին, բացի Սուրէն անուն մէկէն որ դարձեալ կրօնական հալածանք հանեց Հայերու դէմ: Հայերը Վարդան Բ. Մամիկոնեանի առաջնորդութեան տակ մանելով, յարձակեցան Սուրէնի ու անոր մոգերուն վրայ. կոտորեցին զօրքն ու մոգերը. սպանեցին Սուրէնը և քանդեցին ատուշանները:

Հայ մարդպաններէն նշանաւորներն էին Վահանէ կրտսեր եղբայրը, Վահէն, յետոյ Մովսէս Գնունին, Սըմբատ Բագրատունի Բագմայաղթը, Դաւիթ Սահառունին, և այլն:

Պարսից խոտով Բ. Թագաւորը 140,000 զօրքով Յոյներուն դէմ պատերազմի պացած ատեն, հրաման տուաւ Տարօնի տէր Մուշեղ Մամիկոնեանին որ իր զօրքով ինքն ալ քալէ Յոյներու վրայ: Մուշեղ չլսեց

Թագաւորին հրամանը, բոլորեալ չուզեց թշնամանալ Յոններուն հետ: Երբ Խոսրով վերջացուց Յոններու դէմ պատերազմը և վերադարձաւ իր երկիրը, 30,000



Մուշեղ Մամիկոնեան

զօրք տուաւ իր քեռորդի Միհրանին և զրկեց Տարօնի վրայ: Մուշեղ Պարսիկներու դէմ զրկեց իր ազգական Վահան Մամիկոնեանը, որ իր զարմանալի քաջութեան համար կը կոչուէր Գայլ Վահան:

Վահան խորամանկութեամբ բարեկամ ձեւացաւ Միհրանի և անկէ առնելով 4000 հոգի, կոտորել տուաւ

Հայերու ձեռքով: Երկրորդ անգամ կոտորել տուաւ 2000 պարսիկ զօրք, երրորդ անգամ 1000, չորրորդ անգամ՝ կրկին 1000: Այս ամէնը այնպիսի ճարպիկութեամբ և արագութեամբ կը կատարէր որ, Պարսիկները չէին հասկնար իր խորամանկութիւնը: Գիշեր մըն ալ խնջոյքի առտեն, սպաննեց Միհրանն ու անոր օգնական պարսիկ իշխանները:

Այդ ատենները մեռաւ Մուշեղ և Տարօնի իշխան եղաւ Գայլ Վահան: Վահան 28,000 հոգիէ ընտիր բանակ մը կազմեց և սպասեց պարսիկ յարձակումներուն:

Խոսրով Բ. անոր դէմ զրկեց իր Վախթանգ զօրապետը: Վախթանգ նախ 4000 մարդ զրկեց Վահանի վրայ: Վահան իր զաւակին՝ Սմբատի հետ ելաւ Պարսիկներուն դէմ, պաշարեց 4000 պարսիկ զօրքը և այնպիսի ջարդ մը տուաւ որ, հազիւ 50 հոգի ազատեցան: Յետոյ եկան 5000 հոգի. Վահան և Սմբատ ասոնց ալ լաւ ջարդ մը տուին: Գայլ Վահան մեռաւ 90 տարեկան հասակին մէջ



Գայլ Վահան

և տեղը բռնեց կտրիճ Սմբատը: Վախթանգ քաղեց ա-
նոր վրայ, բայց Սմբատ 10,000 զօրքով դէմ ելաւ,
խորտակեց բանակը և Վախթանգն ալ սպանելով, ըն-
տանիքը դերի տարաւ:

Պարսկաստանը սաստիկ տկարացած էր: Երկրի մո-
զերն ու իշխանները ծանր հարկերով կը հարստանա-
րէին ժողովուրդը: Աղքատ ու աւուր հացի կարօտ ժո-
ղովուրդը այլ ևս սիրտ չունէր կռուելու հայրենիքի թըշ-
նամբներուն դէմ: Երկրի իշխաններն ալ իրարու դէմ
կը կռուէին:

Անոնց այդ տկարութենէն օգտուեցան Յոյները.
գրաւեցին պարսկահայ նահանգներու մէկ մասը և Դա-
ւիթ Սահառունին նշանակեցին Հայերու կառավարիչ
կամ Կիւրապաղաս:

Սակայն միայն Պարսկաստանը չէր քայքայուած:
Յունաստանն ալ տկարացած էր: Բ.է 630 տարի ետքը
երեւան եկած էր նոր և հզօր պետութիւն մը—Արաբականը:

Արաբներն ընդունելով Մահմէտի կրօնը և միանալով,
Արաբիոյ մէջ հզօր պետութիւն մը հիմնեցին և յետոյ
անկէ ելլելով, տիրեցին Միջագետքի, Ասորիքի և խու-
ժեցին Պարսկաստան: Պարսկաստանին տիրելէ ետք,
640ին Ապաիւրահման զօրավարը 18,000 արաբ զին-
ուորներով մտաւ Հայաստան: Անոր դէմ ելաւ Տիրան
Մամիկոնեան հայ իշխանը (Գայլ Վահանի թոռնորդին)
իր զօրքերով: Արաբները աւերեցին շատ գիւղեր ու
քաղաքներ. գրաւեցին Դուին մայրաքաղաքը, մեծ կո-
տորած ըրին և 35,000 հայ զերի տարին:

Այսպէս Արշակունիներու անկումէն յետոյ, Հայաս-
տան 200 տարի մնաց Պարսիկներուն ձեռքը: Այդ ա-
տենները երբեմն մեր ամբողջ երկիրը կ'իյնար Յոյներու
իշխանութեան տակ, երբեմն ալ քանի մը դա-

ւառներ կը մնային Յոյներու ձեռքը: Պարսիկները կ'ու-
զէին կրակապաշտ ընել Հայերը, իսկ Յոյները կ'ուզէին
իրենց կրօնին դարձնել: Երկու կողմն ալ կրօնական հա-
լածանք հանած էր Հայերուն դէմ: Վերջապէս Արաբ-
ները եկան, գրաւեցին Հայաստանը և նոր ու կատաղի
հալածանք հանեցին Հայերուն դէմ:

ԴԱՍ 30. — Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ա Ր Ա Ւ Ն Ե Ր ՈՒ

Ի ՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Արշակունիներու թագաւորութեան անկումէն յետոյ,
Հայաստանի արեւելեան մեծ մասը Պարսիկներուն ձեռ-
քը մնաց, իսկ արեւմտեան փոքր մասը Յոյներուն ձեռ-
քը ինկաւ: Յոյներն ու Պարսիկները անդադար պա-
տերազմներ կը մղէին իրարու դէմ, որպէս զի գրաւեն
մեր ամբողջ երկիրը: Բոլոր պատերազմներն ալ Հա-
յաստանի մէջ կ'ըլլային. այդ պատճառով հայ ժողո-
վուրդն էր որ միշտ կը վնասուէր, կ'աղքատանար ու
կը կոտորուէր:

Երբ Արաբները տիրեցին Պարսկաստանի և Պար-
սիկները դարձուցին մահմէտական, արեւելեան Հայաս-
տանը, որ առաջ Պարսիկներուն իշխանութեան տակ
էր, ինկաւ Արաբներուն ձեռքը:

Բայց Յոյները չէին ուզեր որ Արաբները տիրեն
Հայաստանի պէս ամուր երկրի մը և անկէ ալ մտնեն
իրենց հողերը — Փոքր Ասիա կամ Անատոլու: Այդ
պատճառով, ինչպէս առաջ Պարսիկներուն դէմ, այժմ
ալ Արաբներու դէմ սկսան պատերազմներ մղել: Այդ

պատերազմներն ալ տեղի կ'ունենային Հայաստանի մէջ, և նորէն Հայն էր ջարդուողը, աղքատացողը: Յոյնը կուգար և կը պահանջէր որ հայ իշխաններն ու ժողովուրդը իրեն հարկ տան. ո՛վ որ չհնազանդէր, կը կոտորէին, կը կողոպտէին: Երբ յոյն զօրքը կ'երթար, կուգար Արարը և կը պահանջէր որ իրեն հարկ տան, իրեն հնազանդէին: Այսպէս Հայը 200 տարի մնաց Յոյնի և Պարսիկի կրակին մէջ, 200 տարի ալ Յոյնի ու Արարի կրակներուն միջև:

Արաքներու տիրապետութիւնը աւելի գէշ եղաւ քան Պարսիկներունը: Արար խալիֆաները կը նշանակէին մեր երկրին համար կառավարիչ մը, որ կը կոչուէր Ռասիլան, ինչպէս Պարսիկներու դրած կառավարիչը կ'ըսուէր մարզպան, Յոյներու դրածը՝ կիւրաղասպա: Այդ ուտիկաններէն մէկ քանին սոսկալի արիւնհեղութիւններ գործեցին Հայաստանի մէջ: Անոնք կոտորեցին էն նշանաւոր հայ հոգեւորականները և, մանաւանդ, հայ իշխանները: Անոնք կ'ուզէին բոլորովին ջնջել հայ իշխանները, որպէս զի ժողովուրդը մնայ առանց գլխաւորներու և չապստամբի Արաքներու դէմ:

Արաք ոստիկաններու ամէնէն գաղան և խստասիրտներն էին Կաշմ և Բուղա: Կաշմ խաբէութիւնով կը հրաւիրէ բոլոր երեւելի հայ իշխանները Նախիջևան քաղաքը, կը ժողովէ զանոնք այդ քաղաքի եկեղեցիին մէջ և, փայտ շարել տալով ամէն կողմէն, կը հրկիզէ (704): Յետոյ իր արաք զօրքերը կը ղրկէ Հայաստանի գաւառները և կը հրամայէ կողոպտել ու կոտորել ամէն հանդիպած հայ գիւղերն ու քաղաքները: Հայ ժողովուրդը, առանց իշխաններու մնացած ըլլալով, չի կրնար դիմադրել: Միեւնոյն ատեն բազմաթիւ Հայեր ալ գերի բռնելով, կը ղրկէ Արաքներու մայրաքաղաքը, Դամասկոս:

Երկրորդ գաղան ոստիկանն էր Բուղա (850): Ասիկա եղաւ կատարեալ պատուհաս մը Հայերու համար: Թոյր գաւառները զօրք ղրկեց, որոնք արիւնով ծածկեցին գիւղերն ու քաղաքները, դաշտերն ու ձորերը: Կը մանէին և կ'այրէին գիւղերն ու քաղաքները. սուրէ կ'անցնէին բնակիչները: Փախստականներու ետեւէն կ'իյնային և կը կոտորէին: Տասնեակ հազարներով Հայեր կը կապէին և գերի կը ղրկէին դէպի Դամասկոս: Այդ գերիներու մեծ մասը ճամբան կը կոտորէին և տանջանքներով կը մեռցնէին:

Ոստիկանները ամէնքն ալ այդպէս գաղան չէին. գտնուեցան լաւեր ալ, որոնց իշխանութեան օրով Հայերը ազատ էին խիստ հալածանքներէ:

Արաքները Հայերը չէին նեղեր կրօնի պատճառով, քայց սոսկալի տուրքեր կ'առնէին. այնպէս որ ժողովուրդը խիստ աղքատ վիճակի մը մէջ էր անոնց օրով: Անոնք դիտումով այդպէս խեղճ կը պահէին ժողովուրդը և կը ճգնէին ոչնչացնել անոր իշխանները, որպէս զի Հայը չկարենար ապստամբիլ իրենց դէմ:

Արաքներու զօրութիւնը երկար չտեւեց: Անոնք այնքան չափ երկիրներ գրաւեցին և իրենց թագաւորութիւնը այնքան մեծցաւ, որ այլևս անկարելի եղաւ մէկ թագաւորով մը կամ խալիֆայով մը կառավարել: Նուաճուած երկիրներն սկսան ապստամբիլ: Արաք զօրավարները, ոստիկաններն ու ամիրաները իրարու դէմ պատերազմի ելան. ամէն մէկը կ'ուզէր ինքը խալիֆա ըլլալ: Այսպէսով տկարացաւ արաքական հզօր պետութիւնը: Հայ իշխաններն ալ օգտուեցան Արաքներու թուլութենէն և կամաց կամաց զօրանալով, հիմնեցին անկախ իշխանութիւններ և թագաւորութիւններ: Նոր կազմուած թագաւորութիւններու ամէնէն ուժեղն ու նշանաւորն էր Բագրատունիներու թագաւորութիւնը՝ Անի մայրաքաղաքով, յետոյ Արծրունեացը՝ Վան մայրաքաղաքով:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐՈՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

ԴԱՍ 31. — ԱՇՈՏ Ա.

Արաքներու տիրապետութեան ստան կային չորս մեծ նախարարութիւններ Հայաստանի մէջ, — Սիւնեաց,



ԱՇՈՏ Բագրատունի

րու զլիւսուն թագ զնելու կամ թագաւոր պսակելու պաշտօն ունէին, ատոր համար կը կոչուէին քաղաքի

Արծրունեաց, Մալիկոն եանց և Բագրատունեաց տանու-տիրութիւնները: Ամէնէն հարուստը Բագրատունիներն էին Արաքներու օրով: Բագրատունիները շատ հին տոհմ էին: Կ'ըսեն թէ անոնք հըրէական ծագում ունէին: Արշակունիներու [օրով] անոնք Հայոց թագաւորնե-

ապէս: Այդ բարձր պաշտօնը կ'անցնէր անոնց տոհմին մէջ որդիէ որդի:

Արաքներու օրով Բագրատունիները դրամով ու զէնքով ձեռք էին բերած շատ մը երկիրներ, այնպէս որ անոնց բոլոր հողերը միասին՝ կրնային կազմել բաւական մեծ պետութիւն մը: Իրենց ժողովուրդէն կրնային հանել 40,000 զինուոր, ամէնքն ալ լաւ զինուած:

Բագրատունիները շատ զգոյշ և խորագէտ իշխաններ եղան: Անոնք բռնեցին Արաքներու կողմը, միշտ անոնց հետ բարեկամ մնացին, մեծագումար կաշառքներ տուին անոնց ամիրաներուն և խալիֆաներուն: Իրենցմէ մէկը, Սմբատ, անցաւ Արաքներու կողմը, երբ հայ իշխանները միացան Սեւաստ անուն պարսիկ իշխանի մը հետ և ապստամբեցան Արաքներու դէմ: Սըմբատ զաւաճանեց հայ ժողովուրդին, անցաւ Արաքներու կողմը և պատճառ եղաւ շատ մը Հայերու կոտորուելուն: Սակայն Բուղա ոսափկանը անոր ալ չինայեց միւս հայ երեւելիներուն հետ գերի տարաւ Գամասկոս: Հոն Սմբատն ալ բանտ նետեցին և ստիպեցին ուրանալ իր կրօնը, դառնալ մահմետական, բայց Սմբատ չուրացաւ և սպաննուեցաւ Արաքներէն բանտի մէջ՝ մեծ տանջանքներով: Ատոր համար մահէն վերջ զայն կոչեցին Սմբատ Խոսովանոյ, այսինքն իր մեղքերը քաւող և կրօնի համար նահատակուած:

Միայն Սմբատն էր որ ժամանակ մը դաւաճանեց հայկական շահերուն. միւս Բագրատունիները ամէնքն ալ կտրիճ և ազգասէր իշխաններ են եղած, բայց զգուշաւոր և խորամանկ: Անոնք Արաքներէն ստացան հայաստանի զօրքին սպարապետութիւնը կամ հրամատարութիւնը:

Երբ Բուդա ոստիկանը քարուքանդ ըրաւ Հայաստանը և տաանեակ հազարաւոր դերիներով մեկնեցաւ Պաղտատ, Հայերու վրայ նշանակեց նոր ոստիկան մը: Այդ ատեն սպարապետ էր Սմբատ Խոստովանողի որդին, Աշոտ Բագրատունին: Աշոտ չյուսահատեցաւ իր հօրը դառն մահէն, այլ մեծ եռանդով աշխատեցաւ օգնել հայ ժողովուրդին, յինել Բուդայի քանդած և այրած գիւղերը, քաղաքներն ու վանքերը, խաղաղեցնել երկիրը, մաքրել աւազակները: Միւսնոյն ատեն Աշոտ շարունակեց իր հաւատարիմ ծառայութիւնը չապակեցնել Արաքներու հանդէպ: Մէկ կողմէն հայ ժողովուրդի սիրելին եղաւ, միւս կողմէն մեծ յարգանքներ վայելեց Պաղտատի ամիրապետէն կամ խալիֆայէն, որ այդ ատեն կը կոչուէր Մահմուտ-Ճաֆր: Ամիրապետը այնքան սիրեց զայն որ, Իշխանաց Իշխան պատուանունը տուաւ անոր 859 թուականին:

Աշոտ մեծ ընծաներ զրկեց Պաղտատ և խնդրեց ազատ թողուլ Բուդայի տարած հայ գերիները: Ամիրապետը լսեց անոր խնդիրը: Հայ իշխանները ազատուեցան և վերադարձան իրենց երկիրները: Աշոտ իր աղջիկներէն մէկը կնութեան տուաւ Սիւնեաց իշխանին, միւսը՝ Արծրունեաց տանուտէրին: Այսպիսով իրեն հետ կապեց երկու ամէնէն զօրաւոր հայ իշխանական տունները: Իսկ ժողովուրդը արդէն շատ կը սիրէր զինքը:

Այն ատեն, երբ Հայաստան խաղաղ կը զարգանար Աշոտի ուժին և խոհեմութեան շնորհիւ, Պարսկաստանի մէջ մեծ խռովութիւն կը տիրէր: Արաքներու Խալիֆային թուլութենէն օգտուելով, Ճահապ պարսիկ իշխանը 80,000 զօրքով կ'ապստամբէր Խալիֆային դէմ և կը մտնէ Հայաստան: Աշոտ անոր դէմ կը զրկէ իր եղբայրը—Աբաս սպարապետը: Երասխի ափերուն վրայ հա-

յերը լաւ մը կը ջարդեն պարսիկ զօրքը և կը փախցընեն: Խալիֆան, տեսնելով Աշոտի քաջութիւնն ու հաւատարմութիւնը, կը խորհի:

«Եթէ ես անոր թագ չտամ և թագաւոր չընեմ, այնքան ուժ ունի որ, ինքը պիտի ապստամբի և թագաւոր պիտի դառնայ»:

Այսպէս մտածելով, Պաղտատի խալիֆան Աշոտին զրկեց թագաւորական թագ, թուր և զէնքանք: Անի քաղաքին մէջ Գէորդ կաթողիկոսը փառայեղ հանդէսներով թագաւոր օծեց զայն 860ին: Երբ այդ լուրը հասաւ Բիւզանդիոն, Յոյներու Վասիլ Արչակունի կայսրը, ուղելով բարեկամ մնալ հայ թագաւորին և Հայերու սիրտը գրաւել, իր կողմէն ալ մեծ ընծաներ և թագ զրկեց Աշոտին:

Աշոտ իր աթոռը հաստատեց Ախուրեան գետի ափը գտնուող Բագարան քաղաքին մէջ, իր պետութեան մէջ վերահաստատեց Արչակունիներու օրով եղած կարգերը, մեծ հոգ տարաւ երկրագործութիւնը և վաճառականութիւնը ծաղկեցնելու համար: Ինքը անձամբ պտտեցաւ իր երկիրը, տեսաւ ժողովուրդին ցուերը և աշխատեցաւ դարմանել: Յետոյ գնաց Կ. Պոլիս, այցելեց Լիւոն կայսեր, առեւտրական և բարեկամական դաշինք կապեց անոր հետ: Վերադարձին դեռ իր մայրաքաղաքը չհասած, մեռաւ:

Այսպէսով Հայերը ունեցան իրենց թագաւորութիւնը, բայց այդ թագաւորութիւնը բոլորովին անկախ չէր, այլ հարկ պիտի տար Պաղտատի Խալիֆային: Բագրատունիները թագաւոր էին իրենց հողերուն վրայ և կը հրամայէին հայ նախարարներուն, բայց Դուինի մէջ կը նստէր նաև արաբ Ոստիկանը, որ մօտէն կը հսկէր հայ թագաւորին և իշխաններուն վրայ, որպէս զի չըլլայ թէ անոնք միանան Յոյներու հետ և փրսս հասցնեն խալիֆային:

ԴԱՍ 32. — ԱՇՈՏ ԱՒ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Աշոտ Ա. ի յաջորդեց իր որդին, Ամբաս: Սակայն Պարսիկներու, Յոյներու և Արաբներու 400 տարուան տիրապետութիւնը փճացուցած էր հայ իշխանները. անոնք կորսնցուցեր էին միարան գործելու հոգին. իւրաքանչիւրը կ'ուզէր ինք թագաւոր ըլլալ, միանալով արաբ ոստիկաններուն և անոնց ծառայ դառնալով: Ատկէ զատ, Հայերու մէջ սովորութիւն էր որ հօր զահը կ'անցնէր մեծ որդին, իսկ Արաբներու մէջ զահը կ'անցնէր թագաւորական տոհմի մէջ ամէնէն երէցին: Այնպէս որ Արաբները յաճախ կ'օգնէին ոչ թէ Հայոց սովորութեան համեմատ օրինաւոր թագաւորին, այլ իրենց հասկցած ձեւով—տոհմի մէջ ամէնէն հասակաւոր կամ աւագ տնօրէնին: Ատկէ կը ծագէին անվերջ պատերազմներ հայ իշխաններու միջև՝ զահ բարձրանալու համար:

Սմբատ երբ թագաւոր եղաւ, իսկոյն անոր դէմ ելաւ հօրեղբայրը—Աբաս սպարապետը: Աբաս քանի մը հայ իշխաններու հետ միացած, ապստամբեցաւ Սմբատի դէմ և ինքը ուզեց թագաւոր ըլլալ: Սմբատ վրայ հասաւ, յաղթեց և զերի բռնեց հօրեղբայրը:

Սմբատ վերանորոգեց հօր զաշնագիրը Լեւոն կայսեր հետ, Արաբները կասկածեցան: Աւելին ոստիկանը մեծ զօրքով մտաւ Սմբատի երկիրը: Սմբատ պատրաստ էր պատերազմի, բայց Ոստիկանը, վախնալով անոր ուժէն, քաշուեցաւ գնաց: Սմբատ սկսաւ Հայաստանի անկախ մնացած մասերն ալ իր ձեռքն առնել: Աւելին ոստիկանը կրկին զօրք առաւ և եկաւ Սմբատի վրայ, բայց լաւ ջարդ մը ուտելով, փախաւ: Այն ատեն Արաբները օգ-

նեցին Արծրունեաց փառասէր իշխաններուն և Արծրունիները իրենց հաշանգին մէջ առանձին թագաւորութիւն մը հիմնեցին (908): Ատով տկարացաւ Բագրատունիներու ուժը:

Սմբատի յաջորդեց երէց որդին—Աշոտ Բ., որ իր քաջութեան պատճառով կը կոչուի Երկաթ: Աշոտ Երկաթ կատաղի պատերազմներ մղեց հայ ապստամբ նախարարներու և եղևուֆ արաբ ոստիկանին դէմ. ամէնուն ալ յաղթեց, բայց երկիրը աւերակ դարձաւ և ժողովուրդը թշուառութեան մատնուեցաւ:

Աշոտի մահէն ետք, թագաւոր եղաւ եղբայրը—Աբաս, որ Կարս փոխադրեց իր ախոռը և խիստ ամբացուց զայն: Հոն չինեց Առաքելոյ փառաւոր եկեղեցին, որ մինչև այսօր ալ կանգուն է, բայց Ռուսերու զինուորական տաճար է դարձած: Սմբատի կառավարութիւնը շատ խաղաղ անցաւ. հայ ժողովուրդը քիչ մը շունչ առաւ, ծաղկեցաւ:

Աբաս թողուց երկու որդի՝—Աշոտ և Մուշեղ: Աշոտ նստաւ հօր զահը, բայց եղբայրը չուզեց հնազանդիլ անոր. իր ընկերներուն և կողմնակիցներու հետ միացած, ապստամբեցաւ անոր դէմ և առանձին թագաւորութիւն մը հիմնեց Վանանդ զաւառին մէջ, մայրաքաղաք հռչակելով Կարսը իր ամուր բերդերով (968):

Աշոտ Գ. որ իր աթոռը հաստատած էր Շիրակ զաւառի Սնի քաղաքին մէջ, տեսնելով Արծրունիներու և իր եղբոր առանձին թագաւորութիւնները, չուզեց հետեւիլ իր հօր ու հօրեղբոր ուղղութեան: Տեսաւ որ Նիրքին պատերազմները կը քանդեն Հայերու տունը, կը տկարացնեն անոնց ուժը. տեսաւ նոյնպէս որ Արաբները դիտամբ հայ մանրիկ թագաւորութիւններ կը

հիմնեն և իրարու դէմ կը հանեն: Ուստի այլ ևս չուզեց ամէնքն ալ նուաճել պատերազմով, հանգիստ թողուց զանոնք և ինքն ալ նուիրուեցաւ հայրենի հողերու վրայ ապրող խեղճ ժողովուրդին վիճակը բարելաւելու: Վերանորոգեց քանդուած գիւղերն ու քաղաքները, շինեց



Ասոս Ողորմածի յաղրական կամարը

բազմաթիւ եկեղեցիներ, հիւանդանոցներ, անկեղանոցներ, որբանոցներ և անոնց նուիրեց մեծամեծ կալուածներ, որպէս զի մշտական եկամուտներ ունենան: Հոգ տարաւ աղքատներուն: Կ'ըսեն որ Աշոտ երէք սեղան չէր նըս-

տեր մինակը, այլ միշտ քանի մը աղքատներ ու մուրացիկներ կը կանչէր մասնակցելու իր ճաշին: Այդ պատճառով ալ կոչուեցաւ Աշոտ Ողորմած:

Աշոտ խելացի մարդ էր. չատ լաւ գիտէր թէ միայն բարի գործեր կատարելով անկարելի էր ապրիլ այն ատենը. թշնամիները չատ էին և զօրաւոր: Ուստի նորոգեց իր երկրի բերդերն ու ամրոցները, բազմացուց և լաւ սպառազինեց իր զօրքը, որու թիւը հասաւ 90,000ի, թէ հետեւակ և թէ ձիաւոր:

Այդ ատենները արար զօրապետ Համտուն ապրստամբեցաւ Պաղտատի ամիրապետին կամ խալիֆային դէմ. տակն ու վրայ բրաւ Միջագետքը և Ատրպատականը, յետոյ մտաւ Հայաստան: Աշոտ իր զօրքով քալեց անոր վրայ, ջարդեց զօրքը, սպաննեց Համտունը և ապստամբութիւնը խզեց: Ատով Աշոտ թէ իր երկիրն ազատեց և թէ Ամիրապետին բարեկամութիւնը չահեցաւ:

Աշոտ Գ. խաղաղ թագաւորեց 26 տարի և մեռաւ, ձգելով երկու զաւակ, Սմբատ և Գագիկ: Սմբատ թագաւորեց 13 տարի և իր հօր ճամբուն հետեւեցաւ: Ամրացուց իր երկրին սահմանները, զօրացուց Անի մայրաքաղաքը, ուժ տուաւ երկրագործութեան, առևտուրին ու արհեստներուն: Մէկ անգամ միայն ստիպուեցաւ ու պատերազմի ելլել, այն ալ իր հօրեղբոր, Կարսի Մուշեղ թագաւորին դէմ: Պատերազմը երկար չտեւեց. երկու հայ իշխաններն ալ հասկցան իրենց եղբայրասպան պատերազմին անմտութիւնը և հաշտուեցան:

Սմբատ Բ. ին յաջորդեց եղբայրը—Գագիկ Ա. որ եղաւ Բագրատունիներու ամէնէն իմաստուն և մեծագործ թագաւորը (990—1020 թ.): Անոր 30 տարուայ թագաւորութիւնը անցաւ չատ խաղաղ. թշնամիները կը վախճային անոր ուժէն. դրացի հայ թագաւորներն

ու իշխանները միշտ կը վայելէին անոր օգնութիւնները և ամէնքն ալ կը սիրէին զայն: Գազիկ իր ամբողջ ուժը նուիրեց ժողովուրդին զարգացման. բայցաւ շատ մը դպրոցներ, վանքերու մէջ հաւաքել տուաւ բազմաթիւ աշակերտներ և ծաղկեցուց ուսումը, որ այն ատեն միայն կրօնական ոգի ունէր:


Բագրատունիներու այս երեք թագաւորներուն 69 տարուան խաղաղ իշխանութիւնը հանգստութեան չըջան մը եղաւ քայքայուած ու աղքատացած հայ ժողովուրդին համար: Հանգիստ կեանք ունենալով, հայ ազգը քարգաւաճեցաւ ու հարստացաւ. դպրոցները շատցան, արհեստները ծաղկեցան, առեւտուրը մեծ չափերու հասաւ և երկրագործութիւնն այնքան առաջ գնաց որ, բոլոր խոպան հողերն սկսան մշակել:

ԴԱՍ 33.— ԱՆԻ ՔԱՂԱՔԸ

Շիրակ գաւառը և Անի քաղաքը կը պատկանէին Կամսարականներու: Երբ Կամսարականները տկարացան ու աղքատացան, ծախեցին իրենց այդ կալուածը հարուստ Բագրատունիներուն: Աշոտ Բագրատունիի պապը, Աշոտ Մսակեր զնեց Շիրակը և հեռանալով հայրենի Սպեր գաւառէն, եկաւ բնակեցաւ Անի աւանին մէջ: Այնուհետև Անին սկսաւ ծաղկիլ ու մեծնալ և Աշոտ Ողորմածի, Սմբատ Բ. ի և Գազիկ Ա. ի օրով դարձաւ փառաւոր և հսկայ քաղաք մը:

Անին շինուած է բարձր թերակղզիի մը վրայ: Արեւելեան և հարաւային կողմէն խոր ձոր մը կ'անցնի, որու մէջէն կը հոսի Ախուրեան գետը: Արեւմտեան կողմը

կ'երկարի ուրիշ խոր ու ընդարձակ ձոր մը որ կը կոչուի Ծաղկոցաձոր: Անոր մէջէն ալ վտակ մը կը վազէ և կը թափի Ախուրեան գետը: Այդ երկու ձորերն ալ տապառաժուտ են, բայց Ախուրեանի ձորը պարսպաձեւ ժայռեր ունի, այնպէս որ այդ կողմէն պարիսպներ չինելու պէտք



Ա. 61—Մաղասաբերդ

չէ տեսնուեր: Իսկ Ծաղկոցաձորը աւելի անանցանկի ըլլալով, հոն չինուած են զոյգ պարիսպներ:

Քաղաքի հիւսիսակողմն ալ փոքր ձոր մը կայ՝ որ կը կոչուի Գայրաձոր, իսկ մնացած մասը հիւսիսէն բաց է, տափարակ դաշտ մը Ախուրեանէն մինչև Ծաղկոցաձոր: Այդտեղ ալ Բագրատունի թագաւորները չինել տուած են երկու շարք բարձր և հաստ պարիսպներ՝ տաշուած, կարմիր քարերէ: Պարիսպները տեղ-տեղ կը բարձրանան

և կոր ձև առնելով, կը կազմեն աշտարակներ: Աշտարակները ունին բաղմաթիւ մանրիկ պատուհաններ, որոնց մէջէն հայ զինուորները նետեր կ'արձակէին քաղաքը պաշարող թշնամիին վրայ: Այժմ կը տեսնուին 11 մեծ դուռներու հետքեր: Այդ դուռներէն մէկը կը կոչուէր Աւագ Դուռ, միւսը Դունայ Դուռ էայն: Աւագ դրան դէմ, երկրորդ պարսպին վրայ փորագրուած է մեծ առիւծը:

Անին կը կոչուէր «Հազարուամէկ Եկեղեցիներու» քաղաք: Այդ բաղմաթիւ եկեղեցիները չինել են տուած Աշտարակի մէջ, Սըմ-բատ Բ. և Գագիկ Ա.:



Գագիկ Ա.ի առձանը

բերդ, իսկ ատոր ալ ամէնէն բարձր ու անմատչելի մասը, թերակղզիի ժայռուտ ծայրը կը կոչուէր Աղջկանց Բերդ:

Սքանչելի գեղեցկութիւն ունին Մայր Եկեղեցին,

չոտ Ողորմած, Սըմ-բատ Բ. և Գագիկ Ա.: Այժմ կանգուն են պարիսպներու մեծ մասը և քանի մը եկեղեցիներ պալատներ, թանգարան մը, արաբական մզկիթ մը և ուրիշ շէնքեր, բոլորն ալ աւերակ վիճակի մէջ: Քաղաքի հին մասը, որ ուրիշ զոյգ մը պարիսպներով կը բաժնուէր նոր ու ընդարձակ մասէն, կը կոչուէր Միջնա-

Առաքելոց, Լուսաւորչի, Ս. Գրիգոր Ապուղամբեցի եկեղեցիները, որոնք այժմ ալ կէս մը կանգուն են: Կանգուն է նաև Բագրատունիներու փառաւոր պալատը Ծաղկոցաձորի ափին, իսկ անկէ քիչ մը արեւելահաս-սքանչելի թանգարանը: Փրօֆէսոր Մար պեղումներ կատարելով, Միջնաբերդին մէջ գտած է Գագիկ Ա.ի շինել տուած Ս. Լուսաւորչի հոյակապ եկեղեցիին հիմերը, և Գագիկի արձանը:

Թէ Մայր Եկեղեցին և թէ շատ մը ուրիշ շէնքեր կառուցած է Տրդատ անունով ճարտարապետ մը: Անիի շէնքերը չինուած են հայկական ոճով, կը նմանին մաս մը Արաբներու, մաս մըն ալ հին Բիւզանդիոնի շէնքերուն:

ԴԱՍ 34. — ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՍՄԲԱՏ. — ՍԵԼՃՈՒՔԵԱՆ ԱՐՇԱԽԱՆՔԸ. — ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐՈՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ. — ԱՆԻԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Գագիկ Ա. մեռաւ 1020ին և թողուց երկու որդի, Յովհաննէս-Սմբատ և Աշոտ:

Առաջինը թոյլ, վախկոտ և զինուորական գործերու անտեղեակ մէկն էր, երկրորդը՝ կարիճ, ճարտար և հնարամիտ երիտասարդ մը: Բայց թագաւոր եղաւ անդրանիկը, Յովհաննէս-Սմբատ. և այդ օրունէն արդէն հանգիստն ու խաղաղութիւնը անհետացան Հայաստանէն:

Երկու եղբայրներու միջև երկար պատերազմներ ծագեցան զահի համար. շատ արիւն հոսեցաւ, մինչև որ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը և Վրաց Գիորգի թա-

գաւորը հաշտեցուցին երկուքը: Յովհաննէս-Սմբատ թագաւորեց Անիի և չրջականերուն վրայ, իսկ Աշոտ՝ Պարսկաստանի և Վերաստանի սահմանակից նահանգներուն վրայ: Սակայն ատով չվերջացաւ երկու եղբայրներուն կռիւը: Աշոտ քանի մը անգամ դաւեր լարեց իր աւագ եղբոր դէմ, որպէս զի գահը խլէ անոր ձեռքէն, բայց չյաջողեցաւ:

Երբ երկու հայ եղբայրները սկսան իրարու դէմ դաւեր լարել, նոր փորձանք մը ծագեցաւ Հայաստանի զլխուն, ինչպէս 400 տարի առաջ արաբական փորձանքն էր պայթած:

Միջին Ասիոյ տափաստաններէն Սելճուքեան կոչուած թուրք ցեղ մը, նեղուելով իր դրացի ցեղերէն, Հասան պէյի առաջնորդութեամբ փախաւ իր հայրենիքէն և արշաւեց դէպի հարաւ-արեւելք, նոր հայրենիք փնտռելու: Սելճուքները կը գաղթէին իրենց քառանիւ սայլերով, ու տնով-տեղով: Կին ու երախայ, կահ-կարասիներ ու ստացուածք կը լեցնէին այդ սայլերու կամ փայփներուն մէջ. զինուած այր մարդերը սայլերու կարաւանին չորս կողմը պաշարած, իրենց հօտերն ալ մէջերնին առած, կ'երթային նոր երկիրներ: Այս փայփառն ցեղը կը կռուէր կասաղօրէն: Այրերու հետ յաճախ կը կռուէին կիներն ալ:

Սելճուքները կտրեցին անցան ամբողջ Պարսկաստանը և մասն Միջագետք: Պաղտատի ամիրապետները այնքան ուժ չունէին որ դիմադրէին անոնց բարբարոս ու կատաղի խումբերուն: Արաքներու մեծ խալիֆայութիւնը տկարացած, մահուան դուռն էր հասած, երկրին ներսը անվերջ ներքին կռիւներ կը տիրէին:

Հասան կը մեռնի և տեղը կը նստի Տուղրիլ պէյ: Սա իր խառնիճաղանճ գունդերը Միջագետքէն կը նե-

տէ Հայաստանի վրայ: Առաջին հարուածը կը հասնի Վասպուրականի Սենեքերիմ թագաւորին: Տուղրիլ կա-



Տուղրիլ

տաղի ճակատամարտ մը կուտայ Արծրունիներու թագաւորութեան զօրքերուն: Հայերը կը կռուին մեծ քաջութեամբ, բայց կը յաղթուին թշնամիին անհամար ու կատաղի բաղմութենէն: Աւերելով Վասպուրականը, Տուղրիլ կ'անցնի Յովհաննէս-Սմբատի հողերը: Հոս ալ Հայերը մեծ եռանդով կը կռուին, բայց կը յաղթուին: Տուղրիլ հոն ալ աւերածութիւններ ու կողոպուտներ գործելով, կ'անցնի Պարսկաստան:

Արաքներէն խլելով ամբողջ Պարսկաստանը, Տուղրիլ կը վեհականգնէ պարսիկ պետութիւնը և ինքը կ'ըլլայ անոր արքայից-արքան կամ շահին-շահը: Սակայն այլ ևս արեւադաշտ կամ կրակապաշտ չէր նոր Պարսկաստանը, այլ մահմէտական:

Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը կը զգայ որ Սելճուքները նորէն պիտի յարձակին իր երկրին վրայ և այս անգամ պիտի գրաւեն. կը զգայ նոյնպէս որ ինքը չպիտի կրնայ դիմադրել անոնց պէս անարկու դրացիի մը, և կ'առաջարկէ Յոյներու կայսր Վասիլ Բ.ին առնել Վասպուրականը և իրեն տալ Սեբաստիա քաղաքը իր չրջականերով: Կայսրը ուրախութեամբ կը համաձայնի և Սենեքերիմ 1021ին իր ամբողջ տունով, իշխաններով ու զօրքով կը տեղափոխուի հոն:

Այդ միջոցին Յունաց Վասիլ կայսրը մեծ զօրքով կ'արչաւէ Վրաց Գէորգի թագաւորին վրայ: Յովհաննէս-Սմբատ մեծ օգնութիւն էր ընծայած Գէորգիին, ասոր համար սաստիկ կը վախնար Յոյներու յարձակումէն: Անիի թագաւորը, խորհրդակցելով Պետրոս Գետադարձ կաթողիկոսին հետ, թուղթ մը կը գրէ Վասիլ կայսր, որով Անին կը կտակէ Յոյներուն, միայն իր մահէն վերջ, եթէ այժմ կայսրը հանգիստ թողու զինքը: Այդ թուղթը կը կոչուի Յեկիար: Կաթողիկոսը թուղթը կը տանի կայսր. ան ալ կարդալով և իմանալով այդ անակնկալը, կ'ուրախանայ և զօրքը քաշելով, կը հեռանայ Հայոց սահմաններէն:

Կը մեռնի Վասիլ կայսրը և իրեն կը յաջորդէ Կոստանդինը: Աս ալ մահուան անկողնին մէջ իր քով կը հրաւիրէ հայ ծանօթ քահանայ մը՝ որ յարաբերութիւններ ունէր կաթողիկոսարանի հետ և անոր տալով Անիի յետկարը, կ'ըսէ.

— «Տար այս թուղթը, տուր քու թագաւորիդ և ըսէ անոր իմ կողմէն՝ թէ ինչպէս ամէն մահկանացու, ես ալ յաւիտենականութեան սեմին վրայ եմ կայնած և չեմ ուզեր յախշտակել ուրիշի մը սեփականութիւնը. թող ուրեմն ետ առնէ իր թագաւորութիւնը և իր ժառանգին տայ» (1029):

Կիրակոս քահանան կ'առնէ յետկարը, կը պահէ իր քով և հինգ տարի վերջը մեծ գինով կը վաճառէ Միքայէլ Ե. կայսր:

ԴԱՍ 35. — ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԿՈՒՍԱԿՅՈՒ-ԹԻԻՆԵՐԸ. — ԳԱԳԻԿ Բ. — ԱՆԻ ՅՈՅՆԵՐՈՒՆ ԿԸ ՏՐՈՒԻ

Մեռաւ Յովհաննէս-Սմբատը (1040): Քիչ առաջ մեռած էր անոր եղբայր Աշոտը, ձգելով 14 տարեկան մանչ դաւակ մը, Գագիկ: Պետութեան խնամակալ նշանակուեցաւ Վեստ Սարգիս Սիւնին, իսկ զօրքերու սպաքապետն էր Վահրամ Պահլաւունի նախարարը:

Վեստ Սարգիսի ձեռքն էին տէրութեան գանձերն ու բերդերը: Ան ժառամով և խորամանկ մարդ մըն էր և իր չուրջը հաւաքած էր շատ մը կողմնակիցներ: Վեստ Սարգիս կ'ուզէր ինքը թագաւոր ըլլալ, իսկ եթէ չյաջողէր, գո'նէ չէր ուզեր Անին տալ Սկճուքներու, այլ կը ցանկար յանձնել քրիստոնեայ Յոյներուն: Իսկ Վահրամ և իր կուսակիցները կ'ուզէին անպատճառ դահնոսեցնել Աշոտի որդի պատանի Գագիկը և պահպանել հայկական թագաւորութիւնը:

Այս երկու իշխանական կուսակցութիւններն անվերջ կռիւներ և վէճեր ունէին իրարու հետ, երբ Միքայէլ Ե. կայսրը մարդ զրկեց և պահանջեց Անին իր չրջականքով: Հայ իշխանները վայրկեան մը միաբանեցան և մերժեցին Յոյներու պահանջը, բայց կռիւները նորէն ծայր տուին: Կատուեցաւ Միքայէլ կայսրը և մէկ քանի անգամ զօրք զրկեց որ գրաւէն Անին: Իր զրկած չորս բանակներն ալ ինկան, ջարդուեցան ու ցիր ու ցան եղան Վահրամ սպարապետի փոքրիկ բանակին առջև: Վեստ Սարգիս և իր կուսակիցները կորսնցուցին իրենց ուժը. Անիի բնակիչները ոգեւորուեցան և բոլորն ալ անցան Վահրամի կողմը:

Վահրամանները իսկոյն բերել տուին Գագիկը և 1042ին Պետրոս Գետադարձ կաթողիկոսը օծեց զայն Հայոց թագաւոր, Գագիկ Բ. անունով:

Վեստ Սարգիս տեսաւ որ իր ծրագիրը ջուրը ինկաւ: Եւ ահա քաշուեցաւ Անիի միջնաբերդը, դուռները զոցեց և ամրացաւ: Գագիկ մինակը, առանց զօրքի մտաւ խնամակալին բերդը և համոզեց որ հեռանայ: Վեստ Սարգիս քաշուեցաւ և ամրացաւ Մասիսի մօտերը, Սուրմառի բերդը. հետն առած պետութեան զանձները և բերդերու բանալիները, ապստամբեցաւ Հայոց թագաւորին դէմ: Գագիկ քիչ մը զօրք առաւ,



Անիի պաշտպանութիւնը

զաւորն հետն առաւ Վահրամ Պաշլաւունիի եղբորորդին՝ Գրիգոր Մագիստրոսը և քաղեց Սեղծուքներու վրայ, որոնք Հայաստանի քանի մը մասերուն տիրած էին. խորտակեց անոնց ուժը և վտարեց զանոնք իր երկիրներէն:

Սակայն երիտասարդ ու անփորձ թագաւորը չուտով խաբուեցաւ Վեստ Սարգիսի կեղծաւոր լեզուէն, ազատեց զայն բանտէն և դարձուց իր խորհրդականը:

զնաց զրաւեց անոր բերդը, խլեց ձեռքէն արքունի գանձերը, առաւ բերդերու բանալիները, զինքն ալ ձերբակալեց և Անի բերելով, բանտը նետեց: Կտրիճ ու եռանդուն թա-

Ու շատ չանցած, Վեստ Սարգիս թագաւորը զժտեցուց Գրիգոր Մագիստրոսի և միւս Վահրամաններու հետ:

Այս ներքին կռիւներու պահուն, մեռաւ Միքայէլ կայսրը և իրեն յաջորդեց Կոստանդին Մոնոմախոսը: Այս վերջինը նորէն մարդ զրկեց և Անին պահանջեց: Բայց մերժում ստանալով Հայերէն, կայսրը երկու անգամ մեծ բանակներ զրկեց Հայերուն վրայ: Կ'ըսուի թէ Վեստ Սարգիսը ինք նամակով խորհուրդ էր տուած յոյն կայսր՝ այդպէս վարուելու: Գագիկ քաջութեամբ ելաւ Յոյներուն դէմ, երկու անգամ ալ խորտակեց անոնց բանակները:

Մոնոմախոս, Վեստ Սարգիսի խորհուրդով, զիմեց խորամանկութեան, երբ տեսաւ որ չպիտի կրնայ ուժով յաղթել: Հրաւէր զրկեց Գագիկին և խնդրեց զալ Կ. Պոլիս՝ զաշն կապել և մշտական յարաբերութիւն հաստատել: Գագիկ կասկածի մէջ ինկաւ և չէր ուզեր երթալ: Վեստ Սարգիս, Պետրոս Գետադարձ և ասոնց մարդիկը կը խրախուսէին և կը համոզէին թագաւորը որ երթայ: Ի զուր Վահրամանները կը յորդորէին զգոյշ մնալ, չհաւատալ երկրի ներքին ու արտաքին թշնամիներուն: Գագիկ խաբուեցաւ կաթողիկոսի և Վեստ Սարգսեաններու խօսքերէն և զնաց, քաղաքին բանալիները յանձնելով Պետրոս կաթողիկոսին:

Մոնոմախոս նախ շատ մեծ պատիւներով ընդունեց զայն, իսկ յետոյ սկսաւ պահանջել Անին: Երբ Գագիկ մերժեց, այն ատեն կայսրը զայն աքսորեց կղզի մը, և ստիպեց որ հրաժարի իր գահէն: Գագիկ չհրաժարեցաւ: Երբ այդ լուրը հասաւ Անի, իշխանները սկսան խորհրդակցիլ թէ ի՞նչպէս վարուին: Սակայն Պետրոս կաթողիկոս և Վեստ Սարգիսը Անիի 40 բանալիները յանձնեցին Յոյներուն, մեծ կաշառք մը ստանալով կայսրէն:

Երբ Գաղիկ լսեց որ իր իշխաններն ու կաթողիկոսը դա-
ւաճաններ են, յուսահատելով հրաժարեցաւ իր գահէն
1045ին և Անիի փոխարէն ստացաւ Կապադովկիայի Բի-
զու քաղաքը: Հոն ամուսնացաւ Սերաստիոյ Դաւիթ
Արծրունի թագաւորին աղջկան հետ:

Բանալիներն ստանալով, կայսրը խնդրեց մեծ բանակ
մը ղրկեց, որպէս զի երթայ ստանայ իր նոր կալուած-
ները: Սակայն Վահրամանները փակեցին դուռները և
անձնատուր չեղան: Յոյները չկրցան քաղաքը գրաւել.
պաշարումը վերցուցին ու սկսան ետ քաշուիլ: Այդ
պահուն հասաւ Գաղիկի հրաժարման լուրը: Վահրամ-
անները բացին քաղաքին դուռները և հրաւիրեցին հե-
ռացող Յոյները՝ գալ տիրել իրենց փառաւոր մայրաքա-
ղաքին: Այնուհետև Յոյներն սկսան հալածել Հայերը:
Նախ բռնեցին Պատրոս Գետադարձը և կապելով Կ. Պո-
լիս բերին: Բոլոր նշանաւոր հայ իշխանները կա՛մ բան-
տերուն մէջ մեղուցին, կա՛մ դաւաճանօրէն թունաւո-
րեցին, որպէս զի ժողովուրդը միայ առանց առաջնորդ-
ներու: Ժողովուրդին վրայ ալ սաստիկ ծանր հարկեր
դրին: Այս միջոցներով անոնք կ'աշխատէին ոչնչացնել
հայ ազգութիւնը, յունացնել ըրոքը:

ԴԱՍ 36. — ՍԵԼՃՈՒՔՆԵՐՈՒ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ. —

ՀԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԱԽՃԱՆԸ

Տուղրիլ պէյ դարձաւ Պարսից Շահ կամ Սուլթան,
հաստատեց իր գահը, ամրապնդեց և ելաւ աշխարհակա-
լութեան: Լսելով որ Յոյները տիրած են Հայաստանի,
խնդրեց զօրք ղրկեց անոնց դէմ: Եօթը տարի Սելճուք-

եան զօրքը անարգել գրաւեց հայ երկրի մէկ քանի մա-
սերը: Կարճ ատեն մը դիմադրեցին քանի մը բերդա-
քաղաքներ, ինչպէս Սմբատաբերդ, Արծն Էայն, բայց
անոնք ալ ինկան, որովհետև Յոյները ամենեւին չօգնե-
ցին իրենց հաւատարիմ հպատակ Հայերուն:

Սելճուքները աւարի տուին իրենց գրաւած ըրոք
տեղերը, մարդիկը սուրէ անցուցին, գիւղերն ու քա-
ղաքները կրակի տուին ու ինչ որ կրցան՝ կործանեցին:
Երբ քիչ մը մօտեցան յունական հին դաւառներուն, այն
ատեն Յոյները 60,000 զօրքով ելան Սելճուքներու դէմ:
Յոյներուն միացան հայ իշխաններ (Գրիգոր Մագիստրոս)
և վրաց թագաւորը: Բայց Սելճուքները յաղթեցին և
Վրաց թագաւորն ալ գերի տարին:

Այդ ալ բաւական չսեպկելով, Տուղրիլ անձամբ մտաւ
Հայաստան. գրաւեց դեռ ազատ մնացած մասերը և
արիւնով ներկեց ամբողջ երկիրը. սուրը, կողոպտաւ
և կրակը անձարձակ կը տիրէին ամէն կողմ: Կենդանի
մնացածներու մէկ մասն ալ գերի տարուեցան Պարսկաս-
տան: Տուղրիլի դիմադրեց և ազատեցաւ Մանաղկերս
քաղաքը:

Տուղրիլի մահէն ետքը՝ անոր եղբայր՝ Ալփասլանը
քալեց Անիի վրայ. որ մինչ այդ ազատ էր մնացած:
Քաղաքը քաջութեամբ դիմադրեց: Պարսպին մէկ մասը
քիչ մը քանդուեցաւ, բայց դեռ անկարկի էր գրաւել:
Վերջապէս 1064ին առաջին անգամ Անին առնուեցաւ:
Փողոցները և Ախուրեանը ներկուցան բնակիչներու
արիւնով: Թշնամին աւարի տուաւ ամբողջ քաղաքը.
կործանեց հոյակապ չէնքերու մեծ մասը, բնակիչները
թաղելով անոնց փառաւորներուն տակ:

Կարսի Գաղիկ թագաւորը տեսնելով Սելճուքեան
սոսկալի վտանգը, իր երկիրը տուաւ Յոյներուն (1065),

անոնցմէ ստացաւ Փոքր Հայքի Ծմնդաւ բերդը և հոն փոխադրուեցաւ իր ընտանիքով ու զօրքով: Այսպէս վերջացան հայ թագաւորութիւնները:

Երկրորդ անգամ եկաւ Ալիապլան, տիրեց ամբողջ Հայաստանի, գրաւեց Կարսը, Կարինը, Բաքերդը. Սեբաստիան ու Կեսարիան: Յոյները մեծ բանակով եկան անոր դէմ, բայց ջարդուեցան և Ռոմանոս Դիոգէնէս կայսրն ալ զերի ինկաւ: Սելճուքները անցան Յոյներու գաւառները և հասան մինչև Իկոնիա քաղաքը: Հոն հաստատուելով և ամրանալով, դարձան սպառնալիք Յոյներու գլխուն, որովհետև Իկոնիան քանի մը օրուան ճամբայ է Կ. Պոլսէն:

Ալիապլանի որդին, Մելիք-Շահ լաւ վարուեցաւ Հայերուն հետ: Անոր օրով Սելճուքներու իշխանութենէն բաժնուեցաւ մէկ ճիւղ մը, որ իրեն մայրաքաղաք ընտրեց Իկոնիան: Այդ նոր սուլթանութիւնը կոչուեցաւ Ռումի (Հոռոմի, Յոյնի) սուլթանութիւն:

Գագիկ Բ. ալ երկա՛ր տարիներ թափառեցաւ, ուզեց վերստանալ իր կորուսած գահը. բայց անհնար եղաւ: Յոյները սպաննեցին զայն և թաւաւորեցին անոր երկու որդիներն ու մէկ թուը, որով բոլորովին ոչնչացաւ Բագրատունիներու ցեղը:

ՌՈՒԲԻՆԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ



ԴԱՍ 37. — ՀԱՅԵՐՈՒ ԳԱՂԹԸ,

ՌՈՒԲԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Յուսահատած կրակապաշտ Պարսիկներու, կրօնա-մոլ Յոյներու, մահմէտական Արաբներու և բարբարոս Սելճուքներու հալածանքներէն, բաղմաթիւ Հայեր կը հեռանային իրենց երկրէն, կը գաղթէին աւելի ապահով տեղեր: Շատեր գացին դէպի Սև Ծովու ափերը, դէպի Կ. Պոլիս և ուրիշ քաղաքներ, ուր ե՛ւ աւելի հանգըստութիւն կար, ե՛ւ աւելի առևտուր:

Սակայն Արաբներու և մանաւանդ Սելճուքներու կործանարար արշաւանքներու ատեն, բաղմաթիւ Հայեր ալ անցան յունական կայսրութեան երկիրները և հոն բնակութիւն հաստատեցին լեռնոտ և անմերձեկնալի տեղերու մէջ: Կը գաղթէին ոչ միայն հասարակ գիւղացիներ ու քաղաքացիներ, այլ և հայ իշխաններ:

Արաբներու օրով հայ գաղթականները խիստ շատցեր էին Տաւրոսի լեռներու և մանաւանդ անոր մէկ ճիւղին — Ամանոս կամ Սեաւ լեռան վրայ: Հայերն այդ կողմերն այնչափ էին աճեր, որ իրենց թիւով կրնային մրցիլ տեղացի յոյն բնակիչներու հետ: Անոնք հոն չիներ էին բաղմաթիւ վանքեր, ուր հաւաքելով հայ մանուկներ, կարդալ-գրել կը սորվեցնէին: Հետզհետէ այդ վանքերու շուրջ հիմնուեցան հայ գիւղեր, ուր հաստատուեցան հայ իշխաններ, աիրելով չըջակայ հողերուն և բերդերուն:

Բիւզանդիոնի կայսրերը ուրախ էին որ իրենց սահ-

մաններուն վրայ այդ տեսակ մանր իշխանութիւններ կը հիմնուէին, որովհետեւ անոնք այդ սահմանները կը պաշտպանէին արարական և ուրիշ մահմէտական ցեղերու յարձակումներէն:

Հոն հաստատուած հայ իշխաններէն նշանաւոր էին Գող Վասիլ, որ տիրած էր Քեսուռի բերդին, Օշին՝ Արցախէն դադթած, որ խլեր էր Լամբրոնը մահմէտականներէն. անոր եղբայրը՝ Բաղունի որ տիրած էր Տարսն քաղաքին, Ապիրատ, Մովք ամուր գեղեակի իշխանը Եփրատի ափերուն վրայ. վերջապէս՝ Գազիկ Բ. ի ազգական Ռուբէն իշխանը-Գուռմուղէլ ամուր գիւղին տէրը, Բարձր Բերդի չըջանին մէջ:

Ռուբէն հոն հաստատուեցաւ 1080ին: Անոր բնակութեան տեղի դիրքը խիստ ամուր և անառիկ էր, չորս կողմն ալ հոծ հայութիւն մը կար հաստատուած: Շրջակայ Հայերէն բոլորն ալ մտան Ռուբէնի դրօշակին տակ: Ռուբէն մաքրեց այդ կողմերը Յոյներէն և ամրացուց իր իշխանութիւնը: Շրջակայ հայ իշխանները զայն ճանչցան իբրեւ իրենց ղեկաւորը և աւելի ուժ տուին անոր: Տասնեհինգ տարի Ռուբէն իմաստութեամբ իշխեց իր փոքրիկ երկրին և անոր անունով իր իշխանութիւնը կոչուեցաւ Ռուքնիսեանց իշխանութիւն կամ Հարսուրթիւն:

Ռուբէնի որդին, Կոստանդին ալ (1095) Յոյներէն խլեց քանի մը ամուր բերդեր, ընդարձակեց իր երկիրը և աթոռն ալ Գուռմուղէն տեղափոխեց Վանլիս ամուր բերդը:

Կոստանդինի օրով Եւրոպայէն սկսան դէպի արեւելք արշաւել բաղմաթիւ քրիստոնեայ իշխաններ իրենց զօրքերով: Անոնք կուգային մէկ մէկ իսա կապած իրենց թուերուն վրայ և այդ պատճառով կը կոչուէին խաչակիրներ: Այդ ևւրոպացի իշխանները կ'երթային Երուսա-

ղէմը ազատելու մահմէտականներու ձեռքէն: Անոնք եկան, դուրս հանեցին մահմէտականները Պաղեստինէն և Սուրիայէն և հոն հիմնեցին նոր ու քրիստոնեայ իշխանութիւններ: Հայերը այդ նոր իշխանները կ'անուանէին Լաթին, որովհետեւ ամէնքն ալ կաթոլիկ էին:

Կոստանդին այդ Լատիններուն ճամբայ ցուցուց, պաշար ձարեց անոնց համար և շատ օգնեց անոնց՝ մահմէտականներուն դէմ: Անոնք ալ իրեն տուին մարտիկ իշխանական տիտղոսը:

ԴԱՍ 38.—ԿՈՍՏԱՆԴԻՆԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ.—ԼԵՒՈՆ Բ.

Կոստանդինի յաջորդեցին Թորոս Ա., Լեւոն Ա., Թորոս Բ., Մկհ և Ռուբէն Բ. իշխանները, որոնք ընդարձակեցին իրենց իշխանութիւնը: Լեւոնը գրաւելէ և ամրացնելէ ետք, անոնք եկան դաշտային Կիլիկիա և տիրեցին մինչև ծով: Յունական կայսրութիւնն շատ տկարացած էր այդ միջոցին: Մահմէտական Սելճուքները և Արաբներն ալ զօրաւոր չէին. անոնք ունէին բաղմաթիւ մանր իշխանութիւններ, որոնք իրարու դէմ անվերջ կռիւններ կը մղէին: Եւ յետոյ, լատին խաչակիրները հիմներ էին քանի մը քրիստոնեայ իշխանութիւններ, այնպէս որ Ռուբինեանները մեծ երկիւղ հունէին ոչ մահմէտականներէն, ոչ ալ միւսներէն:

Ռուբէն Ա. ի օրէն հազիւ 100 տարի անցած, Հայերը տիրեցին Տաւրոսի լեռներէն մինչև Միջերկրական ծովը տարածուող բաւական ընդարձակ երկրին. հոն չինեցին բաղմաթիւ բերդեր, քաղաքներ և նոյնիսկ նաւահանգիստներ:

1185ին Ռուբինեանց գահը բարձրացաւ Լեւոն Բ., Ռուբէն Բ.ի եղբայրը: Դեռ նոր գահ ելած էր Լեւոն, երբ իրարու ետեւէ Կիլիկիոյ վրայ քաղեցին Իկոնիոյ, Հալէպի (Բերիոյ) և Դամասկոսի մահմէտական սուլթանները: Լեւոն յարձակեցաւ նախ Իկոնիոյ, յետոյ Հալէպի և Դամասկոսի սուլթաններուն վրայ, խորտակեց ու փախցուց անոնց զօրքերը և քանի մը քաղաքներ ալ գրաւելով անոնց երկիրներէն, միացուց Կիլիկիոյ:

Նոյն միջոցին Եւրոպայէն եկած լատին իշխանները ներքին մեծ կռիւներու մէջ էին: Այդ գծաութիւններէն օգտուեցաւ Եգիպտոսի սուլթան Սալահէտտինը, որուն համար կ'ըսեն թէ Հայաստանէ գաղթած Բիւրտ մըն է: Մեծ զօրութիւնով քաղեց Լատիններու վրայ, յաղթեց անոնց և Պաղեստինն ու Երուսաղէմը իւրեց անոնց ձեռքէն (1187):

Յնցուեցան Եւրոպայի քրիստոնեայ իշխանները: Հռոմի պապը խաչակիրներու նոր արշաւանք մը քարոզեց: Քրիստոնեայ զօրքին զլուխ անցաւ Գերմանիոյ Ֆրեաթրիկ Շիկամօրուս (Բարբարոսա) կայսրը: Մօտենալով Կիլիկիոյ սահմաններուն, կայսրը մարդ զրկեց Լեւոնի և օգնութիւն խնդրեց Մահմետականներուն դէմ. փոխաբէն կը խոստանար արքայական թագ: Լեւոն իսկոյն մեծ պաշար զրկեց խաչակիրներուն, ուղեցոյցներ տուաւ անոնց և ինքն ալ իր շքախումբով աճապարեց կայսեր տեսութեան: Կայսրը Կալիկատնոս գետին մէջ լողացած ատեն խնդրուեցաւ և Լեւոն չկրցաւ տեսակցիլ:

Ֆրեաթրիկի մահը պատճառ եղաւ որ Լեւոնի թագաւոր հռչակուի ուշանայ: Անոր յաջորդը, Հէնրիկոս Զ. կայսրը, Հռոմի պապին հետ խորհրդակցելով, Լեւոնին զրկեց արքայական թագ մը և առիւծանշան դրօշ մը:

1198ի Ծնունդին օրը Տարսոնի մայր եկեղեցիին մէջ



Լ. Լեւոն Բ. քաղաւոր

Լեւոն Բ. փառաւոր հանդէսով թագաւոր օծուեցաւ Գրիգոր Զ. կաթողիկոսին ձեռքով: Տարի մը ետքն ալ Բիւզանդիոնի կայսրը թագ զրկեց Լեւոնին և ճանչցաւ Հայերու անկախ թագաւորութիւնը:

Այնուհետեւ Լեւոն իր աթոռը փոխադրեց Սիս ու ամբողջ կարողութիւնը նուիրեց պետութեան բարեկարգման: Ան Բագրատունիներու պէս չփորձեց վերահաստատել Արշակունիներու կարգերը. իր

առջև կային եւրոպական շատ լաւ կարգեր: Ամէն ջանք թափեց իր պետութիւնը նմանցնելու լատին կամ եւրոպական պետութիւններուն: Հրաւիրեց շատ մը անգլիացի, ֆրանսացի, գերմանացի և իտալացի ձեռնհաս անձեր և անոնց պաշտօններ տուաւ իր պալատին, կառավարութեան և զօրքին մէջ: Բացաւ բաղմաթիւ դպրոցներ և անոնց մէջ ուսուցիչ նշանակեց թէ հայ և թէ եւրոպացի կրթուած անձեր: Հիմնեց կանոնաւոր դատարաններ, սահմանեց հարկերու ու տուրքերու չափը: Իր անունով հայերէն դրամ կտրեց: Իբր մարդասէր, բարերար և մեծագործ մարդ, բացաւ աղքատանոցներ, որբանոցներ, անկեղանոցներ, առատ եկամուտներ յառաւ կացնելով անոնց համար:

Լեւոնի մեծագոյն հոգերէն մէկը եղաւ երկրագործութեան, արհեստներու և առեւտուրի զարգացումը:

Իր կրկրի վաճառականութիւնը ծաղկեցնելու համար, մեծ արտօնութիւններ տուաւ Եւրոպայի վաճառականներուն, մանաւանդ ձեռնովացիներուն և վենետիկցիներուն:



Լեւոն Բ.ի դրամներ

Ծաղկեցաւ, հարստացաւ ու զօրացաւ Կիլիկիան Լեւոն Բ.ի 34ամեայ թագաւորութեան օրով:

Լեւոն ունեցաւ շատ մը պատերազմներ թէ մահմետականներու և թէ Սուրիոյ լատին իշխաններուն դէմ, բայց միշտ յաղթող հանդիսացաւ:

Լեւոն Բ. մեռաւ 1219ին: Հայ պատմագիրները անոր տուած են Լեւոն Մեծագործ անունը:

ԴԱՍ 39. — ԶԱՊԷԼ, ՀԵԹՈՒՄ Ա. ԵՒ ԼԵՒՈՆ Գ.

Լեւոն Բ.ի օրով Կիլիկիան սերտ յարաբերութեան մէջ մտաւ արեւմտեան ազգերու հետ, որոնք բոլորն ալ կաթոլիկ էին: Ինչպէս կրակապաշտ կամ արեւապաշտ Պարսիկները և յետոյ Յոյները մեծամեծ հալածանքներ հանեցին Հայերու դէմ, որպէս զի զանոնք զարձնեն իրենց կրօնին, նոյնպէս Լեւոն Բ.ի օրով ու անկէ յետոյ երկա՛ր

ատեն Հռոմի Պապերը ամէն ճիգ թափեցին կաթոլիկ զարձնելու Հայերը: Անոնք միշտ կը խոստանային օգնել



Ռուբինեան ձիաւոր

Հայերուն, խաչակիրներու նոր արշաւանք սկսիլ Հայերու թշնամի մահմետականներուն դէմ, բայց միշտ կը պահանջէին նախ կաթոլիկութիւնն ընդունիլ, ապա յոյս դնել Պապերու վրայ: Եղան հայ թագաւորներ, իշխաններ, կաթոլիկոսներ ու եպիսկոպոսներ, որոնք հակեցան կաթոլիկութեան, միայն թէ փրկէին Կիլիկիան: Բայց տեսնուեցաւ որ Հռոմի Պապն ալ կորսնցուցեր է իր առաջնական ազդեցութիւնը. այլ ևս անոր չէին լսեր կաթոլիկ իշխաններն ու ասպետները:

Այդ միջոցին Հայերու մէջ երեւացին լատին կրօնաւորներ, որոնք ամէն կերպ կ'աշխատէին ոչնչացը-

նել Հայ Եկեղեցին, զայն միացնել կաթոլիկ եկեղեցիին հետ: Ասոր համար անոնք կոչուեցան Ունիթորներ, կամ միացնողներ: Բայց անոնք շատ աննշան յաջողութիւն ունեցան Հայերու մէջ. մինչև այսօր ալ կաթոլիկ Հայերութիւնը շատ նուազ է:

Լեւոն Բ. մանչ զաւակ չունէր, ուստի գահաժառանգ նշանակեց իր դեռահաս աղջիկը, Զապէլը, անոր վրայ խնամակալ դնելով Ատոմ Պայը և Կոստանդին աւագ-պարոնը: Ասոնք ալ ամուսնացուցին Զապէլը Անտիոքի լատին թագաւոր Փիլիպպոսի հետ, առաջուց պայման դնելով որ պիտի օծուի հայ ծէսով, պիտի վարուի հայ սովորութիւններու համեմատ և անաղարտ պիտի պահպանէ Հայ Եկեղեցին: Բայց Փիլիպպոս դաւաճանեց իր խօսքին: Կոստանդին պարոնը անցաւ Հայոց զօրքի և իշխաններու գլուխը, զերի բռնեց ու բանտարկեց Փիլիպպոսը: Մէկ տարի յետոյ ամուսնացուց Զապէլը իր զաւակին, Հեթումի հետ (1226):

Հեթում Ա. թագաւորեց 44 տարի և ամուր ձեռքով պահեց Կիլիկիոյ անկախութիւնը թէ՛ Իկոնիոյ սուլթաններու, թէ՛ նոր երեւան եկած Թաթարներու և թէ՛, մանաւանդ, Եգիպտոսի Մամլուքներուն դէմ: Անոր շատ օգնեցին իր հայրը և Սմբատ եղբայրը, հայ զօրքի սպարապետը, որ կը կոչուէր Գուսասապը:

Այդ միջոցին Թաթարները խիստ զօրացած և տիրած էին Պարսկաստանի: Անոնք դեռ կռապաշտ էին, մահմէտականութիւնը չէին ընդունած: Հեթում թէև Լեւոնի պէս լաւ յարաբերութիւններ պահեց արեւմտեան կաթոլիկ թագաւորներու հետ, բայց գիտէր որ անոնցմէ օգնութիւն յուսալ անկարելի է. ուստի մտերիմ բարեկամութիւն հաստատեց Թաթարներու Մանգոյ խանին հետ, եղաւ նոր դաշնակիցը մահմէտականներու դէմ:

Մամլուքները Եգիպտոսի արաբ սուլթաններու դիւստրներն էին, որ կաղմուած էին ստրուկներէ: Սակայն անոնք ապստամբեցան, գահընկէց ըրին Նախկին սուլթանը և իրենց առաջնորդը նստեցուցին եգիպտական գահը: Այդպէս սկսաւ Մամլուքներու թագաւորութիւնը:

Անոնք եղան Կիլիկիոյ արիւնհարբու հակառակորդները և կործանեցին Կիլիկիան, մանաւանդ երբ Թաթարներն ալ ընդունեցին Մահմէտի կրօնը և Հայերն այլ ևս ոչ մէկ զինակից ունեցան մահմէտական հօր ցեղերու դէմ:

Հեթում Թաթարներու օգնութեամբ յաղթեց Իկոնիոյ Սուլթաններուն և Մամլուքներուն, քանի մը պատերազմներու մէջ:

Իրեն յաջորդեց որդին, Լեւոն Գ., որ բացաւ շատ մը դպրոցներ, հիւանդանոցներ և ուրիշ հիմնարկութիւններ: Օրինակել տուաւ հայ գրականութեան դործերը և բաժնեց երկրի վանքերուն և դպրոցներուն:

Լեւոնի թագաւորութեան սկիզբները հայ իշխանները ապստամբեցան թագաւորին դէմ: Լեւոն խեղ անոնց բերդերը, բայց աղաւթ թողուց զիրենք: Այդ ներքին խառնակութիւններէն օգտուեցաւ Եգիպտոսի սուլթանը. քաղց Կիլիկիոյ վրայ, զրաւեց ու կործանեց Թանը. քաղց Կիլիկիոյ վրայ, զրաւեց ու կործանեց Տարսուսը, բայց ջարդ կերաւ Սիս քաղաքի բնակիչներէն: Լեւոն, որ ապաստանած էր լեռները, իջնելով սկըսաւ հայրաքար խնամել իր ժողովուրդը: Այդ ատեններ ուրիշ չարիքներ ալ պակաս չեղան. թէ՛ ժանտախտ ծագեցաւ և թէ՛ սոսկալի սով մը:

Եգիպտոսի Մամլուքները անգամ մըն ալ քաղեցին Կիլիկիոյ վրայ, բայց այս անգամ Լեւոն և իր ծերունի հօրեղբայրը, Սմբատ Գունատապալը Կիլիկիոյ կիրճերուն

մէջ փակեցին զանոնք և այնպէս սոսկալի ջարդ մը տուին զօրքին որ, գրեթէ ոչ մէկը ողջ մնաց:

Լեւոն անգամ մըն ալ թաթարներու հետ միացած. մտաւ Ասորիք և ջախջախեց Մամուլները: Յետոյ Շ տարի ալ հանգիստ թագաւորեց և մեռաւ 1289ին:

40.— ԶԵԹՈՒՄ Բ. ԵՒ ԻՐ ԵՂԲՍՅՐԵՐԸ. — ԼԵՒՈՆ Գ.

Լեւոն Գ. յաջորդեց իր որդին, Հեթում Բ.: Թագաւորեց 16 տարի, բայց այդ ժամանակին մէջ երեք անգամ վանք քաշուեցաւ, կրօնաւորի կեանք անցուց և իր աթոռը տուաւ նախ իր աւաջին եղբորը, Թորոս Գ.ին: Յետոյ նորէն դահ ելաւ. ապա դահը տուաւ երկրորդ եղբորը, Սմբատին, որու ձեռքէն յափշտակեց կրտսեր եղբայրը, Կոստանդին: Սմբատ բռնեց Հեթումը և կուրացուց. բայց կ'ըսեն թէ հրաշքով բացուեցան աչքերը և ժողովուրդը երրորդ անգամ թագաւորեցուց զայն: Վերջապէս Հեթում անգամ մըն ալ քաշուեցաւ դահէն և թագաւոր օծել տուաւ իր Թորոս եղբոր դաւակը, Լեւոն Գ.: Իսկ ինքը վանք քաշուեցաւ Թագաւորահայր անունով:

Այս տառնեւեց տարուան ներքին խառնակութիւններու և եղբայրասպան կռիւներու պահուն, Կիլիկիոյ վրայ մէկ քանի անգամ արշաւեցին Մամուլները, Սելճուքեան թուրքերը և վերջն ալ թաթարները:

Սկիզբները Հեթում և Սմբատ դաշնակցեցան թաթարներու հետ, քալեցին հօր Մամուլներու վրայ և երկար պատերազմներ մղեցին. բայց չկրցան կոտրել անոնց ուժը և դուրս վանել Ասորիքէն: Իսկ Ղազան

խանի մահէն ետքը (1302), զահ ելաւ Ղարբաղանդը, ընդունեց մահմէտականութիւնը և թաթարները վերջնականապէս թշնամացան Հայերու հետ:



Լեւոն Գ. դաւաւոր

Այն ատեն երեք մահմտական ցեղերը, Սելճուք, Թաթար և Մամուլք, խուժեցին Կիլիկիոյ վրայ, իրարու հետէ դրաւեցին հայաշատ քաղաքներն ու Հոռմկլայ բերդը, կողոպտեցին, աւերեցին, ու գերի վարեցին ոչ միայն ժողովուրդը, այլ և Ստեփաննոս կաթողիկոսը:

Հայերը յոյսերը կտրած թաթարներէն, դիմեցին

Կիպրոսի լատին թագաւորներուն որ իրենց խնամի էին և Յունաց կայսրներուն. բայց ոչ մէկ օգնութիւն ստացան: Ճարահատ, հայ թագաւորները (Հեթում Բ. և Լեւոն Դ.), իրենց հետ ունենալով Գրիգոր Է. Անաւարդեցի կաթողիկոսը, Հռոմին խոստացան Հայոց Եկեղեցին միացնել կաթողիկ եկեղեցիին, եթէ իրենց օգնէին: Պապը խոստացաւ օգնութեան ուղարկել Ֆրանսայէն: Հայոց կաթողիկոսը դաւանութեան թուղթ մը պատրաստեց, որով մեծ փոփոխութիւններ կ'ուզէր ներմուծել Հայ Եկեղեցիի ծէսերուն մէջ, որպէս զի Պապը օգնէ Կիլիկիոյ թագաւորութեան՝ մահմէտականներու դէմ: Գրիգոր Է. մեռաւ, առանց իր ծրագիրը գործադրելու: Լեւոն Դ. մեծ ժողով գումարեց Սիւ մայրաքաղաքին մէջ, հրաւիրելով հայ հոգեւորականները և իշխանները. հոն բռնի ընդունիլ տուաւ կաթողիկոսին թողած դաւանութեան թուղթը, բայց երբ կ'ուզէին այդ ծէսերով արարողութիւն կատարել, ժողովուրդը զայրացաւ և ապստամբեցաւ: Իսկ պապին խոստացած օգնութիւնը երբէք չհասաւ:

Օգտուելով այդ ներքին քաղաքական ու կրօնական խառնակութիւններէն, Թաթարներու Բիլարդու զօրավարը քաղեց Կիլիկիոյ վրայ, բռնեց Հեթում Բ. և Լեւոն Դ. թագաւորները և սպաննեց զանոնք:

ԴԱՍ 41. — ՕՇԻՆ ԵՒ ԼԵՒՈՆ Ե.

Լեւոնի և Հեթումի վրէժը լուծեց Լեւոնի փոքր եղբայրը, Օշին: Ժողովեց արքունի զօրքը, անցաւ հայ բանակին գլուխը և ջախջախելով Թաթարները, դուրս ըրաւ Կիլիկիայէն (1308):

Օշին շինել տուաւ բաղմամբիւ բերդեր և եկեղեցիներ: Նշանաւորներն էին Տարսոն քաղաքի շուրջը քաշած հաստակուռ պարիսպները և նոյն քաղաքի փառաւոր եկեղեցին, որ այսօր մղկիթի է վերածուած:

Օշին ալ կը կարծէր որ եթէ Հայոց Եկեղեցին ընդունի կաթողիկ եկեղեցիի ծէսերը և անոր հետ միանայ, պապերն ու կաթողիկ թագաւորները պիտի օգնեն իրեն: Այդ պատճառով ան ալ, Լեւոն Դ.ի պէս, մեծ ժողով մը գումարեց Ատանայի մէջ, վերաքննութեան ենթարկեց Սիսի ժողովին որոշումները և նորէն ընդունիլ տուաւ: Սակայն անկարելի եղաւ գործադրել այդ նոր որոշումները,

որովհետեւ մեծ խառնակութիւն ելաւ հայ ժողովուրդին մէջ: Թէ՛ պապը, թէ՛ Ֆրանսայի թագաւորը մեծամեծ խոստումներ տուին Օշինին օգնելու Մամլուքներու դէմ, բայց ոչ մէկը ու է օգնութիւն ըրաւ: Օշին ստիպուեցաւ նորէն իր ուժերով մարանչիլ մահմէտական հզօր բանակներու դէմ, մինչև իր մահը (1320):

Իրեն յաջորդեց տաանամեայ որդին, Լեւոն Ե. որու



ԼԵՒՈՆ Ե.

վրայ խնամակալ կարգուեցաւ Օշին իշխանը: Թագաւորի խնամակալը ջերմ պաշտպան էր հայ եկեղեցիի իրաւունքներուն, իսկ Թագաւորի լատին ուղղականները միշտ կ'աշխատէին կործանել Հայ եկեղեցին և կաթողիկոսութիւնն ընդունիլ տալ Հայերուն:

Այդ ներքին կռիւներուն շնորհիւ Կիլիկիան սաստիկ աւարացած էր: Հայերը իրարու դէմ կրօնական կռիւներ կը մղէին: Սահմաններու բերդերը քանդուած էին և վերաշինող չկար: Զօրքը քայքայուած վիճակ մը ունէր, կաղմակերպող, հոգ տանող չկար: Իսկ ատոր հակառակ, մահմէտական իշխանութիւնները սաստիկ զօրացած էին: Մամլուքները տիրեր էին, Եգիպտոսէն զատ, Արաբիոյ, Պաղեստինի և Ասորիքի, մինչև Նփրատ: Բոլորն ալ կ'ուզէին ոչնչացնել հայկական թագաւորութիւնը, որովհետև Ասիոյ մայր ցամաքին վրայ ան միակ քրիստոնեայ պետութիւնն էր որ կրնար օժանդակել Ներսէս պապի քրիստոնեաներուն, մահմէտականներու դէմ պատերազմելու և Սուրբ Նրէկիը անոնց ձեռքէն խլելու համար:

Երբ Մամլուքները լուր տաին թէ Ներսէսները իրաւակիրներու նոր արշաւանք մը կազմելու միտք ունին, իսկոյն դաշն կապեցին Թաթարներու և Իկոնիոյ սուլթանին հետ և ամէն կողմէ խուժեցին Կիլիկիաւաւերեցին հանդիպած զիւղերն ու քաղաքները, կործանեցին բերդերն ու եկեղեցիները, դերի տարին ու կոտորեցին ժողովուրդը: Մինչև իսկ գերեզմաններէն մեռելները հանեցին ու գետերը թափեցին: Ամէնէն զարհուրեցին եղաւ Այսա հարուստ ու վաճառաւոր մեծ քաղաքին կործանումը:

Հայ ժողովուրդը երբ տեսաւ որ իր թագաւորը այդ սոսկալի բոլորներուն անգամ կրօնական խնդիր-

ներով կը զբաղի, ցնցուեցաւ և ինքն սկսաւ իր հայրենիքի փրկութեան մասին մտածել: Կաղմուեցան ժողովրդական զինուած խումբեր, տեղ մը 200 մարդէ, ուրիշ տեղ մը 600 հոգիէ հայն: Այդ կտրիճներու խումբերը դարանի մանելով կիրճերու բերանները, սկըսան զարհուրելի կոտորածներ տալ ասպատակներուն:

Ինքնապաշտպանութեան հայ խումբերը, այնպիսի սարսափ տարածեցին թշնամիներու վրայ որ, Մամլուքները ստիպուեցան 15 տարուան համար հաշտութիւն կնքել Հայերու հետ: Լեւոն Ն. սարսաւոր էր 50,000 ֆիօրին տարեկան տուրք վճարել Եգիպտոսի սուլթանին, ինչպէս և անոր տալ Այսա քաղաքի մաքսի և ծովային ողի եկամուտներուն կէսը: Իսկ սուլթանը պարտաւոր էր Կիլիկիոյ բոլոր բերդերը յանձնել Հայերուն, իր զօրքերը քաշել և Այսա քաղաքն ուրիշ կործանուած բերդերը չլինել իր ծախքով:

Սակայն Լեւոն Ն. դարձեալ սկսաւ զբաղիլ կրօնական խնդիրներով. սպաննել սուլթան իր խնամակալը, հայ իշխանները հեռացուց պաշտօններէ և տեղը դրաւ լատին իշխաններ. սպաննել տուաւ իր կինը, որ Օշինի աղջիկն էր և ամուսնացաւ լատին կնոջ մը հետ: Այս բոլորը տեսնելով, հայ իշխանները և ժողովուրդը երես դարձուցին անկէ: Մամլուքները օգտուեցան Կիլիկիոյ այդ ներքին խառնակութիւններէն և անգամ մըն ալ խուժեցին ներս. անարգել կործանեցին կանգուն մնացած բերդերն ու քաղաքները:

Լեւոն դիմեց Ներսէսներու օգնութեանը: Ֆրանսայի թագաւորը և պապը կրկին խոստացան ոչ միայն օգնել Հայերուն, այլ և Պաղեստինը խլել Մամլուքներէն: Անոնց սպառնալիքներէն կատեցան Եգիպտոսիները: Ֆրանսայի թագաւորը 10,000 ֆիօրին դրամ զըր-

կեց, իսկ պատը քանի մը պարկ ցորեն. այս եղաւ արեւմուտքի օգնութիւնը: Իսկ Եգիպտոսի սուլթանը երկու անգամ արշաւեց Կիլիկիա և իր ամբողջ կատաղութիւնը թափեց Հայերու վրայ:

Լեւոն փախաւ լեռները: Թշնամին այն ատեն միայն ետ քաշուեցաւ, երբ Լեւոն Ե. խաչով ու Աւետարանով երդուեցաւ այլ ևս ուէ կապ չպահել Եւրոպացիներու հետ:

Լեւոն Ե. մեռաւ 1341ին: Զաւակ չունէր և իրմով վերջացաւ Ռուբինեանց Տունը:

ԴԱՍ 42. — ԼՈՒՍԻՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

Լեւոն անգլաւակ մեռնելով, հայկական թագը անցաւ Կիպրոսի Լուսինեան ֆրանսացի թագաւորներուն, որովհետեւ անոնք մօր կողմէ ազգական էին Ռուբինեանց:

Լուսինեան տունէն Կիլիկիան ունեցաւ չորս թագաւոր, Կոստանդին Գ. (1342), Գուխտոն, Կոստանդին Գ. և Լեւոն Զ. (1365-1375):

Ատոնցմէ առաջին երկուքը ամէն միջոց գործադրեցին Հայ Եկեղեցին միացնելու համար կաթողիկ եկեղեցիին. հայրածեցին հայ իշխանները և անոնց տեղը դրին լատին իշխաններ, այնպէս որ բոլոր Հայերը գրգռուեցան իրենց դէմ: Կոստանդին Գ. հաղիւ մէկ տարի թագաւորեց, իսկ Գուխտոն երկու տարի և երկուքն ալ սպաննուեցան հայ իշխաններու ձեռքով:

Կոստանդին Գ. (1345) թագաւորեց 18 տարի: Այս թագաւորը շատ կտրիճ և խելացի մարդ էր, բայց ոչինչ

կրցաւ ընել, որովհետեւ Կիլիկիա բոլորովին ուժանդատ էր եղած ներքին կրօնական ու քաղաքական անվերջ կռիւներէն և մահմէտական հզօր դրացիներու կործանարար յարձակումներէն: Միանալով Կիպրոսի թագաւորին հետ, Կոստանդին երկու անգամ ջախջախեց Մամլուքները և վտարեց Կիլիկիայէն: Անոր յաղթութիւններու շնորհիւ Կիլիկիան քանի մը տարի խաղաղութիւն վայելեց, բայց անոր մահով (1362) մօտեցաւ հայկական անկախութեան քայքայումը:

Կոստանդին Գ. անդաւակ մեռաւ և Կիլիկիոյ գահը երկու տարի թափուր մնաց: Շատերն ուզեցին թագաւորել և ատոր համար ալ պառակտումներ ծագեցան. Կոստանդինի ստեղծած ժամանակաւոր համերաշխութիւնը քայքայուեցաւ: Վերջապէս հայ և լատին իշխանները Կիլիկիոյ գահը տուին Լեւոն Լուսինեան իշխանին, որ Կիպրոսի թագաւորին ազգական էր (1365):

Լեւոն Զ. ի թագաւորութեան երկրորդ տարին Մամլուքները կրկին խուժեցին Կիլիկիա: Լեւոն գնաց անոնց վրայ, բայց պարտուեցաւ և հաշտութիւն խնդրեց: Հինգ տարի յետոյ (1371), Եգիպտացիները ահաւոր ուժերով մտան Կիլիկիա: Լեւոն պատերազմի մէջ վիրաւորուեցաւ և լեռները փախաւ: Վերջապէս 1374ին երրորդ անգամ Մամլուքները եկան Կիլիկիա, իրենց սուլթան Մելիք-էլ-Աշրաֆ-Շապանի հրամանով: Այս անգամ ալ Լեւոն պարտուեցաւ և ամրացաւ Կապանի բերդին մէջ: Բերդը 9 ամիս պաշարելէ վերջ, Մամլուքները առին և գերի տարին Լեւոն Զ., Մարիամ թագուհին, Բիշնա աղջիկը և Շահան փեսան (1375): Արքայական ընտանիքը նախ բանտարկուեցաւ Գահիդէի մէջ: Երկու տարի վերջ սուլթանը մեղմացաւ և ազատ թողուց թագուհին և աղջիկը. բայց անոնք չուզեցին

ազատիլ առանց Լեւոնի: Մելիք-Աշրաֆի մահէն ետք, Քասթիլիայի Յովհաննէս թագաւորը պատուակալ դեսպաններ ղրկեց նոր սուլթանին մօտ և խնդրեց Լեւոնի ազատութիւնը:

Լեւոն Զ. ազատուեցաւ 1382ին, բայց Կիլիկիան մնաց Եգիպտոսի սուլթաններուն ձեռքը, յետոյ ինկաւ



Լեւոն Զ.ի դամբարանը

Գարամանը Թիւրքմէն ցեղին և 15րդ դարուն ալ՝ Օսմանցիներու իշխանութեան տակ:

Լեւոն Գահիրէի բանաէն ելլելով, նախ գնաց Երուսաղէմ ուխտի: Թագուհին և աղջիկը մնացին Ս. Յակոբայ վանքը ճգնելու, իսկ Լեւոն հանգիպեցաւ Չիպրոս, յետոյ Հռոմ և այնտեղէն ալ Քասթիլիա, անձամբ շնորհակալութիւն յայտնելու իր բարերարին: Այնուհետև գահը կորսնցուցած թագաւորը անցաւ Մատրիտ, Փարիզ, Լոնտոն. զարկաւ բոլոր արքունիքներու

դուռները որ օգնեն իրեն, Կիլիկիոյ գահը ազատելու մահմէտականներու ձեռքէն: Ամէն տեղ ալ մեծ խոստումներ կուտային, բայց յետոյ կը դրժէին:

Վերջապէս Լեւոն իր գահուն տիրանալէ յուսահատելով, մտաւ Փարիզի Կեղեասինեաց վանքը ճգնելու: Հոն մեռաւ 1393ին և թաղուեցաւ վանքին մէջ, մինչև այսօր ալ Փարիզ կը գտնուի իր չքեղ գերեզմանը:

ԴԱՍ 43. — ՀԱՅԱՍՏԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՆԿՈՒՄԷՆ ՄԻՆՁԵՒ ԹԱԹԱՐՆԵՐՈՒ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Բագրատունիներու իշխանութեան անկումով, վերջացաւ Մեծ և Փոքր Հայքերու քաղաքական անկախ կեանքը: Հայաստան անցաւ Յոյներու ձեռքը, բայց ոչ երկար ատենի համար: Սելճուքներու Տուղրիլ և Ալփասլան պէյերը մտան յունական սահմանները և քանի մը տարի կողոպուտի, կրակի ու արեան ասպարէզ դարձուցին Հայաստանը: Վերջապէս 1086ին Ալփասլանի որդի Մելիք շահ տիրեց բովանդակ հայ երկրին և Հայաստանը եղաւ պատկական Սելճուքներու մէկ նահանգը: Մելիք շահի օրով մեր երկիրը խաղաղ կեանք մը ունեցաւ (մինչև 1092): Սակայն անոր մահէն վերջ Սելճուքներու միահեծան լուծը ինկաւ. բոլոր նուաճուած մանր իշխանութիւնները գլուխ բարձրացուցին: Կրկին հիմնուեցան արաբ, պարսիկ, հայ անկախ մանրիկ իշխանութիւններ:

Հայ իշխանութիւններ կային Գուգարաց և Ուտէացոց, Աղուանից, Սիւնեաց, Վասպուրականի և Տա-

Այդ թափառական կամ վաչկատուն թաթար ցեղերէն ժ.Գ. դարու սկիզբները խիստ զօրացաւ Մողոլ կոչուած ցեղը, որու մայրաքաղաքն էր Քարաքօրում (Պայքալ լիճէն քիչ մը դէպի հարաւ)։ Յեղապետը կը կոչուէր ձինկիզ խան։ Այս փառասէր և կտրիճ խանը նուաճեց և միացուց բոլոր թաթար ցեղերը և կազմեց ուժեղ պետութիւն մը։

Ձինկիզ խան նախ անցաւ Չինական Պարիսպը, գրաւեց Երկնային կայսրութիւնը, յետոյ անցաւ դէպի արեւմուտք, Հնդկաստան և յարձակեցաւ Խուարէզմի մեծ կայսրութեան վրայ, որ կը տարածուէր Կասպից ծովէն մինչև Հնդկաստան։ Գրաւեց երկիրը, չէն քաղաքները կողոպտեց, կրակի տուաւ, բնակիչները ջարդեց կամ գերի վարեց։ Ձինկիզ խան կը պատրաստուէր Եւրոպա արշաւել, բայց մեռաւ և իրեն յաջորդեց Ուլաթա խան։

Ուլաթա հրամայեց իր Չարմաղան զօրավարին՝ Հայաստան արշաւել։ 1236ին առաջին անգամ անոնք իրենց կատաղի գունդերով ու գաղթականներով լեցուն սայլերու կարաւաններով երեւացին Հայաստանի մէջ։ Նախ կ'երեւային զինուած գունդերը. սրենթաց ձիերով կը յարձակէին, կը տիրէին դաւառներու, իսկ անոնց ետեւէն կը խուժէին իրենց ընտանիքները, վաչկերով կամ կառքերով, խառն ի խուռն բեռնաւորուած, — կին, երեխայ, ստացուածք։ Անոնց գլուխը մեծ էր, երեսները առանց մօրուքի, աչքերը նեղ, քիթերը տափակ, իսկ ձայները բարակ ու զիւ։ Իրենց տիրած տեղերը կրակ ու աւեր կը սփռէին։ Կաթնակեր մանուկները քարերուն զարնելով կ'ոչնչացնէին, կիներն ու աղջիկները իրենց մէջ կը բաժնէին, իսկ հասակաւորները սուրէ կ'անցնէին։

Այսպիսով թաթարները տիրեցին արեւելեան Հայաստանի, գրաւեցին Անին ու Կարսը, ոչնչացուցին անոնց բնակիչներու մեծագոյն մասը և անցան դէպի Կարին։ Այդ ատեն Չարմաղանի յաջորդեց Բաչու կատաղի զօրապետը։

Կարին կը գտնուէր Իկոնիոյ սերձուքեան սուլթանի իշխանութեան տակ։ Սուլթանը իր զօրքերով եկաւ պաշտպանելու Կարինը, բայց յաղթուեցաւ ու փախաւ։

Բաչու անկէ անցաւ Ծովաց Լէխարճը, մտաւ Վասպուրական և Տուրուբերան. ամէն տեղ մահ ու աւեր սփռելով, գրաւեց բովանդակ Հայաստանը և 1242ին անցաւ Միջագետք։

Ձինկիզ խանի կատաղի զօրութիւնէն սարսափահար կը փախչէին Միջին Ասիոյ ցեղերէն չափերը, որոնք չէին միացած անոր հետ։ Այդպէս փախան չափ մը Թիւրքմէններ, անոնց հետ նաեւ Թուրք ցեղ մը (Թուրքաստանէն), որու առաջնորդն էր Սիւլէյման։ Այս Թիւրքմէն ցեղերն ալ ահազին աւերածութիւններ գործեցին Հայաստանի մէջ։ Սակայն երբ բովանդակ Հայաստան ինչպէս թաթարներու ձեռքը. անոնց մէկ չնչին մասը անցաւ Իկոնիոյ սուլթանութեան հողերը, իսկ մեծ մասը մնաց թաթարներու իշխանութեան տակ։

Երբ թաթարները տիրեցին Ասիոյ մեծագոյն մասին, այն ատեն մտածեցին կարգ մտցնել իրենց պետութեան մէջ։ Հսկայ երկիրը բաժնեցին մասերու և ամէն մէկ մասի վրայ մէկ-մէկ կառավարիչ նշանակեցին, որոնց պարտականութիւնն էր հնազանդութեան մէջ պահել իրենց շրջանը, հարկերը ժողովել և խանին ղրկել։

1254ին Մանգոյ խանի հրամանով, եղբայրը, Հուլաղու եկաւ Հայաստան, մարդահամար կատարեց և հարկեր գրաւ։ Բոլոր Հայերը՝ 10 տարեկանէ վեր, հարկ

բօնի ու Սասունի լեռնային շրջաններուն մէջ: Սակայն այս մանր հայ իշխանութիւններու միջև ինկած էին շատ աւելի զօրեղ այլազգի տիրապետութիւններ. այնպէս որ Հայերը ալ չէին կրնար միանալ և գործակցիլ իրարու:

Այլազգի իշխանութիւններէն նշանաւոր էին Շահ-Արմէնի պետութիւնը, Վանայ ծովու արեւմտեան և հիւսիսային կողմերը՝ իր 12 քաղաքներով, Դուինի, Անիի և Կարսի շրջանները, ուր անկախ արաբ ամիրաներ կը նստէին: Իկոնիոյ սելճուք սուլթանները և քիչ մըն ալ Յոյները տէր էին դարձած մեր երկրի արեւմտեան մասին, իսկ արեւելեան մասերը ինկած էին պարսիկ շահերու ձեռքը: Պարսկաստանի մէջ ալ Սելճուքներու իշխանութիւնը ջնջուած էր և գահը անցած էր բնիկ պարսկական սոհմի մը ձեռք:

Այդ մանր իշխանութիւններու օրով, հիւսիսէն ասպարէզ կուգան Վրացիները: Անոնց Դաւիթ թագաւորը 1124ին կը տիրէ Անիի ու Շիրակի, բայց կը մեռնի և Անին ու Շիրակը կ'իյնան Փաղուն անուն թուրք ամիրային ձեռքը:

Վրացիները երկրորդ անգամ տիրեցին Անիի ու Հայաստանի հիւսիս արեւելեան մասերուն Գիորգի թագաւորին օրով (1161 և 1174): Գիորգի Անին յանձնեց Օրբէլեան իշխաններու վարչութեան: Վերջապէս Վրացիներու ազդեցութիւնը ամէնէն աւելի զօրաւոր եղաւ Հայաստանի վրայ Գիորգիի աղջկան՝ Թամար թագուհիին օրով:

Թամարի օրով շատ ծաղկեցաւ և զօրացաւ Վրաստան: Այդ միջոցին Վրաստանի մէջ կը գործէին երկու երեւելի հայ իշխաններ, Իվանէ Աթապէկը և Զաքարէ Սպասալարը: Ասոնց ջանքերով Թամար գրաւեց հիւ-

սիսային և արեւելեան Հայաստանը, մաքրեց մանր այլազգի իշխանութիւններէն և վտարեց Պարսիկները: Հայաստանի այդ մասերը մնացին Վրացիներու ձեռքը մինչև Թաթարներու արշաւանքը և յիսուն տարիի չափ խաղաղ ու անգործ կեանք ունեցան:

ԴԱՍ 44. — ԹԱԹԱՐՆԵՐՈՒ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Սելճուքներէն աւելի բարբարոս ցեղեր ժ.Գ. դարու սկիզբները խուժեցին Հայաստան: Այդ նոր բարբարոսները կը կոչուէին Թաթարներ, Թիւրքմէններ, և այլն: Ամէնէն զօրաւորները Թաթարներն էին, մանաւանդ սկիզբները:

Թաթարներու հայրենիքը կը գտնուի Պայքալ լիճին շուրջը, Սիպերիոյ և չինական մեծ անապատի (Կօպի կամ Շամօ) միջև տարածուած ընդարձակ լեռնադաշտին վրայ: Անոնց երկրէն կը բխին Ասիոյ մեծ գետերէն չորսը — Օպին, Ենիսէյը, Լենան և Ամուրը:

Թաթարները, ինչպէս միւս բարբարոս ժողովուրդները, մանր ցեղերու բաժնուած՝ կ'ապրէին իրենց երկրին մէջ: Ամէն ցեղ ունէր իր ցեղապետը, զոր խաւ կը կոչէին իրենք: Անոնց գլխաւոր զբաղումն էր խաշնաբանութիւնը: Առաջ, երբ գետ անոնց թիւը շատ չէր աճած, իրենց լեռնադաշտը կրնար զիրենք կերակրել: այդ պատճառով անոնք պէտք չէին զգար իրենց երկրէն դուրս ելլելու, արշաւանքներ կազմելու: Սակայն ժ.Գ. դարու սկիզբները այնքան բազմացան որ, այլևս իրենց երկիրը գոհացում չէր տար. ճարահատ նոր բնակավայրեր պիտի վնասէին:

պիտի տային. ազատ էին միայն կիներն ու հոգեւորականները: Հարկերու ծանրութենէն փախչողները կը բռնուէին և կը սպաննուէին. իսկ ով որ չէր կրնար վճարել տուրքը, անոր զաւակները կ'առնէին ձեռքէն և գերի կը տանէին դէպի Թաթարիստան:

Հարկերու մեծ մասը բերքերով կ'առնուէր. փոքր մաս մըն ալ՝ զրամով: Ամէն հայ տղամարդ պարտաւոր էր վճարել 1 սպիտակ (զրամ), 100 լիտր ցորեն, 50 լիտր գինի, 2 լիտր բրինձ, 3 տոպրակ, 2 պարան, 1 նետ, 1 պայտ. իսկ անասուն ունեցողէն կ'առնէին 20 անասունէ մէկը և 20 հատ ալ սպիտակ զրամ: Անոնք իրենց ձեռքն էին առեր երկրի բոլոր հարուստ աղահանքերը և երկաթահանքերը, ձկնառատ լիճերն ու գետերը. այնպէս որ անոնցմէ օգտուելու համար ալ պէտք էր հարկ վճարել տիրողներուն:

Թաթարներու այդ հսկայ պետութիւնը հազիւ 100 տարի կեանք ունեցաւ: Թաթարները մտաւորապէս ստոր ըլլալով, չկրցան քաղաքակրթութիւն ստեղծել, ձուլել տիրուած ժողովուրդները, ամուր կարգեր հաստատել և հիմնաւոր կայսրութիւն մը կազմել: Ժ. Գաբուր կէսերուն (1340), անոնց պետութիւնը քայքայուեցաւ, բաժնուեցաւ բազմաթիւ մանր ու խոշոր անկախ իշխանութիւններու. իրենք ալ իրենց երկրին մէջ կրկին մնացին թափառական, մեծապէս նուազելով:

Հայաստանի մէկ մասը մնաց Պաղտատի խանին իշխանութեան տակ: Հարաւային գաւառներու վրայ տիրացան քիւրտ պէկերը, Սասունի ամիրային գլխաւորութեամբ. արեւելեան գաւառները ինկան Պարսիկներու ձեռքը, իսկ արեւմուտքը բռնեցին Թիւրքմէնները: Անոնցմէ մէկ քանին անկախ էին, իսկ միւսները Հուլա-

ղուի յաջորդներու կամ Պաղտատի խաներու գերիշխանութեան տակ:

Այս վիճակին մէջ մնաց Հայաստանը մինչև Լէնկ-թիմուրի արշաւանքը (1387):

Գ Ա Ս 45. — Օ Ս Մ Ա Ն Յ Ի Ն Ե Ր

Երբ ձինկիզ խան իր կոտաղի գունդերը ուղղեց դէպի արեւմուտք և մտաւ Արալ լճի ու Ամուտարիա-Միրտարիա գետերու տափաստանները, հոն կ'ապրէին խաչնարած վաչկատուն ցեղեր, որ ընդհանուր անունով կը կոչուէին Թիւրքմէններ կամ Թուրք ցեղեր: Թաթարներէն սարսափահար, այդ խաչնարած ցեղերը սկսան փախչիլ դէպի հարաւ և արեւելք:

Անոնցմէ մէկը, — Կէօք-խանի ցեղը, իր գլուխն ունենալով ցեղապետ Սիւլէյմանը, Թաթարներու առջեւէն փախաւ և մտաւ նախ Պարսկաստանի Խորասան նահանգը: Բայց երբ Թաթարները հոն ալ հասան, իր ցեղը. չուրջ 50,000 հոգիէ բաղկացած, առաւ և չուեց դէպի արեւմուտք, բնակութիւն հաստատելով Երզնկայէն մինչև Խլաթ՝ Բարձր Հայքի ստամաններուն մէջ: Երբ ձինկիզ խան մեռաւ, Սիւլէյման ուղեց դառնալ իր հայրենիքը, բայց եփրատը անցնելու ատեն, խղճուեցաւ: Որդիներէն երեքը ցեղին մեծ մասը առաջնորդեցին կրկին Թուրքաստան, իսկ կրտսեր որդին՝ քաջ էրթօղրուլը չուեց երթալ. 400 ընտանիքով անցաւ Իկոնիոյ սուլթան Ալայէտին Գ. ի երկիրը, մտաւ անոր ծառայութեան մէջ և քաջութեամբ կռուեցաւ անոր թըշնամիներուն դէմ իբր հեծելազօր: Ալայէտին ալ անոր

քնակութեան տեղ տուաւ հին Բիւթանիոյ սահմաններուն կողմը, այժմեան Աֆիոն-Գարահիսարի և Էսկիշէհիբի չրջաններուն մէջ: Էրթօղրուլ հոն հաստատուեցաւ ժ.Գ. դարու կէսերուն (1250):

Էրթօղրուլ կորիճ մարդ էր. մէկ կողմէ հաւատաքիմ ծառայութիւն կ'ընէր Իկոնիոյ սելճուք սուլթանին, իսկ միւս կողմէ կը գրաւէր տկարացած յոյն կայսրութեան հողերը, տարածուելով դէպի արեւմուտք: Էրթօղրուլ հասաւ մինչև Կոստինա կամ Քէօթահեա:



Օսման

Երբ Էրթօղրուլ մեռաւ և տեղը բռնեց որդին, Օսմանը, արդէն Թուրքերը բաւական շատ հողեր էին գրաւած Յոյներէն: Օսման աւելի առաջ գնաց. գրաւեց Ենիշէհիբ քաղաքը և հոն հաստատեց իր գահը: Երբ Ալայէտտին Գ. մեռաւ, Օսման տիրացաւ անոր երկրի մօծ մասին, ինքզինքը անկախ տալթան հռչակեց. իր անունով դրամ կոխեց, առանձին կրօնապետ կամ դեմալթ նշանակեց և հրամայեց Պարթաթ օրերը ալօթքներու մէջ իր անունը յիշել (1300):

Օսման տիրեց Պրուսայի: Իր յաջորդները հոն տեղափոխեցին օսմանեան գահը: Օսմանի որդին, Օրխան տիրեց

Նիկիոյ, անցաւ Եւրոպա և գրաւեց Կէլիպօլու ամուր բերդը, Տարտանէլի ափը: Մուրատ Ա. տիրեց Ադրիանուպօլիսի կամ Էտիրնէի, իսկ Պայաղիտ Ա. տիրեց Պալքաններու և պաշարեց Կ. Պոլիսը. բայց չկրցաւ գրաւել զայն, որովհետև արեւելքէն նոր հեղեղ մը բերդած էր: Լէնկթիմուր մտած էր Օսմանեան երկիրները:

ԴԱՍ 46.— ԼԷՆԿԹԻՄՈՒՐԻ ԱՐՇԱԽԱՆՔՆԵՐԸ

Ժ.Գ. դարու կէսերուն կործանեցաւ Ճինկիզխանի ահեղ պետութիւնը: Անոր Թաթարները ցրուած մնացին այդ հսկայ պետութեան երկիրներուն մէջ: Անոնք արդէն ժ.Գ. դարու սկիզբները ձգելով իրենց կռապաշտութիւնը, ընդունեցին մահմետականութիւն և սկսեցին խառնուիլ թուրք և թիւրքմէն ցեղերու հետ:

Թուրքաստանի մէջ, Արսլ քիճէն դէպի հարաւ, Սմրղանա քաղաքի մէջ կր նստէր Էօղպէք Թաթարներու խանը — Լէնկթիմուրը, Ճինկիզխանի ցեղէն: Ան իշխանութեան տակ առաւ Ամուտարիա և Սիրտաքիա գետերու լայնածաւալ հովիտներուն մէջ թափառող Թաթար և թիւրքմէն բոլոր ցեղերը, ահարկու բանակներ կազմեց ու ելաւ իր երկրէն դուրս: Լէնկթիմուր տիրեց Պարսկաստանի ու Հնդկաստանի, աւելեց շէն քաղաքներն ու գիւղերը, ամէն տեղ մահու արիւն ավառեց. բնակիչներու գլուխներէն բուրգեր կազմեց... Մտաւ Միջագետք և Ասորիք. արեւց Դամասկոսը, խեց Ասորիքը Մամուլքներու ձեռքէն և 1307ին մտաւ Հայաստան:

Թաթար բանակները նախ մտան Սիւնիք: Անոնց

գաղանութեան լուրերը վաղուց հասեր էին Հայոց երկիրը: Ժողովուրդը լսելով անոնց մօտենալը, փախած էր լեռներն ու ձորերը, ապաստանելով անմատչելի և



Լէնկթիմուր

վայրի տեղեր: Սակայն Լէնկթիմուրի հրոսակները ինկան սարերն ու ձորերը, գտան թաքստոցները և անխնայ կոտորեցին փախստականները: Սիւնիքէն թա-

թարներն անցան Արարատ, Տուրուբերան և Վասպուրական, և ամէն տեղ նոյն աւերն ու արիւնք սփռեցին: Գրաւած վայրերէն երիտասարդները գերի կը վարէին, իսկ ձերերն ու մանուկները կը կոտորէին:

Ամէնէն աւելի դիմադրութիւն ցոյց տուաւ Սասունը. անոր տէր Գարա-Ենուսուֆ քիւրտ իշխանը իր քիւրտ և հայ մարտիկներով երկար դիմադրեց, բայց ի վերջոյ յաղթուեցաւ և փախաւ:

Հինգ տարի կրակ, աւեր, կողոպուտ ու մահ տարածելով Հայաստանի մէջ՝ Լէնկթիմուր տիրեց ամբողջ հիւսիսային և արեւելեան Հայաստանի: Սակայն այդ հինգ տարուայ մէջ ժողովուրդը չկրցաւ երկիրը մշակել, ուտելիք հասցնել: Պահեստի պաշարը սպառեցաւ և 1393ին սոսկալի սով մը տիրեց: Կը պատմեն թէ ամէն տեսակի ընտանի կենդանիներ մորթել ուտելէ ետք, սկսան ուտել շունքն ու կատուներ ալ. իսկ երբ սովն աւելի սաստկացաւ, մարդիկ սկսան իրար ուտել: հայրը կ'ուտէր իր զաւակները, եղբայրն՝ իր քոյրը...

Արեւելեան Հայաստանէն Լէնկթիմուր անգամ մըն ալ մտաւ Միջագետք և Ասորեստան, անկէ ալ անցաւ ուղղակի դէպ ի հիւսիս, Բարձր Հայք: Գրաւեց ու հողին հաւասարեցուց Բարձր-Հայքի չէն վայրերը և անկէ արշաւեց դէպ ի Փոքր-Ասիա, Օսմանցիներուն վրայ:

Ճամբան կատաղի և երկար դիմադրութիւն ցոյց տուաւ Սեբաստիա հայաշատ քաղաքը: Լէնկթիմուր երկար պաշարումէ ետք, խարէութեամբ ու երդումով գրաւեց քաղաքը, բայց դաւաճանեց իր երդման: Նախ կողոպտել տուաւ ամբողջ հարստութիւնը, ապա կիները կապեց կատաղի ձիերու պոչերէն և վազցուց դաշտերու մէջ. յետոյ դաշտի մը մէջ ժողովեց դեռատի երեխաները և իր ձիաւորներուն հրամայեց սմբակներու

տակ ճգմել բոլորն ալ: Վերջապէս 4,000 հայ մարտիկներ կենդանի թաղել տուաւ զաշտի մը մէջ, որ այնուհետեւ կոչուեցաւ Սեւ Հողեր:

Լէնկթիմուր շարունակեց իր ճամբան զէպի Էնկիւրիւ (Անկորա): Այդ միջոցին Սուլթան Պայազիտ (Երջըրըմ) պաշարած էր Կ. Պոլիսը: Լսելով իր երկրին սպառնացող վտանգը, սուլթանը վերցուց Կ. Պոլսի պաշարումը և իր բանակներն շտապով ուղղեց Լէնկթիմուրի զէմ: Էնկիւրիի մօտ երկու բանակներն իրարու զարնուեցան: Լէնկթիմուր յաղթեց և Պայազիտը գերի բռնելով, երկաթէ վանդակի մը մէջ դրած տաւ: Խանը բազմաթիւ գերիներով ու հսկայական աւարով դարձաւ իր մայրաքաղաքը — Սմրղանտ, ուր շատ չանցած մեռաւ (1405) և տեղը բազմեցաւ Շահ-րուխ:

ԴԱՍ 47. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԼԷՆԿԹԻՄՈՒՐԻ ԱՐՇԱԽԱՆՔՆԵՐԷՆ ՅԵՏՈՅ

Լէնկթիմուրի հսկայական պետութիւնն ալ, ձինկիդխանի կայսրութեան պէս, արագօրէն քայքայուեցաւ, որովհետեւ ոչ մէկ լուսամիտ օրէնք, ոչ մէկ բարեկարգութիւն չհաստատեց տիրած երկիրներուն մէջ. ընդհակառակը՝ Թաթարներն իրենց ծանր հարկերով ու գազանութիւններով զոռեցուցին բոլոր հպատակ ազգերը:

Լէնկթիմուրի մահէն յետոյ, Սասունի Գարա Եուսուֆ քիւրտ իշխանը և ետքէն ալ անոր որդին, Իսկէնտէրը (Շահ-Արմէն) տիրեցին Հայաստանի մեծ մասին և 25-30 տարի անընդհատ պատերազմ մղեցին Թաթար-

ներու և ուրիշ իշխաններու դէմ: Այդ միջոցին Հայաստան անգամ մըն ալ ինկաւ սովի ճանկերուն մէջ: Նոր տոփե աւելի սոսկալի էր քան Լէնկթիմուրի օրով պատահածը:

Այդ անընդհատ կռիւներու միջոցին զօրացաւ Տիգրանակերտի Ազգոյունլի թիւրքմէն ցեղին իշխանը, որ տիրեց Հայաստանի հարաւային նահանգներուն: Իսկ անոր որդին, Ուզուն-Հասան, այնքան առաջ գնաց որ գրաւեց Պարսկաստանն ու Հայաստանը և նստաւ Պարսից զահուն վրայ (1468):

Ուզուն-Հասան ուղեց իր պետութեան արեւմտեան սահմաններն ընդարձակել: Մեծ զօրքով եկաւ գրաւեց Էդոկիան (Թոգատը), որ Օսմանցիներու իշխանութեան տակ էր: Սակայն Օսմանցիներն արդէն Սուլթան Մէհմէտ Բ-ի օրով առեր էին Կ. Պոլիսը (1453) և մեծ կայսրութիւն մըն էին կազմեր թէ Եւրոպայի և թէ Փոքր-Ասիոյ մէջ:

Մէհմէտ Բ. Գաթիս իր յաղթական բանակներն ուղղեց Ուզուն Հասանի դէմ, ջարդեց անոր զօրքերը և գրաւեց Հայաստանի արեւմտեան մասերը (1473): Աս եղաւ Օսմանցիներու առաջին մուտքը Հայաստան:

Այդ ատենէն սկսաւ արիւնշահել պատերազմներու երկա՛ր շարք մը Պարսիկներու և Օսմանցիներու միջև հայկական հողի վրայ, Հայաստանի տիրապետութեան համար: Ուզուն-Հասանի յաջորդներէն իշխանութիւնն անցաւ պարսիկ Սաֆեւան տան ձեռքը. բայց պատերազմները ոչ միայն չզաղրեցան, այլ և աւելի սաստկացան: Այդ պատերազմները տեւեցին 250 տարի, մինչև որ ասպարէզ եկան հիւսիսէն Ռուսերը և երկուքին ձեռքէն ալ սկսան խլել հայկական նահանգները:

Այդ պատերազմները կը մղուէին Հայոց երկրին մէջ

և հայ ժողովուրդը սոսկալի նեղութիւններու և տառապանքներու կ'ենթարկուէր։ Յաղթութիւնը փոփոխակի էր. մերթ կը տիրէին Պարսիկները, մերթ կը յաղթահարէին Օսմանցիները։ Իսկ ոտքի տակ գացողը Հայն էր. կ'աւերէին անոր արտերն ու այգիները, կը կործանէին անոր գիւղերն ու քաղաքները։

Այս անտանելի տառապանքներուն չտոկայով Հայերն սկսան գաղթել իրենց երկրէն, հանգիստ փնտռել օտար աշխարհներու մէջ, ազատելով անվերջ կողմապուտներէն ու սրածութիւններէն։

ԴԱՍ 48. — ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

— Շ Ա Հ - Ա Ր Բ Ա Ս

Շատ հին է հայ գաղթականութեան սկիզբը։ Արշակունիներու անկման օրերուն Պարսիկները, քիչ ետքն ալ Յոյները բազմաթիւ Հայեր կը տանէին իրենց երկիրները, չէնցնելով ամալի գաւառները։ Երբ է. դարու մէջ Արաքները մտան Հայաստան, անոնք ալ ահագին թիւով հայ գաղթականներ հանեցին մեր երկրէն, տարին ըսակեցուցին Ասորիք. Միջերկրականի ափերը և Եգիպտոս։ Թ. դարերու մէջ այնքան էին աճեր այդ ցեղերու հայ գաղթականութիւնները որ, հարկ եղաւ երկու հաճառաջնորդութիւն հիմնել — մէկը Եգիպտոս, միւսը Երուսաղէմ։

Հայ գաղթականութիւնը սաստկացաւ Բագրատունիներու անկումէն յետոյ, Սելճուքներու և մանաւանդ թաթարներու օրով։ Անին ու Շիրակը պարպուեցան

քնակիչները գաղթեցին դէպի հիւսիս՝ Ափսիսի, անկէ՝ Պուլկարներու հին մայրաքաղաքը, Սարայ, Վօլկայի ափը. յետոյ իջան Խրիմի թերակղզին, չէնցուցին Քէֆէ կամ Թէոդոսիա քաղաքը, երբ ան ձնովացիներու ձեռքն էր։

Որքան կը սաստկանային թաթարներու խռովութիւնները, այնքան կ'աճէին հայ գաղթականութիւնները։ Փախստականներու նորանոր գունդեր կ'երթային կը խառնուէին հիններու հետ։ Երբ Խրիմ ինկաւ թաթարներու, յետոյ Օսմանցիներու ձեռքը, Խրիմի խոշոր հայ գաղութը պարպուեցաւ. Հայերը անկէ անցան Մօլտավիա, յետոյ Պուքովինա։ Վերջապէս ահագին բազմութիւն մը (40,000 բնական) հաստատուեցաւ Լեհաստանի մէջ։

Երբ Ռուսիանց իշխանութիւնն ինկաւ. Կիլիկիայէն ալ բազմաթիւ Հայեր ցրուեցան դէպի Եգիպտոս և Իտալիա, ուր 20 փառաւոր հայ եկեղեցիներ հիմնեցին։

Հայկական այդ գաղթականութիւններէն այսօր միայն խղճալի մնացորդներ կան։ Անոնք աստիճանաբար ձուլուեցան տեղացիներու հետ, իրր Հայ չմնացին. ողորմելի մնացորդներն ալ այսօր հայ լեզուն մոռցած, գրեթէ բոլորովին օտարացած են։

Հայ գաղթականութիւնը աւելի ևս սաստկացաւ Պարսիկներու և Օսմանցիներու դարեւոր պատերազմներու ատեն։ Շատերը կը փախչէին երկու կողմուղ կողմերու ձեռքէն ազատուելու համար, բայց շատերն ալ բռնի դուրս կը տարուէին իրենց երկրէն։ Բռնութիւնով տարուած գաղթականութիւններուն ամէնէն մեծն ու զարհուրելին էր Շահ-Աբբասի կատարածը։

Երբ Շահ-Աբբաս բարձրացաւ Պարսից գահը, հաշտութիւն կնքեց Օսմանցիներուն հետ, 1585ին։ Այդ դաշնագիրով Հայաստանը, Վրաստանը և Ասորպատականք մեծ մասը մնացին Օսմանցիներու ձեռքը։

Այդ երկիրներն իրենց ձեռքն առնելով, Օսմանցիներն սկսան սաստիկ նեղել տեղացիները: Կուսակալներու և պաշտօնեաներու հարստահարութիւններէն ազատելու համար, շատ մը Հայեր—կաթողիկոս (Մելքիսեդեկ), մելիքներ ու ժողովուրդ, հետզհետէ անցան Պարսկաստան, ուր Շահ—Աբբաս լաւ կը վարուէր անոնց հետ: Այդ խորամանկ Պարսիկը կ'ուզէր Հայերու ձեռքով



Շահ-Աբբաս

զարգացնել իր երկրին մէջ արհեստներն ու վաճառականութիւնը: Եկող նորեկները սիրով կ'ընդունէր, մեծամեծ արտօնութիւններ կուտար:

Օսմանցիներէն դժգոհ էին նաև շատ մը Գիւրտեր: Ասոնց պէկերէն ալ մէկ քանին՝ անցան Շահ—Աբբասի երկիրը:

Այդ դժգոհ գաղթականներէն մանրամասն տեղեկութիւն առնելով իրենց երկրի մասին, Շահ—

Աբբաս իր բանակով մտաւ Ատրպատական, գրաւեց Թաւրիզը Օսմանցիներու ձեռքէն և պաշարեց Երևանի քերզը: Միևնոյն ատեն իր զօրքերը ղրկեց Արարատեան նահանգի ամլէն կողմերը, ժողովել տուաւ բազմաթիւ Հայեր և ուղարկեց Պարսկաստան:

Երևանն առնելէ ետք, իր բանակով առաջ անցաւ ալ գրաւեց Կարսը: Հոն իմացաւ որ Օսմանցիները ահագին զօրութիւնով իր դէմ կուգան: Շահ—Աբբաս տեսաւ որ չպիտի կարենայ յաղթել Օսմանցիներուն, ուստի

հրամայեց հաւաքել Կարսէն մինչև Երասխ բնակող բոլոր Հայերը, այրել ու կործանել անոնց գիւղերն ու քաղաքները, ոչնչացնել անոնց պահեստի պաշարները և գերի վարելով Պարսկաստան, բնակեցնել իր ամալի գաւառները ու չէնցնել իր երկիրը: Ատկէ զատ, չահը կ'ուզէր յետսել Օսմանցիներուն. այդ համատարած աւերին մէջ, անոնց բանակը անկարող պիտի ըլլար ուտելիք և բնակարան գտնել:

Շահի զօրքերը ժողովեցին տամեակ հազարաւոր հաջնտանիքներ և սկսան բռնութեամբ քշել դէպի Պարսկաստան: Հայ գաղթականներու այդ անպաշտպան հօտին ետեւէն կուգար պարսկական զօրք. որ կր փախչէր Օսմանցիներու առջեւէն: Երբ Օսմանցիները Կարս հասան, Շահ—Աբբաս հրամայեց աճապարել:

Գաղթական Հայերը հասեր էին Երասխի սփը: Պարսիկ զօրքն ալ եկաւ հասաւ: Կամուրջ չկար գետին վրայ. պիտի անցնէին լաստերով: Լաստերն ալ քիչ էին: Իսկ Օսմանցիները արագօրէն կ'առաջանային, որպէս զի խլին ժողովուրդը Պարսիկներու ձեռքէն, չղրկուին իրենց «կաթնտու կով»էն:

Երբ Օսմանցիները շատ մօտեցան, Շահ—Աբբաս հրամայեց զօրքին ջուրն անցնիլ լաստերով, իսկ գաղթականներն ստիպել որ լողալով անցնին միւս ափը: Ու ժողովուրդը սարսափեցնելու համար՝ Պարսիկները չատերու գլուխները կտրեցին, երկար ձողերու ծայրերն անցուցած՝ սկսան մտրակելով, խարազանելով և սուրի հարուածներով հրել դէպի ջուրը: Ծեր, կին, երեխայ և այր լեցուեցան յորդահոս գետին մէջ. տեսարանը զարհուրեկի էր. անհամար խեղդուողները իրենց դիակներով ծածկեցին Մայր Արաքսի երեսը:

Նոյն ատենը և գրեթէ նոյն եղանակով Պարսկաստան

տան քչեցին հարուստ և վաճառաչահ Ջուղա քաղաքի քոյոր բնակիչները :

Խեղդուածները, մեռածները և կոտորուածները չհաշուելով, Շահ-Աբրահիմ տարած հայ գաղթականներութիւնը կը հաշուեն 25,000 ընտանիք :

Տանելով իր երկիրը, Շահ-Աբրահիմ Հայերը բնակեցուց լաւ տեղեր : Ջուղայեցիները Սպահանի քով հիմնեցին Նոր-Ջուղա քաղաքը : Շահը Հայերու հետ շատ լաւ վարուեցաւ, մեծ իրաւունքներ ու արտօնութիւններ տուաւ, չնորհելով նաեւ կրօնի լիակատար ազատութիւն . յաճախ կ'երթար անոնց տունները, սիրալիր բնորոշութիւններ կ'ընէր անոնց, այնպէս, որ պարսիկ ժողովուրդն ալ կը վախճար հալածել Հայերը : Այս պայմաններուն մէջ, Հայերը շուտով զարգացան ու հարըստացան . մեծ առեւտուր սկսան Հնդկաստանի, Հնդկաչինի և Սուլտանի կղզիներու, մանաւանդ Ճաւայի հետ :

ԴԱՍ 49. — ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵԼԻՔՆԵՐԸ

Պարսիկներու և Օսմանցիներու դարաւոր պատերազմներու ատեն, առ հասարակ Հայաստանի արեւելեան մասը Պարսիկներու ձեռքը կը մնար, իսկ արեւմտեան մեծագոյն մասը՝ Օսմանցիներու : Թէ Պարսկաստանը և թէ անոր ձեռքը մնացած հայկական նահանգները կը բաժնուէին շատ մը մանր մասերու և ամէն մէկ մաս կը վառավարուէր մէկ խաւնի մը ձեռքով : Այդ խանութիւնները տեսակ մը կիսանկախ, յաճախ նոյնիսկ ժառանգական իշխանութիւններ էին : Խանը պարտաւոր էր հարկ վճարել շահին և պատերազմի

ատեն զօրք հասցնել անոր . իսկ այնուհետեւ գրեթէ անկախ կը կառավարէր իր երկիրը : Պարսկական հին սովորութիւնները չքացեր էին և անոնց տեղը բռներ էին արաբական և մանաւանդ թաթարական սովորութիւնները :

Հայերը ամէն տեղ հպատակ էին Պարսիկ խաներուն . անոնց ճորտերը, անոնց հլու հնազանդ ծառաները կը համարուէին : Բացառութիւն կը կազմէին Ուտեաց, Արցախի և Սիւնեաց երկիրներու լեռնական մասերու բնակիչները : Այդ երեք գաւառներու սահմանակից մասերը յայտնի են Ղարաբաղ անունով : Այդ շրջանի մէջ կային հինգ մելիքութիւններ—Կիւլատանի, Ջրաբերդի, Սալէնի, Վարանդայի և Դիզակի : Ասոնք կը կոչուէին Խաւնալի (Խամսա-հինգ) մելիքութիւններ :

Հայ մելիքները կիսանկախ դիրք մը ունէին : Անոնք հարկ կուտային իրենցմէ բարձր խաներուն, պատերազմի ատեն զօրքով կ'օգնէին անոնց, իսկ այնուհետեւ անկախօրէն կը կառավարէին իրենց լեռնոտ երկիրները :

Մելիքութիւնը ժառանգական էր : Երէց որդին կը կոչուէր մելիք և կը յաջորդէր հօրը, իսկ կրտսերները կը կոչուէին պեկեր և կը կազմէին երկրի աղնուակաշութիւնը : Մելիքը և կառավարիչ էր, և՛ իշխան, և զօրապետ, և դատաւոր :

Հինգ մելիքութիւններու բնակչութեան թիւն էր իբր 300,000, — $\frac{2}{3}$ ը Հայ, $\frac{1}{3}$ ը թաթար կամ Պարսիկ (Ատրպատականի թուրք) : Ամէն մէկ մելիք ունէր իր զինուած մարդերը և իր բերդը, կառուցուած լեռնոտ անմատչելի վայրի մը մէջ :

Լաւ չէր Պարսկաստանի վիճակը : Թուրքիոյ դէմ մղուած անվերջ պատերազմները քայքայման դուռն էին հասցուցեր զայն : Խաներն իրարու դէմ անընդհատ

ներքին կռիւներ կը մղէին: Այդ կռիւներու մէջ Ղա-
րաբաղի մելիքները բաւական մեծ դեր կը խաղային, օգ-
նելով մէկ կամ միւս խանին:

Սփանրու այդ ներքին խռովութիւններէն ուղեցին
օգուտ քաղել հայ մելիքները: Անոնք համախորհուրդ
Յակոբ Զուղայեցի կաթողիկոսին հետ, պատգամաւո-
րութիւն մը զրկեցին Եւրոպա, որպէս զի քրիստոնեա-
ներն օգնութիւն հասցնեն իրենց, թօթափելու պարս-
կական ծանր լուծը: Պատգամաւորներն էին Իսրայէլ
Օրի հնդկաստանցի հայ վաճառականը (ծագումով Ղա-
րաբաղցի) և Մինաս վարդապետը:

Պատգամաւորները երկար դիմումներ ըրին պապին



ՄԵՆԾՆ ՊԵՐՈՍ

ու եւրոպական թա-
գաւորներուն. բայց
միայն Պաւլէրայի
մեծ դուքսը (կայսր-
ընտիրը) սիրտին մօտ
ընդունեց անոնց
գործը: Անկէ յանձ-
նարարականներ և
նիւթական նպաստ
ստանալով, Օրի և
Մինաս վարդապետ
անցան Փ և թ երս-
պուրկ. Ռուսիոյ
հանճարեղ վերանո-
րոգէին, Մեծն Պետ-
րոս կայսեր մօտ:

Պետրոս կայսրը
արդէն չափոնց յարաբերութեան մէջ էր Պարսկաստանի,
Խրիմի, Հնդկաստանի և Թուրքիոյ հայ վաճառականնե-

րու և արհեստաւորներու հետ: Ան իր երկիրը հրաւիրած
էր չափ մը հայ առեւտրականներ և արհեստաւորներ.
անոնց ձեռքով կ'ուզէր ծաղկեցնել իր երկրի առեւտուրն
ու արհեստները: Ատկէ զատ, Պետրոս կայսրը կ'ուզէր ծով
ձեռք բերել: Այդ նպատակով մէկ կողմէն աչքը տնկեր
էր Պալթիկ ծովուն, միւս կողմէն Սև և Կասպից ծո-
վերու վրայ:

Երբ Օրին ու Մինաս վարդապետը կայսեր պարզե-
ցին իրենց ծրագիրները (1706), կայսրը իսկոյն տեսաւ
որ Ռուսիա կրնայ մեծապէս օգտուիլ անոնց առաջարկ-
ներէն: Անմիջապէս Օրին զրկեց Պարսկաստան, իբր Ռու-
սիոյ դեսպան, իսկ Մինաս վարդապետը մնաց Ռուսիա
և շարունակեց իր յարաբերութիւնները Գանձասարի
վանքին հետ (Ղարաբաղ), ուր տեղի կ'ունենային Ղա-
րաբաղի Մելիքներուն գաղանի ժողովները:

Իսրայէլ Օրին գնաց Ղարաբաղ, գաղանի ժողովներ
ըրաւ Մելիքներու հետ, անկէ անցաւ Պարսից մայրա-
քաղաքը, Սպահան, և ապա դարձաւ կայսեր մօտ և
յայտնեց թէ Հայերը պատրաստ են ապստամբելու, իսկ
պարսկական զորքերը չափ գէշ են:

Այդ առիւթները Աֆղանները ապստամբեցան արե-
ւելքէն, իսկ հիւսիսէն ալ Կովկասեան լեռնականները
(Լէզլիներ) արշաւեցին Պարսից հայկական մասերուն
վրայ, կողոպտելով հասան մինչև Սեւանայ լիճը: Հայ
Մելիքները Ուտէացոց Յովհաննէս իշխանին հետ միա-
ցան և բարբարոս լեռնականները ջախջախելով, վտարե-
ցին իրենց երկրէն (1721):

Պարսկաստանի այս խառն վիճակէն ուղեց օգտուիլ
Մեծն Պետրոս: Բազմաթիւ զօրքով եկաւ Կովկաս լեռ-
ներու կողմը, գրաւեց Տէրպէնտը. Պաքուն և Կիլանը:
Ղարաբաղի Մելիքներն զգացին որ ժամը հասած է

ապստամբելու: Անոնք կ'ուզէին անկախ հայկական իշխանութիւն մը կազմել Ռուսերու հովանաւորութեան տակ:

ԴԱՍ 50. — ԴԱԻԻԹ ԲԷԿ

Մելիքները մարդ զրկեցին Վրաստան, իրենց ազգակից Դաւիթ-Բէկին: Դաւիթ գաղթած էր հոն, և Վրաց զօրքին մէջ մտնելով, մեծ անուն էր հանած իբրեւ կտրիճ զօրապետ: Մելիքները զայն հրաւիրեցին իրենց երկիրը, որպէս զի անցնի հայկական ապստամբութեան գլուխը: Դաւիթ սիրով ընդունեց Մելիքներու առաջարկը և քանի մը ընկերներով աճապարեց Ղարաբաղ: Իր կտրիճներու խմբակով յարձակեցաւ Ղարա-Չօրլու թուրք վաչկատուն ցեղին վրայ, ջախջախեց և ցիր ու ցան ըրաւ զայն: Իսկոյն Դաւիթի գրօշին տակ հաւաքուեցան 400 կտրիճներ: Դաւիթ ջախջախեց Զիւանչիրնեթու կատաղի ցեղն ալ (1722): Իր զօրքի թիւը հասաւ 2000ի:

Բոլոր մելիքութիւններու մէջ կազմուեցան հայկական զունդեր, որ եկան միացան Դաւիթի հետ: Հայ բանակը հասաւ 7000ի: Դաւիթ իր զօրքին սպարապետ կարգեց Մխիթար անուն կտրիճ Սիւնեցի մը և անոր ալ օգնական նշանակեց Ղափանի Մելիք Փարսատանի փեսան, Տէր Աւետիք քահանան: Միւս զօրավարներէն նշանաւոր էին Ստեփան Շահումեանը (Գենուազէն), Թորոս իշխան (Չանտոտէն) և այլն:

Պարսիկ խաները զգացին սպառնացող վտանգը. միացած ուժերով քաղեցին Դաւիթի վրայ. բայց Դաւիթ

յաղթեց ամէնուն ալ և իր բնակութիւնը հաստատեց Հալիձորի անառիկ մարոցին մէջ:

Պարսից Թահմազ արքայորդին ալ իր հօր գահը ձեռք բերելու համար, այդ տառնները դիմած էր Մեծն Պետրոսի և անկէ օգնութիւն խնդրած:

Օսմանցիները երբ լսեցին Ռուսերու միջամտութիւնը Արեւելքի գործերու մէջ, սաստիկ բարկացան և մեծ զօրքով քաղեցին Պարսկաստանի վրայ: Գրաւեցին Երեւանը, Նախիջևանը. Թաւրիզն ու Համատանը. գունդ մըն ալ զրկեցին Սիւնիք, Դաւիթի վրայ: Օսմանցիներէն սարսափած, Հայերը լքեցին Դաւիթը և քաշուեցան իրենց լեռնածերպերը: Դաւիթ մնաց 450 հոգիով:

Օսմանցիները պաշարեցին Հալիձորը, բայց հայ կտրիճները այնպիսի ջարդ մը տուին որ, թշնամին ահագին աւար և 148 զրօշակ թողելով Հայերուն, փախաւ:

Երկրորդ անգամ եկան Օսմանցիները թարմ գունդերով, բայց կրկին մեծ պարտութիւն կրելով փախան (1726):

Երբ Թահմազ Շահը լսեց Դաւիթի այդ յաղթանակները իր թշնամի Օսմանցիներուն դէմ, չատ դո՛ս մնաց և զայն Իշխանաց իշխան անուանեց, տալով իրաւունք իր անունով դրամ կտրելու: Բայց Դաւիթ միայն երկու տարի վայելեց իր փառքը և մեռաւ 1728ին:

Դաւիթի տեղ՝ Հայերը նշանակեցին Մխիթար սպարապետը: Օսմանցիները երկրորդ անգամ եկան Հալիձորի վրայ, ահագին զօրութիւնով: Մխիթար դիմադրեց, բայց քանի մը դաւաճան Հայեր սպաննեցին զայն և Ղարաբաղն ինկաւ Օսմանցիներու ձեռքը: Տէր Աւետիքն ալ ընտանիքով գնաց Երուսաղէմ, իր կեանքի վերջին օրերը հոն անցնելու:

Պարսկական գահը ինկաւ եռանդուն և խելացի

Նատիր Ալիի ազդեցութեան տակ: Այս փառասէր և խորագէտ Պարսիկը Ախուրեանի ափերուն վրայ սոսկալիք ջարդ մը տուաւ Օսմանցիներուն:



Նատիր Եահ

Պարսիկներէն յետոյ, Նատիր Ալի նստաւ Պարսից գահը, Նատիր Շահ անունով: Շատ լաւ վարուեցաւ Հայերու հետ. բաւական եղաւ էջմիրածնի հայ կաթողիկոսին, Աբրահամ Կրետացիին հետ: Վերադարձուց էջմիրածնէն խլուած կալուածները, թեթեւցուց հայ ժողովուրդին ծանր վիճակը և հայ Մելիքները հաստատեց իրենց հայրական իշխանութեան մէջ:

Օսմանցիները շատ գէշ ընթացք մը բռնեցին Ղարաբաղի ազատասէր Հայերուն հանդէպ: Ղարաբաղցիները այնքան զրգուեցան անոնց չորս տարուան տիրապետութենէն (1729-35) որ, գիշեր մը դաւադրութիւն կազմեցին և կոտորելով վրտարեցին իրենց սահմաններէն:

Օսմանեան այս անյաջող

Վերջապէս Նատիր շահի օրով (1746) ղաղըեցան Պարսիկներու և Օսմանցիներու զարաւոր պատերազմները. Հայաստանի արեւելեան փոքր մասը, մինչև Նախիջեւան և Երեւան մնաց Պարսիկներու ձեռքը. իսկ Մեծ Հայքի մեծագոյն մասը և ամբողջ Փոքր Հայքն ու Կիլիկիան՝ Օսմանցիներուն:

ԴԱՍ 51. — ՌՈՒՄԻՈՅ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ

Մեծն Պետրոս և Կատարինէ Բ. կայսրուհին չկրցան որ և է անփիչական օգնութիւն հասցնել Հայերուն, կամ Պարսիկներու ձեռքէն առնել հայ երկրի ունեւոր մասը: Անոնք գրաւած էին իրենց արեւմտեան դրացիներու և Թուրքիոյ դէմ պատերազմներ մղելով: Սակայն թէ Պետրոս Մեծը և թէ անոր անմիջական յաջորդները բազմաթիւ հայ գաղթականներ հրաւիրեցին իրիմէն՝ (որ այն ատեն թուրքերու ձեռքն էր), Պարսկաստանէն և Հնդկաստանէն: Այդ հայ գաղթականները լեցուեցան Պեսարապիոյ գաւառը, հիմնեցին Տօն գետին վրայ Նախիջեւանը, շէնցուցին Աժաէյի տանը, և նոյն իսկ բնակութիւն հաստատեցին Մոսկովայի ու վերջէն ալ Փեթերսպուրկի մէջ: Անոնք իմնեցին Ղզլարն ու Մոզդուկը հիւսիսային Կովկասի մէջ: Հաստատեցին թիւեշիներու առաջին տնկարանները, չերամաբուծութիւն մտցուցին երկրին մէջ, սորվեցուցին մետաքսագործութիւնը և այլն, և այլն: Ռուս կայսրերն ալ Հայերուն մեծ արտօնութիւններ տուին: Նախիջեւանցիները նոյն իսկ աւելին իրենց սեփական դատարանները:

Նատիր Շահի մահէն յետոյ, Պարսկաստանը կրկին ինկած էր ներքին խռովութիւններու մէջ և սաստիկ տկարացած: Կատարինէ կայսրունին օգտուեցաւ ատկէ և զօրք զրկեց ու գրաւեց Տերպէնտը, Պաքուն և Շամախին, զոր Նատիր շահ ետ էր առած Ռուսերէն: Հայ մելիքները կրկին սկսան իրենց բանակցութիւնները ուստարքունիքին հետ: Այս անգամ անոնց և կայսրունիին միջնորդն էր Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան Երկայնարագուկը, Պեսարապիոյ առաջնորդը:

Կատարինէ կայսրունիէն ետքը՝ Պօղոս Ա. կայսրը 1797ին զօրք զրկեց և գրաւեց Ղարաբաղը և Վրաստանը՝ առանց կաթիլ մը արիւն թափելու:

ԺԹ. դարու սկիզբները Պարսիկները փորձեցին ետ առնել Ղարաբաղը: Կռիւր տեսեց մէկ քանի տարի: Հայերը միացան փոքրաթիւ ուս զօրքին և յաղթեցին Արքա Միրզա արքայագունի բանակին: Պարսիկները ստիպուեցան 1813ին կնքել Կիւրստանի դաշնագիրը, Ռուսերուն ձգելով Ղարաբաղն ու Գանձակը:

1826ին Արքա Միրզա 80,000 զօրքով կրկին քալեց Ռուսերուն դէմ. պաշարեց Շուշին, գրաւեց Գանձակը և զնաց դէպի Շամքոր: Ռուսերն անոր դէմ զրկեցին Թիֆլիսէն Մատթթօֆ հայ զօրապետը, փոքրաթիւ զօրքով: Անոր միացան հայ կամաւորներ ալ: Շամքորի, Գանձակի և Շուշիի քով երեք անգամ ջախջախելով Պարսիկները, Մատթթօֆ քչեց զանոնք ուստամաններէն դուրս և մտաւ Ղարաբաղ, Ուրիշ բանակ մըն ալ Փասկեւիչի ղեկավարութեամբ զնաց գրաւեց Երեւանը, Էջմիածինը, Նախիջևանը և Թաւրիզը: Այս վերջին բանակին միացած էր Թիֆլիսի Հայոց առաջնորդ Ներսէս Աշտարակեցին, անցած 10,000է

աւելի հայ կամաւորներու գլուխը: Հայ կամաւորները և իրենց վեհ առաջնորդը կը կռուէին մեծ հայրենասիրութեամբ, որովհետեւ ուստարքունիքէն խոստով առած էին հայկական ինքնավար նահանգ մը ստեղծելու համար:

Այդ պարտութիւններուն հետեւանքով, Պարսիկները Կուր և Երասխ գետերու միջեւ գտնուած հայ նահանգները ձգեցին Ռուսերուն և յանձն առին չարգիլել Պարսկաստանէ Ռուսիա դադթել ուզող Հայերը (1828 փետրվար): Եւ 40,000 Հայեր ելան Ատրպատականէն ու եկան շէնցուցին Շահ Աբբասի աւերած Արարատեան դաշտը:

Հազիւ պարսկական պատերազմը վերջացաւ, Նիքօլա Ա. Յարր պատերազմ հրատարակեց Թուրքերուն դէմ: 1828 ապրիլին նոյն Փասկեւիչ զօրապետը Կիւմրիէն (Ալէքսանտրօպօլ) անցաւ, գրաւեց Կարսը, Պալազիտը և Կարինը, իսկ աւելի մեծ զօրաբանակը անցաւ Դանուբը և հասաւ Էտիրնէ: Սուլթան Մահմետ Աղրիանուպօլիսի մէջ դաշն կնքեց Ռուսերու հետ և անոնց թողուց Անապան, Փոթին, Ախալքխան և Ախալքալաքը:

Պատերազմի առնել Կարինի Հայերը մեծ օգնութիւն էին հասուցած Ռուսերուն. այդ պատճառով ալ կը վախճային պէյերու և պաշիպօղուքներու վրիժառութենէն: Ահաբեկ և աւելի հանգիստ կեանք վարելու յուսով, Կարինի, Պալազիտի, Ախալքալաքի և Կարսի շրջաններէն 90,000 Հայեր 1830ին դադթեցին Կովկաս և բնակեցան Կիւմրի, Ախալքխա և Ախալքալաք քաղաքներու մէջ:

Ռուսերը անգամ մըն ալ պատերազմ հրատարակեցին Թուրքերու դէմ 1853—56 թուականներուն:

Ռուսական բանակները կրկին կովկասէն անցան, առին Կարսը և Կարինը՝ Բէհրութեան հայ զօրապետին հրամատարութեան տակ։ Անցան նաև Դանուբը, տիրեցին Թուրքիոյ պալքանեան երկիրներէն մէկ մասին։ Բայց այս անգամ Անգլիա և Ֆրանսա միացան Թուրքիոյ, նսււստորմ գրկեցին և պաշարեցին ու առին Սեւաստաբոլ քաղաքը և Խրիմի թերակղզին։ 1856ին հաշտութիւն կնքուեցաւ։ Ռուսերը ստիպուեցան Թուրքերուն վերադարձնել Կարինն ու Կարսը։

Վերջապէս, 1877ին, Ռուսերը անգամ մըն ալ պատերազմեցան Թուրքիոյ դէմ։ Այս անգամ պատերազմի պատրուակն եղաւ Պոսնա-Հէրցեքի և Պուլկարիոյ սլաքըրիստոնեաներու ազատումը։ Ռուսիոյ կովկասեան բանակներու զլխաւորները դարձեալ Հայերն էին — Լորիս Մելիքեան, Տէր Ղուկասեան, Շելկօվիկեան, Լազարեան և այլն։ Ասոնք յարձակումով գրաւեցին Պայազլիտը, Կարսը, Արտաշանը, Պաթումը և այլն և հասան Կարին։ Իսկ աւելի մեծ բանակները, միացած ռումէն և սերպ բանակներու հետ, անցան Դանուբը, գրաւեցին Պալքանները, Էտիրնէն և մտան Կ. Պոլսոյ արուարձաններէն Սան-Ստէֆանօ։

Սան-Ստէֆանօի մէջ Ռուսերը և Թուրքերը հաշտութիւն կնքեցին, յօդուած մըն ալ աւելցնելով Հայերու մասին (16րդ յօդուած)։ Այդ յօդուածով Թուրք կառավարութիւնը յանձն կ'առնէր բարեւաւել Հայերու վիճակը։ Ատկէ զատ, Ռուսիա ստացաւ Պաթումը, Արտաշանը, Կարսը և Կաղզուանը։

Այսպիսով Հայաստանը բաժնուեցաւ երեք պետութեան միջև. Փոքր Հայքը և Կիլիկիան ամբողջապէս ու Մեծ Հայքի մէկ խոշոր մասը մնացին Թուրքիոյ, Մեծ Հայքի մէկ կարեւոր մասը ինկաւ Ռուսիոյ, իսկ փոքր մաս մըն ալ մնաց Պարսիկներէ և ձեռքը։

Վերջին պատերազմին տեսն ալ Հայերը մեծ աջակցութիւն ընծայեցին Ռուսերուն, որով իրենց դէմ գրգռեցին տեղացի մահմէտականները և Թուրք կառավարութիւնը։ Հռչակաւոր Շէյխ Իպատտուլլանը և քիւրտ տէրէպէյիները մեծ կոտորածներ ու աւեր ըրին Թուրքիոյ հայ գաւառներու մէջ։ Դարձեալ բազմաթիւ Հայեր Թուրքիայէն գաղթեցին և բնակեցան Կարսի ու Երեւանի նահանգներուն մէջ։

ԴԱՍ 52. — ԹՈՒՐԿԻՈՅ ՀԱՅԵՐԸ

Թուրքերու տիրապետութիւնը արագօրէն կ'առաջանար։ Քանի դեռ երկիր մը կամ քաղաք մը չէին գրաւած, քանի դեռ կռուի մէջ էին, Թուրքերը կը վարուէին շատ խիստ, նոյն իսկ Թաթարներուն հաւասարող կատաղութեամբ։ Իսկ երբ կը գրաւէին այդ քաղաքը կամ երկիրը, համեմատաբար շատ աւելի մեղմ կը վարուէին բնակիչներու հետ։ Անոնք բոլոր տիրուած ոչ-մահմէտական ազգերուն թողուցին իրենց կրօնական ազատութիւնը և տեսակ մը ազգային կազմակերպութիւններ տուին անոնց։ Յոյները, Հայերը, Սուրիացիները, Հրեաները ամէնքն ալ իրենց ազգային գործերը կը վարէին իրենց կրօնապետներու և անոնց խորհրդականներու ձեռքով։ Թուրք կառավարութիւնն անոնց տուած էր տեսակ մը ներքին ինքնավարութիւն։

Սալթան Մէհմէտ Բ. Փաթիհ երբ գրաւեց Կ. Պոլիսը (1453), Յոյները կը կազմէին այդ քաղաքի բնակիչներու ամուսար մեծամասնութիւնը։ Փաթիհ տեսաւ որ անյարմար է շատ խիստ վարուիլ անոնց հետ, եթէ ոչ միշտ կրնան դաւադրել, ապստամբիլ։ Ուստի

անոնց պարգեւեց իրենց ներքին գործերը վարելու համար ինքնուրոյն ազգային վարչութիւն մը: Բայց միւս կողմէն ալ ամէն ջանք թափեց, Պոլսոյ մէջ ստեղծելու թուրքերէ և ուրիշ վստահելի տարրերէ բաղկացած ազգաբնակչութիւն մը, որպէս զի Յոյները չմնան միշտ մեծամասնութիւն: Ասոր համար, բացի իր գործերէն և անհամար պաշտօնեաներէն, ասիական գաւառներէն բերաւ բազմաթիւ գաղթական թուրքեր և բնակեցուց Պոլսոյ մէջ:

Տիրուած ժողովուրդներու ամէնէն վստահելիներէն մէկն ալ Հայն էր: Փոքր Ասիոյ գաղթական Հայերը, կտրուած իրենց հայրենի հողէն, երբեք չէին կրնար մըտածել ոպստամբութեան մասին: Ֆաթի մայրաքաղաքի բնակիչներն ազատեց զինուորական ծանր ու ստորնացուցիչ տուրքէն, քանի մը ուրիշ առտօնութիւններ տուաւ առեւտրականներուն և արհեստաւորներոյն, այնպէս որ շատ արագ աճեցաւ Հայերու թիւը Կ. Պոլսոյ մէջ: Իկն ատեն Ֆաթի Պրուսայի առաջնորդ և իր անձնական քարեկամ Յովակիմ եպիսկոպոսը հրաւիրեց Պոլիս, 1461ին, և նշանակեց թուրքիոյ և Կ. Պոլսի Հայերու կրօնապետ կամ Պատրիարք, տալով անոր ոչ միայն կրօնական, այլ և շատ մը քաղաքական ու քաղաքացիական իրաւունքներ:

Ֆաթի ուղեց ատով ազատել Հայերը էջմիածնի կաթողիկոսին ազդեցութենէն, որովհետեւ կաթողիկոսը կը գտնուէր պարսիկ իշխանութեան տակ:

Թուրքիոյ Հայերը, որ կը կազմեն հայութեան մեծամասնութիւնը, մինչև ժ. Պ. դարու կէսերը կը կառավարուէին իրենց պատրիարքով և զայն չրջապատող քանի մը երեւելիներով, որոնք կը կոչուէին ամիրաներ: Ա-

միրան հարուստ Հայ մըն էր, մեծ մասով այս կամ այն փաշային սարաֆը, անոր խորհրդատուն և պաշտպանեալը: Սակայն եղած են այնպիսի ամիրաներ, որոնք իրենց անձնական մեծ կարողութեանց շնորհիւ արժանացած են պետական բարձր պաշտօններու: Օրինակ՝ երկա՛ր ժամանակ արքունի վառօդապետութեան պաշտօնը կը գտնուէր Տատեան զերդաստանի ձեռքը ժառանգաբար, դրամահատութիւնը՝ Տիւզեաններու, արքունի ճարտարապետութիւնը՝ Պալեաններու ձեռքը և այլն: Աւիրաւ արաբական տիաղոս մըն է, որ կը նշանակէ իշխող կամ իշխող: Այդ ազդեցիկ ամիրաները կը նշանակէին պատրիարքները ու առաջնորդ. անոնք կը հրամարեցնէին պատրիարքները ու առաջնորդները, անոնք կը վարէին ազգային ամէն գործերը: Ժողովուրդը և ոչ մէկ մասնակցութիւն ունէր ազգային գործերու մէջ:

Ամիրաներու այս բռնակալ և կամայական վարչութիւնը շարունակուեցաւ մինչև ժ. Պ. դարու կէսերը: Երբ թուրքիոյ Հայերու մէջ դպրոցներ բացուեցան, երբ երեւան եկան կրթուած, ուսում առած երիտասարդներ, այն ատեն ժողովուրդի մէջէն բողոքի ձայներ սկսան բարձրանալ ամիրաներու ինքնակալութեան դէմ:

Այս շարժման գլուխ կանգնած էին սկիզբները (1840 թուական) Էսնաֆ դասակարգի մարդեր: Անոնք 10—15 տարի կուէ մղելով ամիրաներու դէմ, կրցան իրաւունք ձեռք բերել մասնակցելու ազգային գործերու, ամիրաններուն հաւասար չափով: Իսկ ետքէն ժողովրդական շարժման գլուխ անցան Եւրոպայ կրթութիւն ստացած կորովի երիտասարդներ — ինչպէս Գրիգոր Օտեան, Նիկողայոս Պալեան, Ռուսինեան, Սերվիշէն, Աղաթօն և այլն: Այդ ատենները ծագեցաւ Խրիմի կործանարար պատերազմը: Թուրքիա պար-

տուեցաւ Ռուսիայէն Կովկասի և Դանուբի սահմաններուն վրայ, բայց Ռուսիա ալ պարտուեցաւ թուրքերուն օգնութեան եկած Անգլիացիներէն և Ֆրանսացիներէն: Պատերազմէն տկարացած և ուժասպառ թուրք կառավարութիւնը չուզեց ճնշել հայ ժողովուրդին մէջ ծնած ազատական շարժումը: Այդ կրթութեամբ, մտաւորական երիտասարդութիւնը, միացած արհեստաւորութեան հետ, մշակեց հայ ազգային գործերը վարելու համար կանոնադրութիւն մը, զոր ներկայացուց կառավարութեան «Հայոց Ազգային Սահմանադրութիւն» անունով, և թուրք կառավարութիւնն ալ հաստատեց զայն 1860 մայիս 24ին:

Այդ Սահմանադրութեան համեմատ, հայ ժողովուրդի բոլոր գործերը կը վարեն ազգային իշխանութիւնները: Ազգը կ'ընտրէ 120 աշխարհական երեսփոխան, իսկ հոգեւորականները կ'ընտրեն 20 կրօնական երեսփոխան և այդ 140 ընտրեալները կը կազմեն Ազգային Ընդհանուր Ժողովը:

Սակայն ընտրութիւնը չի կատարուիր արդար ձեւով — ամբողջ ազգին կողմէն: 120 աշխարհական երեսփոխաններէն միայն 40ը գաւառներէն են և 80ը Կ. Պոլսի Հայերէն. իսկ 20 հոգեւոր երեսփոխաններէն և ոչ մէկը գաւառէն կ'ընտրուի. բոլորն ալ կ'ընտրուին Կ. Պոլսոյ հայ կղերականներու ձեռքով: Այսինքն՝ գաւառի 1½—2 միլիոն հայութիւնը ունի ընդամէնը 40 երեսփոխան, իսկ միայն Կ. Պոլսոյ 150,000 Հայերն ունին 100 երեսփոխան:

Ազգային Ընդհանուր Ժողովը կ'ընտրուի տասը տարուան համար. բայց երկու տարին անգամ մը անոր 1/5 մասը կը նորոգուի նոր ընտրութիւնով: Անոր պաշտօնն է մասնակցիլ Հայոց ընդհանրական

կաթողիկոսի ընտրութեան, պատրիարքներ ընտրել, Ազգային վարչութիւններու գործունէութիւնը քննել, անոնց ուղեգիծ պատրաստել, բոլոր մարմիններու հաշիւները քննել, անոնց մէջ ծագած անհամաձայնութիւնները դատել և այլն:

Ընդհանուր Ժողովը կ'ընտրէ 14 եկեղեցական անդամներէ Կոնստանտնուպոլիս մը և անոր կը յանձնէ բոլոր կրօնական գործերու վարչութիւնը, ու նաև 20 աշխարհական անդամներէ կազմուած Քաղաքական Ժողով մը, որուն կը յանձնէ բոլոր ազգային աշխարհական գործերը: Քաղաքական Ժողովն ալ կը կազմէ չորս Խորհուրդներ—1) Ուսումնական, 2) Տնտեսական, 3) Դատաստանական և 4) Վանքերու տեսչութեան: Քաղաքական Ժողովը կը կազմէ նաև երեք հոգաբարձութիւն—1) Եկեմտից, 2) Կտակներու և 3) Հիւանդանոցի:

Ազգային վարչութեան գլուխն է Պատրիարքը, որ կը նախագահէ ընդհանուր Ժողովներուն:

Գաւառներուն մէջ ալ կան նոյն ձեւով գաւառական Ժողովներ ու վարչութիւններ, որոնց նախագահն է առաջնորդը: Առաջնորդը պարտաւոր է հսկել գաւառներու մէջ Սահմանադրութեան անթերի գործադրութեան վրայ:

Սակայն այս ամէնը թուրքիոյ հայութեան կեանքի մէկ կողմն է. աւելի ճիշդ՝ Կ. Պոլսոյ հայութեան կեանքն է: Այնպէս չէր գաւառի հայութեան կեանքը:

Երբ թուրքերը վերջնականապէս տիրեցին Հայաստանի մեծ մասին, անոնք չուտով կորսնցուցին իրենց սկզբնական չրջանի պարզութիւնը և համեմատաբար մեղմ ընթացքը. բոլոր տիրուած քրիստոնեաները զրկուեցան զէնք կրելու իրաւունքէ. Հայը զինուոր չէր տար, այլ անոր փոխարէն կը վճարէր գլխահարկ (խա-

քաճ), որ յետոյ կոչուեցաւ պէտէյը աւսերիկ: Իսկ Հա-
յու դրացին, բարբարոս Քիւրտը մնաց միշտ գինուած:
Ատեն մը Քիւրտն ու Թուրքը միացած սկսան կեղեքել
անգէն Հայը: Քրիստոնեան իրաւունք չունէր կարմիր
ֆէս դնելու, այս կամ այն ձեով զգեստ հագնելու. ան
իրաւունք չունէր պետական պաշտօններ վարելու. ա-
նոր վկայութիւնը անընդունելի էր դատարանի մէջ,
եթէ դիմացը կար մահմետականի վկայութիւն: Մէկ
խօսքով՝ Հայը ռայա էր (ռայա արաբերէն կը նշանակէ
հօս), ճորտ, իսկ մահմետականը՝ տիրող, ազնուական:

Կրօնական ու անտեսական հալածանքը գաւառնե-
րու մէջ սոսկալի չափերու հասոն: Հայերը ինկան ծայ-
քայեղ չքաւորութեան մէջ: Կառավարութիւնը չյինեց
ոչ դպրոցներ, ոչ ճամբաներ, ոչ երկաթուղիներ, ոչ ալ
իճերու վրայ չողեհներ: Հինէն մնացած ջրանցքներն
ու ալլ հիմնարկութիւնները, անտառներն ու գրախա-
յին այգիները ոչնչացան, երկիրը և ժողովուրդը մնա-
ցին խաւար ու աղքատ վիճակի մէջ:

Պաշրպօզութներու, Քիւրտերու, Չէրքէզներու և
Ղազերու հալածանքներէն յուսահատած, բազմաթիւ
Հայեր գաղթեցին Թուրքիայէն, լեցուեցան Կովկաս,
Պուլկարիա, Եգիպտոս, Ամերիկա: Իսկ բռնակալ կա-
ռավարութիւնն անոնց տեղը հաստատեց մահմետական
մուսուլմաններ (գաղթական) և այսպէսով Հայերու թիւը
նուազեցուց հայ երկրին մէջ:

1870ին, Ռուս-թրքական պատերազմէն յետոյ՝
գումարուեցաւ Պերլինի Վեհաժողովը: Հոն մեծ պե-
տութիւնները քննութեան առին Թուրքիոյ և Ռուսիոյ
միջեւ Սան Ստէֆանօի մէջ կնքուած դաշնագիրը և
կազմեցին Պերլինի Դաշնագիրը: Այս վերջինին 61րդ
յօդուածը կը վերաբերի Հայերու. ան կը պարտաւո-

րեցնէր Թուրքիան՝ բարենորոգումներ մտցնել հայկական
գաւառներուն մէջ:

Սակայն ոչ միայն բարենորոգումներ չմտցուցին,
այլև հալածանքները և թշուառութիւնները հասան ծայ-
քայեղ չափերու, Սուլթան Համիտի օրով: Հայ ժողո-
վուրդն այլևս անկարող եղաւ տոկալ այդքան հալա-
ծանքի, և դիմեց ապստամբութեան: Տեսնելով իր
«սարուկ» Հայերու ըմբոստացումը, Համիտ դիմեց սոս-
կալի միջոցներու. կազմակերպեց ընդհանուր հայկա-
կան կոտորածներ, որպէսզի այնքան նուազեցնէ Հա-
յերու թիւը, որ այլևս չկարենան բռնութեան դէմ
բողոքել:

Սակայն համիտեան բռնութիւնները արթնցուցին
նաև Թուրք ժողովուրդի առաջադէմ մասը և 1908
յուլիս 10ին հռչակուեցաւ Օսմանեան Սահմանադրու-
թիւնը:

Թուրքիա խիստ յետամնաց է նաև կրթական տե-
սակէտով: Առաջին հայ կանոնաւոր միջնակարգ զըպ-
րոցը բացուեցաւ Կ. Պոլսոյ Սկիւտար թաղին մէջ, ձե-
ւարան Սրբոյ Երուսաղեմայ անունով՝ 1838ին: Սակայն
հազիւ 4—5 տարի կանոնաւոր կեանք ունեցաւ. շու-
տով փակուեցաւ և երբ նորէն բացին, եղաւ հատարակ
թաղային վարժարան մը: 1878էն վերջ Կ. Պոլսոյ մէջ
հիմնուեցան քանի մը ընկերութիւններ (թէ այրերու և
թէ կիներու) որոնք նպատակ դրին հայ գաւառներու
մէջ վարժարաններ բանալ: Մկրտիչ Սանասարեան հա-
րուստ Հայը հիմնեց Սանասարեան վարժարանը Կարինի
մէջ (1880), իսկ նոյն ատենները բացուեցաւ Պոլսոյ
Կեդրոնական Վարժարանը, որ մինչև այսօր կը մնայ:

Թուրքիոյ հայութեան գրականութիւնը գլխաւորա-
պէս կեդրոնացած է Կ. Պոլսոյ և Զմիւռնիոյ մէջ. գա-

ւառները զուրկ են եղած գրականութենէ: Սահմանա-
դրութեան հոչակումով միայն մամուլն սկսաւ թա-
փանցել նաև հայկական գաւառները, ու շատ տեղեր
տպարաններ բացուեցան և թերթեր կը հրատարակուին:

ԴԱՍ 53. — Ռ Ո Ւ Ս Ի Ո Յ Հ Ա Յ Ե Ր Ը

Նատիր Շահի մահէն յետոյ, Պարսկաստան ինկաւ-
ներքին խռովութիւններու մէջ: Խռովութիւններու ա-
տեն ամէնէն աւելի կը տուժէին Հայերը: Նոյն այդ ա-
տենները ռուս կառավարութիւնը մեծ սէր և հոգածու-
թիւն կը ցուցնէր դէպի այն Հայերը, որոնք կը դիմէին
իր երկիրը: Այս պատճառով Պարսկաստանէն, մանաւանդ
Նոր-Ջուղայէն, Սպահանէն և Ատրպատականէն բազ-
մաթիւ հարուստ հայ վաճառականներ և արհեստաւոր-
ներ գաղթեցին Ռուսիա: Անոնցմէ ոմանք բնակեցան
Մոսկուա և Փեթերսպուրկ մայրաքաղաքներու մէջ,
ինչպէս հարուստ Լազարեան տոհմը, իսկ շատերն ալ
մնացին հիւսիսային Կովկասի մէջ և հիմնեցին Ղզլար,
Մոզտուկ և Արմաւիր քաղաքները, չէնցուցին Աժտէր-
խանը, Ս. Խաչը և այլն: Խրիմէն ալ թուրք իշխանու-
թենէն դժգոհելով, գաղթեցին բազմաթիւ Հայեր և հիմնե-
ցին Նոր-Նախիջևան քաղաքն իր շրջապատ 5-6 հայ գիւ-
ղերով:

Այս ամէնը կատարուեցաւ Ժ.Ը. դարու մէջ, երբ
դեռ Ռուսերը չէին գրաւած ոչ մէկ հայկական գաւառ:
Գաղթական Հայերը արագօրէն զարգացան, իրենց
աշխատասիրութեան ու եռանդին շնորհիւ, ձեռք
բերին մեծ հարստութիւն: Անոնք զարգացան նաև մը-

տաւորապէս: Լազարեան մեծահարուստ տոհմը շինել
տուաւ Մոսկուայի և Փեթերսպուրկի Հայոց եկեղեցիներ-
ը, որոնք այսօր ահագին կալուածներու տէր են: Նոյն
տոհմը 1818ին հիմնեց Արեւելեան լեզուներու Լազարեան
ձեռնարանը Մոսկուայի մէջ: Նոր-Նախիջևանի մէջ բաց-
ուեցաւ հայ երկրորդական դպրոց մը, Հոգեւոր-Սեմինա-
րիոնը կամ Դպրանոց: Աժտէրխանն ունեցաւ իր Ազա-
պական երկրորդական վարժարանը, իսկ Խրիմի Թէո-
գոսիա քաղաքին մէջ 50ական թուականներուն ծաղկե-
ցաւ Խալիպեան վարժարանը:

Երբ Ռուսերը գրաւեցին Վրաստանը, Ղարաբաղը և
Շամախին, Թիֆլիսի Հայերու առաջնորդն էր Ներսէս
արքեպ. Այստարակեցին: Այս տաղանդաւոր հոգեւորա-
կանը հասկցաւ Թիֆլիսի կատարելիք ապագայ դերը և
հոն հիմնեց իր անունով երկրորդական վարժարան մը,
1826ին: Ներսիսեան վարժարանը խիստ մեծ դեր է կա-
տարած ոչ միայն Ռուսահայերու, այլ մասամբ և Պարս-
կաստանի և Թուրքիոյ Հայերու կեանքին մէջ: Այս օր-
ուայ Կովկասեան հայ հոգեւորականներու, գրողներու և
գործիչներու մէկ ստուար մասը անոր սաներէն են:

1838ին հիմնուեցաւ Շուշիի թեմական դպրոցը, իսկ
անկէ 15-20 տարի ետք՝ Երեւանինը: Վերջապէս 1874ին
Գէորգ Դ. կաթողիկոսը հիմնեց Էջմիածնի ձեմարանը:

Այրերու կրթութեան հետ զուգահեռաբար սկսաւ
ծաղկիլ և աղջիկներու կրթական գործը: Սակայն այս
ճիւղին մէջ առաջ գնաց միայն Թիֆլիսը, ուր այսօր կան
երկու երկրորդական վարժարաններ աղջիկներու համար,
Զովեանեան և Գայիանեան անունով: Ասոնցմէ է եղած
Կովկասեան հայ վարժուհիներու մէկ կարեւոր մասը:

Կովկասեան հայութեան մտաւոր զարգացման այս
արագ ընթացքը, սակայն, խանգարուեցաւ 1884ին: Ռուս

կառավարութիւնը գոցեց հայ եկեղեցական - ծխական դպրոցները: Անոնք վերաբացուեցան 1886ին, չափաւոր ու կրճատուած ծրագրով, բայց նորէն գոցուեցան իշխան Կօլիցինի հայահալած վարչութեան օրով: Այդ իշխանը 1903ին գլխակի նախ հայ դպրոցներու և եկեղեցիներու կալուածները, մինչև որ վրայ հասան 1905ի ռուսական յիշատակութեան չարժուճները, երբ թէ՛ խրուած հայ ազգային կալուածները ետ առնուեցան և թէ՛ գոցուած դպրոցները վերաբացուեցան:

Բացի հայ ազգային դպրոցներէն, Ռուսիոյ հայութիւնը մեծապէս օգտուեցաւ և այսօր ալ կ'օգտուի ռուսական անհամար տարրական, երկրորդական և բարձրագոյն դպրոցներէն: Ընդհանրապէս, ռուս դպրոցները կը ծառայեն նաև իրր ռուսացման միջոց. սակայն իր երկրին վրայ ապրող Հայը այնչափ ալ արագ չի օտարանար:

Ռուսական հարուստ ինքնուրոյն և մանաւանդ թարգմանական գրականութիւնը մեծապէս կը նպաստէ կովկասեան Հայերու առաջդիմութեան գործին:

Ռուսիա երբ գրաւեց հայկական բարերը նահանգներու մէկ մասը, իսկոյն հոն չինեց բազմաթիւ յարմար խճուղիներ, վերջերս ալ երկաթուղիներ. ապահովեց ճամբաներու երթիւնքը, ոչնչացուց աւազակութիւնը և այլն: Այս խաղաղութենէն ամէնէն աւելի օգտուեցան Հայերը. անոնք իրենց ձեռքն առին երկրի առեւտուրը և արդիւնաբերութիւնը. երեւան եկան հայ գործարանատէրեր ու կալուածատէրեր, որոնց դիմաց կազմակերպուեցաւ հայ բանուորութիւն մը և աշխատաւոր դիւղացի դաս մը:

Հայը ռուսական խաղաղ տիրապետութեան օրով զարգացան թէ՛ տնտեսապէս և թէ՛ մտաւորապէս: Պարսիկներու և Օսմանցիներու դարաւոր պատերազմներէն

ամառացած ու մարդազուրկ Արարատեան հրաշագեղ դաշար յեցուեցաւ Հայերով ու շէնցաւ: Այսօր միայն Երևանի նահանգին մէջ 600,000 Հայ կայ, իսկ Ռուսիոյ հայութիւնը $1\frac{1}{2}$ միլիոնի կը հասնի:

Ռուսիա, գրաւելով հայ երկրի մէկ մասը, մանաւանդ Էջմիածինը, ուր կը նստի հայ եկեղեցիի գերագոյն պետը, — որոշ օրէնքներ ու կարգեր սահմանեց, Հայերու կրօնական և ազգային-դպրոցական, բարեգործական և այլ գործերը վարելու համար (1836): Այդ օրէնքները կը կազմեն փոքրիկ ժողովածու մը, որ կը կոչուի Պօթոմէրիս:

Պօթոմէրիսի համեմատ, Հայոց եկեղեցիին պետն է կաթողիկոսը. կրօնական և դատական բոլոր խնդիրները անոր իրաւասութեան տակ են. ան կը հսկէ Հայոց եկեղեցիի հաւատալիքներու մաքրութեան և ծէսերու անթերի գործադրութեան վրայ: Կաթողիկոսը կ'ընտրուի ամբողջ հայ ազգին կողմէ՝ զրկուած պատգամաւորներով: Պատգամաւոր կ'ըլլան հոգեւորականներ, — թեմերու առաջնորդներ, և աշխարհականներ, որ կ'ընտրուին թեմի ժողովուրդին կողմէ: Աշխարհի ամէն կողմ ցրուած հայ ազգութեան պատգամաւորները կը հաւաքուին Էջմիածնի Մայր-Տաճարին մէջ և նախ կը կազմեն արժանաւորագոյն եկեղեցականներէ քառանուն ցանկ մը. յետոյ այդ ցանկէն կ'ընտրեն երկու կաթողիկոսացուներ և կը ներկայացնեն Ռուսիոյ Զարին. ան ալ կը հաստատէ երկուքէն մէկը, իր յարմար տեսածը:

Կաթողիկոսը մինակը չի վարեր բոլոր կրօնական և ուրիշ ազգային գործերը. անոր քով կայ ութ հոգեւորականներէ բաղկացած ատեան մը, որ կը կոչուի Սինոդ: Կաթողիկոսը սինոդին ատենապետն է: Սինոդի անդամութեան համար կաթողիկոսը կ'ընտրէ երկ-երկու հոգեւոր

անձեր և կը ներկայացնէ կայսերական հաստատութեան . կայսրը կը հաստատէ այդ երկուքէն ո՛րը որ ուզէ : Սակայն կայսրը կրնայ նաև չհաստատել և ոչ մէկը , և հրամայել որ նոր մարդ առաջարկեն : Սինոդի պարտականութիւնն է 1. Հսկել հայ վանքերու , եկեղեցիներու , դպրոցներու և ուրիշ ազգային հաստատութիւններու և կամուսներուն և բարեկարգութեան վրայ . 2. Թոյլտուութիւն ընել աշխարհականներուն՝ ըլլալ հոգեւորական և անարժան հոգեւորականները արձակել իրենց կոչումէն . 3. Լուծել ամուսնական խնդիրներ (հաս և չհաս , ամուսնալուծութիւն և այլն) . 4. Հոգ տանիլ հոգեւորականներու որրերուն և այրիներուն . 5. Պահել հայ հոգեւորականներու և հայ ծուխի մարդահամարը (ծնածը , մեռածը և այլն) և ամէն տարի այդ մասին հաշիւ առնել ներքին գործերու նախարարին . 6. Քննել թեմակալ առաջնորդներու և սինոդի անդամներու դէմ եղած գանգաւանքներ և ի հարկին պատժել , անշուշտ նախապէս ստանալով կառավարութեան թոյլտուութիւնը :

Սինոդին մէջ կայ պետական պաշտօնեայ մը , որ կը կոչուի պրօկուրօր (դատախազ) : Այդ պաշտօնեան կը հսկէ որ Սինոդը ճշտութեամբ գործադրէ իրեն համար սահմանուած պետական օրէնքը :

Ռուսիոյ Հայերը ունին վեց թեմ : Ամէն մէկ թեմ ունի իր առաջնորդը : Առաջնորդութեան համար կաթողիկոսը կ'ընտրէ երկու թիկնածու և կը ներկայացնէ կայսերական հաստատութեան . կայսրն ալ կը հաստատէ իր յարմար դատածը :

Թեմակալ առաջնորդին քով կայ հոգեւոր ատեան մը , որ կը կոչուի Կոնսիսօրիալ : Ասոր ատենապետը առաջնորդն է : Առաջնորդ և կոնսիստորիալ միասին կը վարեն թեմին գործերը :

Ռուսահայ թեմերը չափ մեծ ըլլալով , կը բաժնուին Վիճակներու : Վիճակն ունի իր յաջորդը (առհասարակ վարդապետ մը) և իր հոգեւոր ատեանը : Վիճակն ալ իր կարգին կը բաժնուի գործակաշուքիւններու , որոնց գլուխը կանգնած կ'ըլլան գործակալ քահանաներ կամ վարդապետներ :

Գործակալը կ'ենթարկուի վիճակաւոր յաջորդին և անոր հոգեւոր ատեանին . ասոնք ալ կ'ենթարկուին առաջնորդին ու կոնսիստորիային , իսկ վերջինները՝ կաթողիկոսին և սինոդին :

ԴԱՍ 54. — ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Լաւ վիճակ մը չեն ունեցած Պարսկաստանի Հայերը : Պարսկական բռնութիւններէն և կրօնական հալածանքներէն նեղուած , Հայերը չարունակ կը գաղթէին անկէ և լեցուեցան Ռուսիա : Մինչև ԺԹ . դարու սկիզբը բոլոր գաղթածները անգաւորուած էին Ռուսիոյ ոչ-հայկական գաւառներու մէջ . իսկ երբ Ռուսիա գրաւեց Հայաստանի մէկ մասը , Պարսկաստանէն Հայերը լեցուեցան Ռուսիոյ հայկական գաւառները և չէնցուցին զանոնք :

Այսօր ամբողջ Պարսկաստանի մէջ հազիւ 60-70000 Հայ կայ : Անոնք կը բնակին Ատրպատականի (Թաւրիզ , Սալմաստ , Խոյ) , Թէհրան մայրաքաղաքի և Նոր-Ջուղայի կողմերը :

Թէ նիւթապէս և թէ մանաւանդ մտաւորապէս Պարսկահայերը խիստ ետ են մնացած : Պարսիկները չունին ոչ մէկ կանոնաւոր դպրոց , ոչ միայն բարձրագոյն կամ երկրորդական , այլ նոյն իսկ տարրական : Անոնց

միջոցները հին խայրֆայական ձեռով են. միջոցներու վրայ նստած, մոլլայի մը ղեկավարութեամբ քիչ մը կրօնական գրքեր կարդայ կը սորվին, քիչ մըն ալ գրել: Այս է ամբողջ գիտութիւնը:

Հայերը չէին կրնար ուրեմն՝ օգտուիլ կառավարական դպրոցներէ. ստիպուած իրենք սկսան դպրոցներ բանալ թաւրիզ և թէհրան (երկրորդական դպրոց, գաւառական իտալիի ծրագրով), իսկ յետոյ ալ Սալմաստ և Նոր-Ջուղա (տարրական դպրոցներ), որոնց մէջ ուսուցչի պաշտօն կը վարէին միծամանաբար կովկասէն կամ Թուրքիայէն գացած հայ ուսուցիչներ:

Պարսկաստանն ալ զորիկ ըլլալով հազորդակցութեան ճամբաներէ, առևտուր և արհեստ շատ ետ են մնացած և Հայերն ալ նիւթապէս խեղճ վիճակի մէջ են: Անոնցմէ շատեր կ'երթան կովկաս գործ գտնելու, որպէս զի գէթ կառավարութեան և կալուածատէրերու հարկերը վճարելու դրամ վաստկին:

Պարսկահայերը կը բաժնուին երկու թեմի — Ատրոպատականի և Սպահան-Հնդկաստանի թեմերու: Առաջնորդներ կը նշանակէ էջմիածնի կաթողիկոսը:

Վ Ե Ր Ձ



ՆԻՒԹԵՐՈՒ 8ԱՆԿԸ

Նախաբան.	Էջ
1. Հայ և Հայաստան	9
2. Հայկ նահապետ	11
3. Արամ նահապետ	14
4. Արա Գեղեցիկ	17
5. Շամիրամ և Արաի յաջորդները.	19
6. Պարոյր Թագաւոր	21
7. Տիգրան Առաջին.	22
8. Վահագն և Հին Հայերու կրօնը.	26
9. Վաղարշակ Արշակունի	29
10. Արտաշէս Աշխարհակալ	31
11. Տիգրան Բ. Մեծ	33
12. Տիգրան Մեծ և Արտաւազդ.	36
13. Սեգար և Քրիստոնէութիւնը	38
14. Անանուհ և Սանատրուկ	39
15. Երուանդ Բ.	41
16. Արտաշէս Բ.	42
17. Արտաւազդ Բ.	46
18. Վաղարշ և Խոսրով Ա.	47
19. Տրդատ Մեծ	49
20. Տրդատ և Լուսաւորիչ.	52
21. Տրդատի յաջորդները.	55
22. Արշակ Բ. և Մեծն Ներսէս.	56
23. Մերուժան, Ներսէս Մեծ և Պապ.	60
24. Վերջին Արշակունիները	63
25. Հին Հայերու ներքին կեանքը	67
26. Վարդանանց պատերազմ	71
27. Վարդանանց պատերազմէն յետոյ	75
28. Երկրորդ կրօնական պատերազմը	76
29. Մարզպաններ, Գալլ Վահան և Սմբատ, Կիւրապաղատներ	79
30. Հայաստան Արաքներու օրով	83
31. Աշոտ Ա.	86
32. Աշոտ Ա.ի յաջորդները	90
33. Անի քաղաքը	94

34. Յովհաննէս Սմբատ. — Սելճուքեան արշաւանքը. — Արծրունիներու թագաւորութեան վախճանը. — Անիի վաճառումը.	97
35. Նախարարական երկու կուսակցութիւնները. — Գագիկ Բ. — Ննի Յոյնքուն կը տրուի.	101
36. Սելճուքներու տիրապետութիւնը. — Հայ էշխանութիւններու վախճանը.	104
37. Հայերու գաղթը, Ռուբինեան էշխանութեան ծագումը.	107
38. Կոստանդինի յաջորդները. — Լեւոն Բ.	109
39. Զապէլ, Հեթում Ա. և Լեւոն Գ.	112
40. Հեթում Բ. և իր եղբայրները. — Լեւոն Գ.	116
41. Օշին և Լեւոն Ե.	119
42. Լուսինեան թագաւորներ.	122
43. Հայաստանը քաղաքական կեանքի անկումէն մինչեւ թաթարներու արշաւանքը.	125
44. Թաթարներու արշաւանքը.	127
45. Օսմանցիներ.	131
46. Լէնկթիմուրի արշաւանքները.	133
47. Հայաստանի վիճակը Լէնկթիմուրի արշաւանքներէն յետոյ.	136
48. Հայ Գաղթականութիւնները. — Շահ Աբբաս.	138
49. Ղարաբաղի Մելիքները.	142
50. Դաւիթ Բէկ.	146
51. Ռուսիոյ նուաճումները.	149
52. Թուրքիոյ Հայերը.	153
53. Ռուսիոյ Հայերը.	160
54. Պարսկաստանի Հայերը.	165

<< Ազգային գրադարան



NL0393297

ՄԵՐ ԴՊՐՈՅԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՅԵՐԷՆ. Լ. ԵԶՈՒ

ՂՐԶ.

1. **ԼՈՒՍԱԲԵՐ ԱՅԲԵՆԱՐԱՆ**, (Հեղինակներ՝ Սս. Լիսիցեան, Յովն. Թումանեան և Լեւոն Շանթ), 64 էրես, 80 պատկեր և բազմաթիւ ձեռագիրներ 2,50
2. **ԼՈՒՍԱԲԵՐ, ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Ա. ՏԱՐԻ**, 80 էրես պատկերազարդ Գ. 4
3. **ԼՈՒՍԱԲԵՐ, ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Բ. ՏԱՐԻ**, 112 էրես պատկերազարդ 5
4. **ԼՈՒՍԱԲԵՐ, ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Գ. ՏԱՐԻ**, 144 էրես 6
5. **ԼՈՒՍԱԲԵՐ ԳՐԱԽՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ Ա. ՏԱՐԻ**, 48 էրես, չարագրական պատկերներով . 2
6. **ԼՈՒՍԱԲԵՐ, ԳՐ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ, Բ. ՏԱՐԻ**, 48 էրես չարագրական պատկերներով 2
7. **ԼՈՒՍԱԲԵՐԻ ՈՒՂԵՅՈՅՑԸ**, գրել-կարգալ սորվեցնելու եղանակը 10
8. **ՄԵՂՐԱԳԵՏ, Ժողովածու սողի հայ եւ օսար գրականութեան. բարձրագոյն կարգերու համար**: Ռուբեն Զարգարեանի, բազմաթիւ պատկերներով. 502 էրես. 12,50
9. **ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ (հէքեաթներ մանուկներու համար)**. Մարգարէտ. պատկերազարդեց Տ. Յապեան. 3,50
10. **ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, Վերջապահ փափագեանի**

ՊԵՆՏԱՐՈՒԹԻՒՆ

11. **ՀԱՅԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, Ա. ՏԱՐԻ, Գ. ԽԱԺԱԿԻ**. 5
12. **ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, Հին ԱՐԵՒԵԼԻՔ, Գ. ԽԱԺԱԿԻ**. 10

Փախափողներուն կը որկուռի մեր գրացանկը